ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 5

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

ՀԵՂՆԱՐ ԱՂԲԻՒՐ

1948
ՏՊԱՐԱՆ «ՆՈՒՊԱՐ»
ԳԱՀԻՐԷ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 5

493

891.99

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

A II / 33506

ՀԵՂՆԱՐ ԱՂԲԻՒՐ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ

1948
ՏՊԱՐԱՆ «ՆՈՒԳԱՐ»
ԳԱՀԻՐԷ

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

«Հեղնար Աղբիւր»ի հեղինակը ծնած է 1906-ին Լենինականի մէջ (Ալեքսանդրապոլ)։ Հայրը վաճառորդ էր կերպասեղէնի վաճառատան մը մէջ. մայրը՝ կարուհի։

Մկրտիչ Արմէն իր նախնական ու միջնակարգ ուսումը ստացած է ծննդավայրին մէջ։ 1930—1931 թուին հետեւած է Մոսկուայի արուեստագիտական դպրոցին, ապա շարժապատկերի գիտական հաստատութեան դասընթացքներուն։

Գրել սկսած է շատ կանուխ։ 1923-ին Լենինականի «Բանուոր» թերթին մէջ լոյս տեսաւ իր առաջին բանաստեղծութիւնը՝ «Անդրկովկաս» խորագրով։ Մշակած է առանձնապէս վիպական սեռը։ Իր գլխաւոր գործերն են «Երեւան», «Առաջին պատկոմներ», «Սկաուտ No. 89», «Պատմուածքներ», «Գագաթների երգը» եւ վերջապէս «Հեղնար աղբիւր», որ իր վերջին գործն է (1935)։ Իրմէ ծանուցուած էին վիպակներու եւ պատմուածքներու երկու ժողովածուներ՝ «Երեք սիրավէպ» ու «Ոգի եւ քար», ինչպէս նաեւ պատմական վէպ մը՝ «Փշրուած դարբասներ» խորագրով։ Այս գործերը լոյս չեն տեսած։

Սուրխաթեան 1928-ին կը գրէր Մկրտիչ Արմէնի համար. «... Եթէ նա ունենայ զարգանալու եւ ինքնակրթութեամբ զբաղուելու պայմաններ՝ իր պատրաստութեան մակարդակը եւ արտադրանքի որակը բարձրացնելու համար, կասկած չկայ, որ գրական ասպարիզում շատ շատերից առաջ կ'անցնի»։

Տաղանդաւոր տղան թերեւս ժամանակ չունեցաւ բարձրացնելու ո՛չ իր «պատրաստութեան մակարդակը» ո՛չ ալ «արտադրանքի որակը», բայց անկասկած «շատ շատերից» առաջ անցաւ։

«Հեղնար աղբիւր»ը արեւելահայ վէպի գագաթներէն է։ Զայն հրատարակողը ուրիշ նպատակ չունի, բայց եթէ հայկական Սփիւռքին ծանօթացնել եւ սիրցնել Հայաստանի գրականութիւնը։

10 Նոյեմբեր 1947 ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ
Գահիրէ



ՆԱԽԱԲԱՆ

I

Լենինականի հին թաղերից մէկում,— Ջրի Բողազում,— որն ամենայն իրաւամբ դեռ կարող է կրել Գիւմրի անունը, իր փոքրիկ տան մէջ մեռնում էր աղբիւրների հռչակաւոր վարպետ ուստա Մկրտիչը։

Թէև նա արդէն վաթսունհինգ տարեկան էր, բայց ծերութիւնը չէր նրա մեռնելու պատճառը, որովհետև նա դեռ ամբողջ էր և առողջ։ Այնքան ամբողջ էր նա և այնքան առողջ, որ թւում էր, թէ ահա վեր կը կենայ, կը հագնի իր ուստադական արխալուղը, կը դնի իր ուստայական չուխան և մի անգամ շփելով իր պայծառ ճակատը՝ դուռը բաց կ՚անի և նորից դուրս կը գնայ դէպի աշխարհ...

Սակայն նա պառկել էր և մեռնում էր մահուան դատապարտուածի անխուսափելի և անյետաձգելի մահով։ Նա մեռնում էր, որովհետև հասել էր իր նպատակին, որովհետև վերջացրել էր իր հաշիւները աշխարհի հետ։ Նա դրսում այլևս ոչինչ չունէր անելու։

Իր վարպետութեան ողջ քառասուն տարիների ընթացքում նա ճիշդ այդպէս էլ համոզուած էր, որ երբ աւարտի իր քառասուներորդ աղբիւրը՝ պիտի մեռնի։ Նա դիտմամբ էր նպատակ դրել այդպիսի մեծ թիւ, որպէս զի հնարաւորին չափ հեռու հրէր իւրաքանչիւր կեանքի վերջում կանգնած մթին ստուերը,— մահը... Երբ նա դեռ քսանվեց տարեկան էր և աւարտեց առաջին աղբիւրը, քառասունը նրան թուաց այնքա՜ն շատ և այն իրականացնելու վերջին կէտն այնքա՛ն հեռու... Կառուցելով ևս չորս աղբիւր, նրան նոյնիսկ թուաց, որ ինքը երբեք էլ չի հասնի վերջինին, որ իր նպատակը կը մնայ կիսակատար։ Եւ նա սկսեց զղջալ, որ իր վարպետութեան շեմքի վրայ երդուել էր քառասուն աղբիւր կառուցել և ոչ թէ եօթ կամ տասներկու...

Սակայն տարիներն ու աղբիւրներն աննկատելի կերպով շարուեցին և նա մի օր մեծ զարմանքով նկատեց, որ արդէն կառուցել է քսաներորդ աղբիւրը, ուրեմն և արդէն կիսով չափ կատարել է իր նպատակը։

Երեսունչորսերորդի վրայ հիւանդացաւ և յոյսը կորեց։ Կարծում էր, թէ դա վերջինը կը լինի։ Բայց յետոյ առողջացաւ։ Իսկ երբ առողջացաւ՝ ամենայն պայծառութեամբ գիտակցեց, որ այժմ արդէն կառուցելու քիչ բան էր մնացել և որ այլեւս շտապելու ոչ մի կարիք չկար։

Եւ նա փորձեց չշտապել։ Փորձեց, բայց ոչինչ դուրս չեկաւ։ Երեսունչորս աղբիւրի վրայ նա միակերպ արագութեամբ էր շարժել իր ուղեղն ու ձեռքերը, և այժմ անհնար էր շարժման արագութիւնը փոխել։ Ինչպէս անցեալում, այնպէս էլ ապագայում, նա պէտք է տարեկան մի աղբիւր կանգնեցը-

նէր՝ իբրեւ դէպի մահ տանող իր ճանապարհի ուղենիշ... Երբ այդ գիտակցեց՝ նա ընկաւ ֆատալիզմի մէջ։ Տեսաւ ու զգաց, որ ինքն անկարող էր փոխել իր մահուան ժամկէտը, — մի ժամկէտ, որը սակայն ինքն էր սահմանել իր համար...

Եւ նա շարունակեց կառուցել ու ափսոսալ, որ իր կեանքի երիտասարդ տարիներին նպատակ էր դրել քառասուն աղբիւր և ոչ թէ եօթանասունեօթ կամ հարիւր ու մէկ։ Այժմ նա համոզուած էր, որ եթէ մինչեւ իսկ եռապատկէր աղբիւրների թիւը, դարձեալ կը լրացնէր այն։ Եւ նոյն ներշնչումը, որն իրեն գերեզման է տանում գործն աւարտելուց յետոյ, կը պահպանէր իրեն։ Բայց այժմ այդ միտքն այլեւս ի զուր էր և միայն մի բան էր մնում ուստա Մկրտիչին. — մեռնել։ Ու նա մեռնում էր դանդաղ, տխուր և խորիմաստ մի մահով։

Այդ մահն սկսուեց վերջին աղբիւրը կառուցելուց անմիջապէս յետոյ։ Երբ այն լիովին աւարտուեց, ուստա Մկրտիչը յանկարծ զգաց, թէ ինչպէս պաղեց արիւնն իր երակներում և այնտեղ, իր ներսում, կոտրուեց մի բան, — երեւի կեանքի զսպանակը։ Նա ելաւ տուն, հանուեց, պառկեց, որպէս զի այլեւս երբեք վեր չկենայ...

∴

Լենինականի հին թաղերից մէկում, — Ձորի Բողազում, — որն ամենայն իրաւամբ դեռ կարող է կրել Գիւմրի անունը, իր փոքրիկ տան մէջ մեռնում էր աղբիւրների հռչակաւոր վարպետ ուստա Մկրտիչը։

Տանը գտնւում էին միայն ինքն ու իր հարսը։

Հարմն էր, որ բարձը դրել էր ուստայի մեջքի յետե-
ւը, և այժմ ուստան, յենուած այդ բարձին, լուսա-
մուտից նայում էր դուրս՝ դէպի աշխարհը, որից
ինքը շուտով պիտի հեռանար։ Իր տունը շինուած
էր այդ ոչ խորը ձորակի մի լանջին, և այժմ լու-
սամուտից երևում էին տան առջևի փոքրիկ հրա-
պարակը և երկարահասակ բարդիները նրա առջև-
ւամասում, այնուհետև երևում էին ցածրում գըտ-
նուող երկու ուրիշ տների տափակ կտուրները՝ ջըր-
յորդաններով և երևում էին նրանց դռների առջե-
ւում տնկուած բարդիների տերևոտ գագաթները,
որ խոյացել էին կտուրներից բարձր և ստուերի պա-
տառներ էին գցել կտուրների վրայ։ Այդ երկու տը-
ների արանքից երևում էր ձորակի տափակ ու լայն
յատակի մի ընդարձակ պատառ՝ այնտեղով հոսող
սակաւաջուր առուակով։ Երևում էր մի կին, որ
ջրի վրայ կռացած՝ կարպետ էր լուանում։ Երևում
էին նրա սպիտակ, լիքը ոտները և նոյնիսկ ծնկա-
ծալերի երկարաւուն զոյգ փոսիկները։ Ուստա Մկըր-
տիչը նայում էր դրանց և նրա սիրտը լցւում էր
անվերադարձ մի կարօտով։ Այդ առոյգ ու գեղեցիկ
ոտները հենց ինքը կեանքն էր, որ այլևս չէր վե-
րաբերում իրեն։ Անկիրք մի յուզում լցուել էր նրա
սիրտը, և նա ուզում էր մեռնել իր վերջին հայ-
եացքը դրանց ջերմ սպիտակութեանը յառած։ Բայց
ահա և մի ձի, որ արածելով կարճ խոտը, մտնում
էր իր տեսողութեան շրջանակի մէջ։ Ձիու իւրա-
քանչիւր շարժումից խլրտում էին մկանները նրա
կրծքի և գաւակի վրայ։ Ի՛նչ ձիգ, կլոր ու փայլուն
մկաններ, ի՛նչ առողջ ձի։ Ահա փայլատակեցին նրա
սպիտակ ատամները։ Ահա նա թափահարեց գլուխը
վեր ու վար և նրա բաշը ցնցուեց։ Ի՛նչ գեղեցիկ

բաչ։ Ոչ։ Ո՛չ թէ կնոջ տներին, այլ այդ ձիւ-մկաններին պէտք է յառել հայեացքը մեռնելուց ա-ռաջ։

Դիմացի լանջի վրայ նոյնպէս տներ են։ Վե-րեւում նրանք ձգւում են երեք երկար փողոցներով, իսկ ներքեւում կանգնած են առանձին-առանձին, եւ նրանցից իւրաքանչիւրի առջեւ ուստա Մկրտչի տան նման՝ կայ մի փոքրիկ հրապարակ, — մէկական ան-պատ, բաց հայաթներ։ Այդ բաց հայաթների առջե-ւամասերում նոյնպէս կանգնած են բարձր, ոսկե-գագաթ բարդիներ։ Այդ բաց հայաթներից իւրա-քանչիւրում նոյնպէս մի ծայրում ջրհորն է, միւ-սում՝ հաւաբունը, իսկ երկար չղթայով մի ծառից կապուած՝ նիրհում է հաւատարիմ, սպիտակ գամփ-ռը։ Նայում է ուստա Մկրտիչը մորմոք կարօտով այդ աշխարհին։ Ահա եւ մի աղբիւր, — իր կառու-ցած առաջին աղբիւրը։ Նա կանգնել է մի հովասուն ուռենու տակ, այն ճանապարհի եզրին, որը ձորի ներքեւից, հենց առուակի մօտից, դիք բարձրանում է դէպի փողոցները։ Մի մեծ խորանարդ քար կազ-մում է աղբիւրի գլուխը եւ խողովակը դուրս է գա-լիս նրա միջից։ Կարճ, լայն, փայլուն խողովակ, որից ահա քառասուն տարի է, որ յորդ հոսում է ամենավճիտ ջուրը եւ թափւում իր առջեւի գուռի մէջ։ Գլխաքարը՝ մարդկանց ձեռների չփումից, եւ գուռը՝ ջրի հպումից յղկուել են եւ փայլում են ձիւ-թածի պէս։ Գլխաքարը կարմրաւուն լեռ քար է եւ թւում է, թէ գիւղացիների ձեռների ջերմութիւ-նից է նա կարմրել, իսկ գուռը կապտաւուն լեռ քար է եւ թւում է թէ ջրի սառնութիւնից է նա կապ-տել... Ուստա Մկրտիչը չի կարող ասել, թէ ի՛նչն է տեսնում եւ ի՛նչն է յիշում, բայց ահա այդ ամէնն

իր աչքի առջևն է՝ վառ ու կենդանի...

Դիմացի լանջի վերևում, փողոցներից մեկում, փոշի բարձրացաւ։ Բարձրացաւ փոշին և արագ առաջանում է դէպի այն կողմ, ուր ձորի ծայրը հեռըվ-հեռւէ ցածրանում է, անհետանում, աննկատելի կերպով ձուլուելով քաղաքի փողոցներին։ Ի՞նչ փոշի է դա, երբ քամի չկայ և հանդարտ են բարդիների գագաթները։ Այդ ի հարկէ աւտօ է անցնում այնտեղով։ Եւ իրօք, ահա երևաց նա, ահա լսուեց նրա հնդիւնը, որ նախազգուշացնում է փողոցի մէջտեղում խաղ անող երեխաներին.— հեռո՛ւ... կ'ընկնէք աւտոյի տակ... կը մեռնէք... կորչի մա՜ը... հեռո՛ւ...

∴

Լենինականի հին թաղերից մեկում,— Ձորի Բաղաղում,— որն ամենայն իրաւամբ դեռ կարող է կրել Գիւմրի անունը, իր փոքրիկ տան մէջ մեռնում էր աղբիւրների հռչակաւոր վարպետ ուստա Մկրտիչը։

Նա դեռ անթարթ նայում էր լուսամուտից դուրս և նրա աչքերի առջեւ դեռ աշխարհն էր, երբ դրսում,— իր տան միջանցքում,— լսուեցին խօսակցութեան շտապ ձայներ և անմիջապէս դրանից յետոյ սենեակ լցուեցին իր հին ընկերները։

— Մկրտի՞չ...

Ուստա Մկրտիչը նայեց նրանց։

— Ա՛յ մարդ, էս ի՞նչ կ'էնես։ Ընչի՞ ես պառկէ...

— Վերջի պառկն է, ներող եղէք,— ասաց ուստան և աւելացրեց.— նստէք։ Հա՛րս ջան, աթոռք տուր։

Հարսն աթոռները մօտեցրեց անկողնին և ինքը նորից դուրս գնաց։ Ըստ երևոյթին նա միջանց-

քում կամ միւս սենեակում աշխատում էր։

— Դուն իմ քովս նստի, հաջի՛,— դիմեց ուստան մէկին, որ պատրաստւում էր նոյնպէս նստել աթոռի վրայ։— Դուն մեր բոլորի ագիզ ախպէրն ես...

Տիրեց յանկարծակի լռութիւն։ Բոլորը հասկացան, որ իրօք ուստան մեռնում է, եթէ ներեց այդ մարդուն և հրաւիրեց իր անկողնու վրայ։ Եւ երբ հաջին նստեց, ուստան դիմելով բոլորին՝ աւելացրեց.

— Էդ մասին էլ հէչ խօսք չեղնի... է՜, ի՞նչըղ է ձեր քէֆը, ախպէր տղէք...

— Մեր քէֆն ի՞նչ, դուն քուկդ ըսա,— պատասխանեց Սւետիքը, որի կեանքն անցել էր կամուրջներ կառուցելով։— Ըսել է պառկար, էլի, Մկրտի՛չ ախպէր... է՜, մենք էլ ահան կը լսենք ուղտի նռռոցը։ Կու գայ, որ էգուան էլ մեր դրանը չոքի...

— Պառկայ... Նպատակս կատարուած է... Մնալըն աւելնորդ է...

Ուստան վերմակի տակից հանեց սպիտակած ձեռքը, որ նկատելիօրէն դողդողում էր, և շարունակեց.

— Ես հըլը ջահել վախտս երդմունք էի կերէ, որ քառսուն ախպուր պիտի շինեմ։ Սեդրակը տեղակ էր,— լուս իջնի էնոր գերեզմընին։ Գէորն էլ էր տեղակ,— Աստած ողորմի ագիզ Գէորիս հոգուն։ Մխակն էլ գիտէր, Ֆանձոց Մխակը։ Սիմաւոնին էլ էի ըսէ...

Յանկարծ ուստան յենուեց մի թեւի վրայ ու վեր բարձրացաւ։

— Ի՞նչ բան է։ Հէ՞չ մէկը չէ մնացէ։ Բոլորն էլ մեռա՞ն...

— Ես էլ եմ տեղակ.— շշնջեց մէկը։

Ուստան հանդարտացած իջաւ դէպի բարձը։

— Դուն էլ ես տեղակ, Աւետիք։ Ճշմարիտ է․․

Նա լռեց մի քիչ, ապա աւելացրեց․

— Ու էսպէսով իմ ախպուրս էլ ցամքաւ․․․

Սարգիսը ծանր հառաչեց ու խօսեց․

— Աշխըրքի օրէնքն էդպէս է, Մկրտի՛չ։ Բոլորինն էլ մէ օրըմ պիտի ցամքի։ Հըմը մարդ կայ, որ իրան ետեւէն յիշատակ ունի, մարդ կայ՝ որ չունի։ Քու ախպուրդ ցամքաւ, հըմը քառսուն հատ կայ քու տեղակդ։ Էնոնք քեզի կ՚օրհնեն քառսուն բերնով։ Ջրէդ խմող ամմէն մարդ քեզի պիտի յիշէ հուր աւխտեան․․․

Սակայն ուստա Մկրտիչն այլեւս չէր լսում նրանց։ Անշարժ, հայեացքը մի կէտի յառած և ուշադրութեամբ ուրիշ տեղ վերացած՝ նա կրկնեց ինքն իրեն․

— Իմ ախպուրս էլ ցամքաւ Հեղնար-ախպուրի պէս․․․․

Բոլորը քար կտրուեցին։ Տիրեց յանկարծահաս, բացարձակ լռութիւն։ Լսելով Հեղնար-աղբիւրի անունը, նրանք զարմացան, թէ այդ ի՞նչպէս էր պատահել, որ բոլորովին մոռացել էին այդ։ Հեղնար-աղբի՜ւրը․․․ Նա չէր մտնում ուստայի կառուցած քառասուն աղբիւրների շարքը և չէր էլ կարող մտնել, — ա՛յնքան արտասովոր, ա՛յնքան զարմանալի և այնքան անհասկնալի էր նա․․․ Ճիշդ է, առօրեայ գործերն ու հոգսերը վանել էին այդ մարդկանց ուղեղներից բոլոր հին յուշերը, բայց և այնպէս զարմանալի էր, որ նրանք մոռացել էին նոյնիսկ այդ, որը թւում էր, թէ անհնար էր մոռանալ։ Գուցէ պատճառն ա՞յն էր, որ Հեղնար-աղբիւրն այլեւս համարեա թէ գոյութիւն չունէր աշխարհի վրայ։ Յամենայն դէպս նրա հրաշքը, որ տեղի էր ունեցել

քանի տարի առաջ, վերացել էր հենց նոյն օրը և այնուհետև էլ երբեք չէր կրկնուել։

— Հեղնար-ախպուրը — շշնջաց Աւետիքը, — հաստատ որ, ախպէրտինք, Հեղնար-ախպուրը...

Նրա պատկերը բոլորի ուղեղներում յանկարծ վերակենդանացաւ պայծառ ու որոշակի և նրանք բոլորը զարմացան։ Եւ դուցէ զարմացան աւելի շատ, քան այն օրը երբ հրաշքը տեսնում էին իրենց աչքերի առաջ... Այն ժամանակ մարդիկ հաւատում էին գերբնական երևոյթների, և հրաշքի յայտնուելը բնական էին համարում։ Իսկ այժմ դա թւում էր այնքան անհաւանական...

Աղասին վեր կացաւ աթոռից և նստեց մահճակալի վրայ, հաջու մօտ։

— Մկրտիչ ախպէր, — ասաց նա, — մենք ամմէնքս էլ քու ախպէր տղէքն ենք, ու օտար մարդ չկայ էստեղ։ Իսկ դուն, վո՞վ գիտէ, դուցցէ թէ խակապէս պիտի նստես դրանդ չոքած ուղտի վրայ ու երթաս խառնուես յաւիտենական քարուաններին։ Ըսա՛ մեզի, Մկրտի՛չ ախպէր, գոնէ հիմի ըսա, թէ էդ ի՞նչըղ եղաւ, որ հրաշքը պատահաւ։ Չէ՞ որ դուն ինքդ էիր չինէ Հեղնար-ախպուրը։ Իսկ հրաշքն ախըր աստուածային բան է...

Ուստա Մկրտիչը նկատելիօրէն մռայլուեց։ Ու մինչդեռ բոլորն անհամբեր սպասում էին, նա սկսեց երկար, շատ երկար մտածել։ Եղաւ մի րոպէ, երբ թուաց, թէ նա բոլորովին էլ չի մտածում և երբեք էլ այդ հարցին չի պատասխանի։ Բայց նա նորից վերմակի տակից հանեց իր ձեռքը, որն այժմ աւելի էր դողդողում, և ասաց.

— Ախպուրը ձեռագործ է, հրաշքն՝ անձեռագործ։ Իմ չինածս մենակ սովորական ախպուրն

էր, իսկ անսովոր հրաշքն Աստված ինքն էր դրէ էնոր մէջ։ Ես ի՞նչ ըսեմ ձեզի, ախպէր տղէք, երբ որ ես ինքս էլ մենակ էդքանը գիտեմ։ Ոնչ Աստված կրնայ ախպուր չինէ, ոնչ մարդը՝ հրաշք։ Ես հողածին եմ։ Ես կրնամ պարզէ մենակ իմ ախպուրս, Աստված էլ թող պարզէ իրան հրաշքը՝ թէ որ կը կամենայ։

— Ու թէ որ մենք արժանանանք էնոր տեսութեանը, — աւելացրեց Աւետիքը հառաչելով, — Ամմէն մէկիս մէ ուսի վրայ մէ բեռըմ մեղք կայ կամայ, մէկէլ ուսի վրայ մէ բեռըմ մեղք՝ ակամայ...

— Իսկ իմ մէջքիս վրայ մենակ մէ բեռըմ մեղք կայ, — ծանր արտասանեց հաջին, որ մինչայդ լուռ էր և այժմ զարմանալի կերպով գունատուել էր, — հըմը էդ մէ բեռն աշխըրքի մեղքը կը կշռքէ...

Ուստա Մկրտիչն իր ձեռքը դրեց նրա ձեռքի վրայ.

— Մեղաւորը ես եմ, հաջի՛։ Ես ինքս ըսի, որ էդ մասին էլ խօսել հարկաւոր չէ, հըմը ես ինքս էլ բացի էս խօսակցութիւնը։ Ներող եղի...

Ապա յանկարծ թախիծով ժպտաց և շարունակեց.

— Մարդու սիրտը տան պէս է։ Ընձի իմաց են տուէ, որ շուտով տունս պիտի քանդուի։ Իմաց են տուէ, որ երեխեքս դուս հանեմ։ Է՜, ես քառսուն երեխայ ունէի, էնոնք էլ դուսն են։ Էլ վո՞վ է մնացէ ներսը։ Ներս աշեմ, տեսնիմ՝ լիքն են։ Էդոնք իմ խօսքերս են, որ հնարք չեմ ունեցէ դուս բերելու։ — Դուս հանէ երեխեքդ, — կ՚ըսեն ընձի, — տունդ պիտի քարուքանդ եղնի, ուստա՛ Մկրտիչ... Է՜, ես որի՞ն դուս հանեմ, ժամանակ չէ մնացէ։ Տէ՜, ես էլ դուս հանեցի իմ ամմէնըքէն սիրած, ամմէնըքէն լաւ երե-

խիտ։ Ներող կ'եղնիս, հաջի՛...

Որպէս զի խօսակցութիւնը մի այլ կողմ թեքի և հաջուն դուրս հանի իր ծանր վիճակից, Սարգիսը հարցրեց.

— Երեխայ ըսիր՝ միտքս ընկաւ. տղէդ չպիտի՞ արժանանայ քու տեսութեանդ...

— Հարսս հեռագիր էր տուէ։ Պատասխանն ստացանք։ Ճամբայ է ընկէ։ Կը հասնի՞ թէ չի հասնի՝ Աստուած գիտէ։ Մասկուայից մինչեւ էստեղ չորս օրուայ ճամբայ է, հըմը էստից մինչեւ երկինք՝ չորս բոպուայ։

— Մկրտի՞չ, — յանդիմանական և հարցական կերպով դիմեց նրան Աղասին։ — Ի՞նչ ես գլուխդ քցէ՝ մեռնիմ, հա մեռնիմ։ Մէ գուցցէ Աստուած ողուեց, վեր ելար...

Ուստան անյոյս կերպով ձեռքը թափահարեց և անշարժ մնաց։ Նրա շնչառութիւնը հազիւ էր նկատւում։ Մի քանիսը վեր կացան, մօտեցան լուսամուտին, բաց արին այն և սկսեցին ծխել։ Յետոյ կիսաձայն խորհրդակցեցին, փորձելով որոշել թէ ե՞րբ կը մեռնի ուստա Մկրտիչը։ Իսկ յետոյ Սարգիսը գնաց դէպի դուռը և հարսին կանչեց։

— Լսէ, աղի՛կ ջան, — ասաց Աղասին նրան, բայց յանկարծ նկատելով նրա կարմրած աչքերը, ընդհատեց ասելիքն ու խրատեց. — լաց քիչ եղի։ Աշխըրքի օրէնքն էդպէս է, իսկ Մկրտիչն էլ մեծ մարդ է։ Ընչի՞ կը տանջուիս։ Գնա։ Գնա լուացուի, արի հիւընդի քովը։ Մենք հիմի կ'երթանք։ Իրիկուայ կողմը նորից կու գանք, հըմը, բան է, եթէ մինչի էդ ուստի դրութիւնը գէշըցաւ, դրկցի մանչու հետ մեզի իմաց տու։ Մենք բոլորս էլ էնտեղ ենք, շինութեան վրայ...

* * *

Լենինականի հին թաղերից մէկում,— Ջորի Բողազում,— որն ամենայն իրաւամբ դեռ կարող է կրել Գիւմրի անունը, իր փոքրիկ տան մէջ մեռնում էր աղբիւրների հռչակաւոր վարպետ ուստա Մկրտիչը։

Երբ այցելութեան եկած նրա ընկերները գնացին, նա դեռ պառկած էր անզգայ, անշարժ։ Թէեւ նա չէր կորցրել իր գիտակցութիւնը, բայց անտարբեր էր դարձել դէպի աշխարհը։ Այլեւս ո՛չ մի միտք չէր յուզում նրան, ո՛չ նոյնիսկ Հեղնար-աղբիւրի յուշը։ Այժմ նրա ուղեղի փակուող դարբասներից ներս էր սպրդում միայն այն, ինչ որ գտնւում էր անմիջապէս իր տեսողութեան դաշտում, իր աչքերի առջեւ։ Իսկ այնտեղ գտնւողն այժմ արդէն ոչ թէ դրսի ամբողջ տեսարանն էր, այլ չգիտես ինչու՝ լոկ աղբիւրը, իր ուղեղի եւ ձեռքերի այդ առաջին գործը...

Նա հոսում էր զարմանալի վճիտ, աւելի վճիտ, քան երբեւէ։ Թւում էր, թէ ջրի փոխարէն ուստա Մկրտչի կեանքն էր հոսում այնտեղ, եւ ահա հենց այդ էր պատճառը, որ ուստան սպառուել էր ու մեռնում էր... Բայց փակել խողովակը՝ նա չէր ցանկանում նոյնիսկ այդ րոպէին։

Իսկ յետոյ թւաց, թէ այնտեղ հոսողը բոլորովին էլ իր կեանքը չէր, այլ երկրի արիւնն էր, որ նշանակուած էր նրա զաւակների երակները կեանք լցնելու համար, իսկ ինքը, ուստա Մկրտիչը, մի սովորական գիւմրեցի էր, որին սակայն վիճակուած էր եղել բաց անել իր երկրի քառասուն աղբիւրներն իր ժամանակակիցների համար, իր երկրակից-

ների համար։ Եւ նա գոհ էր այդ մեծ, այդ բարձր պատուից...

Վերջնականապէս փակուելուն արդէն բոլորովին մօտ՝ յանկարծ նորից, գուցէ միայն մի քանի րոպէով, յետ գնացին ուստա Մկրտչի ուղեղի դարպասափեղկերը, և նա, իր առաջին աղբիւրից յետոյ, յիշեց նաև ճամբակէսի քսանմէկերորդ աղբիւրը և վերջին, քառասուներորդ աղբիւրը, որոնք իր կեանքի համար ունեցել էին վճռական նշանակութիւն...

Քաղաքի գլխաւոր փողոցներից մէկի վրայ, փողոցի այն մասում, ուր միայն միյարկանի բնակարաններ կային, գտնւում էր մի շէնք՝ միւսներից տարբեր։ Մինչդեռ բոլոր միւս շէնքերը կանգնած էին միահաւասար շարքով, այդ մէկի ճակատը դընըւում էր մի քիչ աւելի յետ, խորն ընկած։ Մայթի և շէնքի միջև գետինը փորուած էր մի յարկի խորութեամբ, և մայթի պառունդից քարէ սանդուխքն իջնում էր ներքև, դէպի պատի հիմքը։ Սակայն այդ ներքին յարկը բնակարան չէր կամ նկուղ։ Պատն այնտեղ խուլ էր ամբողջովին և նրա վրայ կար միայն մի խողովակ։ Դա ուստա Մկրտչի քըսանմէկերորդ աղբիւրն էր։ Այդ խորութեան յատակն ամբողջովին աղբիւրի ջուրն էր՝ ջրով լի, որ մշտապէս թրջում էր սանդուխքի վերջին աստիճանը։

Երբ ջուր խմելու համար ներքև իջած անցորդը նայէր վերև, նա իբրև առաստաղ կը տեսնէր տախտակէ պատշգամբը, որ լինելով մայթին հաւասար, տան պատից մեկնուել էր դէպի մայթը, կիսով չափ ծածկելով իր տակի խորութիւնը՝ յաւերժահոս աղբիւրով։ Աղբիւրի ճակատին, տան սեւ պատի մէջ, դրուած էր մի կարմիր քար՝ փորագըրուած տառերով։ Այնտեղ տան տէրը, որ վաղուց էր

A 33506

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ապրել ու մեռել, Թողութիւն էր խնդրում իր մեղքերին և աղերսում էր անցորդներին՝ բարի մաղթել իր հոգու համար։ Աղերսի տակ, աղբիւրի փայլուն խողովակն էր, որի ներսն արծաթաւուն էր՝ կարծես ջրով օծուած։ Հակառակ սովորականի, խողովակն իր արմատի և բերանի մօտ աւելի նեղ էր, իսկ մէջտեղում՝ ուռուցիկ։ Բերանի վրայ սակայն նրա պռունգները լայնանում էին ու երկճղւում՝ խողովակը նմանեցնելով գոյութիւն չունեցող կենդանու բերանի։ Ջուրն այնտեղից թափւում էր գուռը և լցնում այն։ Զգացւում էր, թէ ինչպէս ջրի հետ միասին խողովակից դուրս էր գալիս նաև մի ցուրտ թարմութիւն։

Դա միակ աղբիւրն էր, որի կառուցման համար հետագայում այնքան զղջացել էր ուստան։ Կառուցելիս նա չէր ըմբռնել, թէ ինչ էր կառուցում, որովհետև տան և աղբիւրի ձևը հնարել էր ոչ թէ ինքը, այլ տան տէրը։ Իսկ երբ ըմբռնել էր՝ այլևս ուշ էր եղել։ Եւ ուստային մնացել էր միայն անիծել, որ աղբիւրի ջրի նման երկար լինի տանտիրոջ ոչ թէ կեանքը, այլ կեանքի դառնութիւնը, որ անցորդներն աղբիւրի ճակատին կարդան ոչ թէ աղերսի խօսքեր, այլ հայհոյանք, որ Աստուած լսի ոչ թէ բարեմաղթութիւններ, այլ նզովք... Իսկ երբ իջել էր ուստայի բարկութիւնը, նա դադարել էր անօգուտ անիծելուց և թքելով այդ տան ճակատին, այլևս չէր անցել նրա մօտով։

Եւ իրօք, ջուր խմելու իջնող ամէն անցորդի այնպէս էր թւում, թէ ինքը մտնում է այդ հանդիսաւոր տան հովանաւորութեան տակ։ Ջուր խմելու իջած ամէն անցորդի այնպէս էր թւում, թէ ինքը խոնարհուել է երկրպագութեան։ Ջուր խմող

ամէն անցորդի այնպէս էր թւում, թէ ինքը ծծում է հնազանդութեան թոյնը։ Եւ ջուր խմած ամէն անցորդի այնպէս էր թւում, թէ ինքը դատապարտուած է անդառնալի կերպով։

Յեղափոխութիւնից յետոյ, ազատագրութեան հենց առաջին օրը, ուստան վերցրել էր իր սրածայր մուրճը և շտապել այնտեղ՝ աղբիւրի գլխագիրը ոչընչացնելու։ Բայց հասնելով տեղ, նա տեսել էր, թէ ի՛նչպէս իրենից առաջ, ո՛վ գիտէ ովքեր, արդէն ոչ միայն ջնջել էին աղբիւրի գլխագիրը, այլև կոտրել, անհետացրել էին տեղի պատշգամբը։ Տասնըհինգ տարուց յետոյ առաջին անգամ արեւը խաղում էր ոսկեդեղին խողովակի հետ։

Եւ հէնց այդ էր եղել պատճառը, որ ուստան, ազատագրութեան հենց առաջին օրուանից, գնացել էր ուր որ կանչել էին իրեն և աշխատել... Աշխատել էր, կառուցել էր իր մնացեալ աղբիւրները, և մի օր, կարմիր քարափոշով ծածկուած կաշուի գոգնոցը կապած, իր փոքրիկ մուրճը ձեռքին, ներկայացել էր տեքստիլ գործարանի վարչութեան։

Տեքստիլ գործարանի թաղամասում բոլոր բնակարաններն ունէին իրենց ջրի ծորակները, բոլոր հիմնարկներն ու խանութները նոյնպէս ունէին իրենց ջրի ծորակները։ Ուստա Մկրտիչն ինքն էր կաւէ լայն խողովակներով ջուրը բերել թաղամաս և թողել, որպէս զի ուրիշ նոր արհեստաւորներ երկաթէ նեղ խողովակներով բաժանեն այն՝ բոլոր շէնքերին։ Եւ բոլոր շէնքերը լիուլի ստացել էին իրենց բաժինը։ Սակայն չնայած դրան, ուստան միտք էր յղացել մի սովորական աղբիւր կանգնեցնել դըրսում, փողոցներից մէկի որեւէ անկիւնում։ Վարչութիւնը, աշխատելով չվիրաւորել սիրուած վար-

պետին, զգոյշ մերժել էր նրա առաջարկը՝ աղբիւրը համարելով բոլորովին աւելորդ։

— Աւելնորդս ո՞րն է,— պնդել էր ուստան։— Թող ջուրն ինքնիրան վազէ։ Ձեզնէն ի՞նչ կ'երթայ։ Ճամբորդ կ'անցնի՝ կը խմէ, վատ մարդ կ'անցնի՝ կը խմէ, վառուած սիրահար կ'անցնի՝ կը խմէ։ Էդոնք խօ չեն կրնայ ամմէն բոպէ մտնի տները՝ ժանգոտ ջուր խմելու...

Վարչութեան մէջ ժպտացել էին ուստայի յայտնի ատելութեան վրայ՝ երկաթէ ծորակների հանդէպ, բայց նորից էին մերժել, առարկելով որ աւելորդ գումար չկայ՝ ճամբորդների, վատ մարդկանց և սիրահարուածների համար աղբիւր կառուցելու։ Այն ժամանակ ուստան յայտնել էր, որ ինքը կ'աշխատի մեն-մենակ, արտաժամեայ, առանց որեւէ վարձատրութեան, բայց աղբիւրն անպայման կը կառուցի։

Եւ սկսել էր աշխատել կէսօրներից յետոյ, մինչեւ մութն իջնելը, և աշխատանքի ընթացքում աւելի և աւելի համոզուել, որ այդպէս աւելի լաւ է. որ այդ աղբիւրն անպայման պէտք է կառուցուէր միայն իր ուժերով. բոլորովին ձրի, իբրեւ նուէր։ Չէ՞ որ դա իր վերջին, իր ամենավերջին աղբիւրն է...

Ինչպէս իր բոլոր այն աղբիւրների վրայ, որոնք մակագրութիւններ էին կրում, այնպէս էլ այդ վերջինի գլխաքարին, ուստան իր սեփական ձեռքով էր քանդակել բառերը։ Մի քառակուսի. զարդաքանդակ շրջանակի մէջ. նա վիմագրել էր.— «Կառուցաւ յաղբիւրս այս ի արտաժամու, վասն չնչոյ փրկութեան՝ ուստա Մկրտիչը»։ Գործարանի տիրեկտորի այն խորհրդին, թէ բանուորներն այդ չեն հասկանայ և աւելի լաւ կը լինէր աշխարհաբար գրել, ուս-

տան խրատական - յանդիմանական խիստ տոնով պատասխանել էր.

— Թող էդ մէ երկու խօսքն էլ գրաբար սովլին. բերընները չի ցաւի. Իրանց պապերու լեզուն է.

«Վասն չնչոյ փրկութեան»ը նոյնպէս ունէր իր պատմութիւնը. Ինչպէս բոլոր նման դէպքերում, ուստան պատրաստւում էր գրել «վասն հոգւոյ փրկութեան», սակայն տագնապով վրայ հասած բազմաթիւ երիտասարդ բանուորներ ու բանուորուհիներ խնդրել էին նրան՝ այդ բանը չանել. Նրանցից մէկն սկսել էր բացատրել, որ հոգի չկայ, որ մարդու մէջ եղածը շունչ է, և դա բնութիւնից է, ոչ թէ Աստծուց. Ուստան լսել էր ուշադիր և ապա, առանց հակաճառելու, թախիծով պատասխանել.

— Մարդու մէջ մէ բանըմ կայ, որ իրան հետ չպիտի մեռնի, որ մեռնելէն ետեւ պիտի փրկուի. Կ'ուզէք հոգի ըսէք էդոր, կ'ուզէք՝ շունչ, կ'ուզէք՝ անուն, կ'ուզէք՝ գործ... Ըշտը ես ախպըրս կը չինեմ էդ բանի փրկութան հըմար...

Եւ հենց այդտեղ, բոլորի ներկայութեամբ, աւանդական հոգու փոխարէն քանդակել էր իր շունչը...

Բոլորը զարմացել էին նրա համաձայնուելու վրայ և առաւել եւս զարմացել, որ ուստայի մըտքերում այժմ չկար ոչ Աստուած՝ որին պէտք էր աղօթել, ոչ սատանայ՝ որից պէտք էր փրկուել...

Եւ ահա, ուստայի պառկելուց մի օր առաջ, բոլորովին պատրաստ կանգնել էր նրա վերջին, թւով քառասուներորդ աղբիւրը. Կեանքի ճանապարհը, որ անցել էր ուստան և աւարտել, լուսաւորուած էր եղել քառասուն ջահով, — իր քառասուն անապակ աղբիւրներով, որոնք ա՛յնքան պատ-

մել էին և դեռ ո՛րքան պիտի պատմէին հռչակաւոր ուստայի մասին, որոնք պիտի վառ պահէին նրա գործն ու անունը։

Բայց յանկարծ նրան այնպէս թուաց, թէ իր մահուան հետ միասին մեռնելու էին թէ՛ իր գործը և թէ անունը, և դրա պատճառը լինելու էր մի փոքր, շատ փոքր բան։ Այդ միտքն այնպիսի ուժգնութեամբ շանթեց անցաւ նրա ուղեղով, որ նա ցնցուեց, սթափուեց և տագնապով ձայն տուեց դէպի դուռը.

— Հա՛րս, ա՛յ հարս։

Հարսն արագ մտաւ ներս։

— Ի՞նչ, հայրիկ։

— Արի՛։

Հարսը մօտեցաւ և վախն աչքերի մէջ՝ կանգնեց նրա մահճակալի մօտ։

— Նստի. մարդ խօ չկա՞յ էն սենեակը։

— Գէորի մէջն է։

— Եկել է, որ մենակ չմնաս, — եզրակացրեց ուստան։ — Լաւ է էրէ։ Ըպը իմ քովս ընչի՞ չի գայ։

— Դուն քնած էիր։ Կ՚ուզե՞ս՝ կանչեմ։

— Քնած չէի, հըմը էլ մի կանչէ։ Ես քեզի բան պիտի ըսեմ։

Հարսը նստեց ուստայի մահճակալի վրայ, լարուած, սպասողական։ Իսկ մինչ այդ, ուստայի դէմքի վրայ ակնյայտ նկատւում էր անվճռականութիւն, — խօսե՞լ թէ ոչ։ Գուցէ դեռ կը գայ իր աղան։

— Չեկա՞ւ, — հարցրեց նա երկար լռութիւնից յետոյ։

— Հըլը գնացքի վախտը չէ։

— Իսկ իմ գնացքիս վախտն է, է՛, չեղաւ, հա՛րս...

Դուռը կիսաբաց եղաւ և մի պատառ գլուխ թեքուեց դէպի ներս։ Հայրը ձեռքով նշան արեց նրան՝ որ չմտնի, որից յետոյ դուռն իսկոյն փակուեց։ Ուստա Մկրտիչը շարունակեց.

— Դուն շատ լաւ գիտես, որ ես նեղացած եմ իմ տղիցս ու քու մարդուցդ։ Էնիկ գացող եղաւ, էնիկ չհաւնաւ իմ գիտութմանս։ Գնաց, որ ախպուր չինելու արեստն ուրիշներէն սորվի, ոնչ թէ ընձնէն։ Լաւ չէրաւ...

— Հայրիկ, ախըր էնտեղ պրոֆեսորները դաս կու տան էնոր։

— Պրոֆեսորնե՞րը...

Ուստան ձեռքը դուրս հանեց վերմակի տակից և դողդողացող մատները բռունցք հաւաքելով, ուժեղ խփեց իր կրծքին.

— Ե՛ս եմ ամենամեծ պրոֆեսորը։ Թող սորվի ամէն որ կ'ուզէ, հըմը առանց իրան հօր գիտութանը՝ էնոր ուսումն արժէնք չունի։

Ուստան նկատելիօրէն յուզուեց, կակազեց և խօսքն ընդհատեց։ Ըստ երևոյթին նա դժուարանում էր շարունակել, վախենալով ծանր խօսքեր ասել որդու հասցէին։ Եւ երբ բաւական ժամանակ լուռ մնաց, նրա դէմքը խաղաղուեց և դէմքի հետ էլ՝ հոգին։ Այն ժամանակ նա նորից խօսեց և այժմ արդէն նրա ձայնը խաղաղ էր, վախեցնելու չափ խաղաղ.

— Թէ որ գար, թէ որ հասնէր, ես ինքս կը խօսայի հետը, կը սորվեցնէի ամմէն բանը։ Թող հիմի բանի տեղ չդնէր, հըմը էգուան առանց էգոր եօլա երթալ չպիտի կրնընար... Ժամի քանի՞ն է, հա՛րս...

Հայրը վեր կացաւ և մօտեցաւ կամոդին, որի

վրայ, ընտանեկան հին լուսանկարների և թղթէ ծաղիկների միջև, տկտկում էր սեղանի ժամացոյցը։

— Յետ արի, հա՛յրս, հարկաւոր չէ,— շտապ կանչեց ուստան։— Ես իմացայ ժամը։ Իրեք րոպէ է պակաս...

Երբ հարսը վերադարձաւ ու նստեց, չհասկանալով հիւանդի խօսքերի իսկական իմաստը, նա շարունակեց.

— Տղիս կ'ըսես, որ եթէ, վո՞վ գիտէ, մէ դըժ-ուարութեանըմ հանդըպի, թող քանդէ իմ քառասուն ախպուրներէս որն որ կ'ուզենայ ու թող սարքի էնոր հնարքները։ Կ'ըսես, որ թող չխնդայ իրան հօր վրայ ու թող մտեհան չէնէ էնոր։ Կ'ըսես, որ մեռնելուս րոպէին իմ սիրտս խաղած չէր իրան հետ։ Վերջին մնաս բարովս ու պաշտխս մտեհան չէնէս...

Ուստան լռեց։ Հարսը սարսափած նայեց նրան, բայց նա դեռ չէր մեռել։ Նա մտածում էր։ Եւ յանկարծ, բոլորովին անսպասելի զգաստութեամբ, նա նստեց, տագնապով լի աչքերն ուղղեց հարսի վրայ և ամուր բռնեց նրա ձեռքը.

— Հա՛յրս... պարտականութիւն կը դնեմ վրէդ։ Տղիս ըսա, ինչքան գէշ բան էնէ աշխըրքի վրայ, ես էնոր կը ներեմ... Հըմը իմ աւխտենական նզովքս ու անէծքս կու տամ, եթէ մէ օրըմ ձեռք տայ Հեղնար-ախպուրին...

— Ի՞նչ կ'ըսես, հայրիկ, — սարսաց հարսը։

— Թող քանդէ թէկուզ իմ քառասուն ախպուրներս էլ,— էգար մէջ որբապղծութիւն չկայ. Հըմը Հեղնար-ախպուրն ուրիշ է, էնոր տակը գերեզման կայ...

— Արար աշխարք գիտէ էդ բանը։ Ընչի՞ պիտի քանդէ, հայրիկ...

— Վո՞վ գիտէ… Գուցէ թէ հրաշքի հըմար քանդէ… Իմ ժամանակս մարդ էդպէս բան մտքէն էլ չէր անցընէ, հըմը հիմի… Հիմի մարդն աստւածային հրաշքն ատուգել կ'ուզէ։

— Ախըր հրաշք չկայ, հայրիկ, սուտ բան է։

— Հրաշքը կայ ուրընցողի հըմար։ Էդպէս էլ կ'ըսեն իրան։ Հըմը չուրընցողը հրաշք չի տեսնի։ Կ'ըսեն տղէս, որ Հեղնար-ախպուրի հրաշքը ոնչ թէ չոր քարի կամ թաց հողի մէջն էր, այլ իմ ժամանակուաս մարդոց հաւատացեալ հոգու մէջ… Իսկ քեզի, աղիղ հարս ջան, հաղար մնաս բարով…

Նոյն վայրկեանին դրսում աղմուկ լսուեց։ Հարսն արագ դուրս վազեց, միջանցքում լսուեց տղամարդկային մի ձայն, յետոյ հարսի լացակումած ձայնը, որ շտապ ինչ որ բան էր հաղորդում նրան, որից յետոյ դուռը չրխկալով բացուեց ու սենեակ մտաւ ուստա Մկրտչի տղան։

Ուստան արդէն մեռած էր։

2

Խաղաղ ու բաց կապոյտ՝ բացուեց առաւօտն ուստա Մկրտչի սենեակում։ Առաւօտուայ պէս հանդարտ ու անշշուկ՝ Գալուստն արթնացաւ. կարծես քնի մէջ նա երկար ժամանակ ունկնդրել էր լռութեանը։ Այն սենեակից, ուր մի օր առաջ իր հայրն էր մեռել, նա նայեց դէպի լուսամուտների նուրբ, անիրական կապոյտը։ Երեկոյեան Մանանը մոռացել էր փեղկերը փակել և Գալուստն այժմ գոհ էր այդ մոռացութեան համար. այսօր ամենից առաջ ինքն էր տեսնում Ջորի Բողազի առաւօտը, առաջին առաւօտը, որ այլեւս չէր տեսնելու իր հայրը…

Հայաթի պռունգին, աղջամուղջի միջից, գծագրուել էին բարդիների սպիտակ բները։ Բներից այն կողմ, վերեւում, ուր դիմացի լանջի ամենաբարձր փողոցն էր, լուսացող երկինքն աստիճանաբար հորիզոնով իջել էր դեռ մութ բնակարանների շարքի վրայ։ Նրանց դռների վերեւում դեռ պլպլում էին փողոցը լուսաւորող նաւթի լամպերը, իսկ փողոցում դեռ կատարեալ գիշեր էր։ Բներից այն կողմ, ներքեւում, ուր երկու տների արանքից երեւում էր ձորի տափակ ու լայն յատակը, դեռ լրիւ խաւարի մէջ հոսում էր սակաւաջուր առուակը՝ չարժուն խաւարում։

Նայում էր Գալուստը սենեակի տաք կիսախաւարից և զգում, թէ ինչպէս բարդիների գագաթներից իջնում էր սառնութիւնը և առուակի ջրից բարձրանում էր սառնութիւնը։

Մանանի մահճակալից լսում էր քնածի հանգարտ շնչառութիւնը։ Թւում էր, թէ դրանից էր սենեակի և՛ հանգարտ ջերմութիւնը, և՛ հանգարտ կիսախաւարը։ Եւ սենեակն իր պատերի գորգերով ու յատակի գորգերով, գունատ կապոյտ և գունատ կարմիր վերմակներով, անկեան փոքրիկ սեղանի վրայ դեռ պլպլացող գիշերաճրագով, յանկարծ Գալուստին թուաց դրսի հետ ա՛յնքան չառնչուող, ա՛յնքան ներհակ։ Եւ առաջին անգամ, սրտի ծանր ճընշումով, նա զգաց ա՛յն իսկ կարօտը, որ զգացել էր իր հայրը մի օր առաջ՝ նոյն սենեակից նայելով դէպի լուսամուտից այն կողմը։ Գալուստն անմիջապէս վեր կացաւ, անշշուկ հագուեց և բաց անելով դուռը, դուրս ելաւ դէպի աշխարհ։

Հազիւ դուռը բաց արած՝ նա լսեց ծառերի ու ջրի համատարած մեղմ խշշոցը զով լռութեան մէջ։

Առաւօտը, որ սենեակից երեւում էր բաց կապոյտ, այժմ գունաթափ էր և իրական։ Այստեղ ու այնտեղ, լուսաբացի սառնութեան մէջ, դեռ փայլում էին փոքրիկ լամպերը՝ արդէն անճառագայթ և ինքնամփոփ։ Մի բարձր սեան վերեւում, միայնակ վառւում էր ելեկտրական մեծ լապտերը։ Նա թեթեւ օրօրւում էր։ Երեւի քաղաքի վրայով անցնում էր սահուն, դուրեկան քամի։

Լուսամուտափեղկերը, դռներն ու դարբասները դեռ փակ էին։ Հայաթներում ու փողոցներում դեռ ոչ ոք չկար։ Ծառերի ու ջրի համատարած մեղմ խշշոցը, որ լսուել էր առաջին վայրկեանին, այժմ աննկատելիօրէն դարձել էր անլսելի։ Ամէն ինչ լուռ էր։ Միայն փողոցներից մէկի անկեան յետեւում, մէկն աւլում էր մայթը։ Մի կառապանի կառքից յստակ բուրում էր խոտի դէզը, որի մի կողմում դեռ կծկուել էր վերջացած գիշերը։

Ինչ որ հեռու, շատ հեռու փողոցում հնչեց բացուող դարբասի պաղ չանգալի ձայնը։ Վերահաստատուած լռութեան մէջ լսուեց դաուլի անշտապ, ընդհատ կոկոցը։ Վաղ լուսաբացի մէջ անգամ, այդ ձայնը փափուկ էր ու դուրեկան, որովհետեւ դաուլչին մատներով էր խփում նուագարանի ձիգ, ողորկ ու դեղնաւուն — կիսաթափանց մաշկին։ Ձայնը մօտենում էր դանդաղաքայլ կառքի ընթացքով։ Չնայելով անգամ կարելի էր տեսնել վարպետին՝ կառքում նստած, կարմիր կողերով դաուլն իր գոգն առած։

Մի քիչ անց, հազիւ ըմբռնելիօրէն լսելի դարձաւ նաեւ զուռնաների ձայնը․— դամ պահողի մեղեդին և դրա եղանակային ոլորտում՝ բուն զուռնայի ելեւէջը։ Եւս մի քիչ անց, փողոցի սալայա-

տակի վրայ լսուեցին ձիապայտերի մաքուր հնչիւնները, — կլանչ... կլունչ... Ըստ երեւոյթին, քայլում էին երկու կառքեր։ Երբ նրանք աւելի մօտեցան, ձիապայտերի ձայները յանկարծակի խլացան, իսկ դաւուլի կոկոտցը տեղի տուեց ղժւռնաններին՝ շրջապատելով նրանց քաղցրալուր հնչիւններով։ Անկեան յետեւից երեւաց առաջին կառքը, մի վայրկեան յետոյ երեւաց նաեւ երկրորդը։ Նրանք գալիս էին կողք-կողքի։ Մէկում նստած էին դաւուլ-զուռնաչիներն ու երկու այլ մարդիկ, իսկ միւսում՝ եւս երեքը։ Բաց կապոյտ, հաստ զգեստ հագած կառապանները զուարթ նայում էին լուսաբացին։ Կառքերի եկած փողոցներում, անշուշտ, քաղցր կիսարթնացել էին մարդիկ և այժմ հեռացող կառքերի յետեւից կրկին քնում էին նրանք՝ նուագով օրօրուած։

— Կայնի՛...

Կառապանները սանձերը ձգեցին։ Այն կառքից. ուր նուագողներն էին նստած, մէկը վար իջաւ ու մօտեցաւ մի տան լուսամուտներին, որոնց փակ փեղկերը բաց կապոյտ էին վաղ լուսաբացի նման։

— Օնէ՜ս...

Նա ձեռքով թխկթխկացրեց տախտակը։ Մի վայրկեան դեռ պատասխանող չեղաւ։

— Օնէ՛ս,— բղաւեցին կառքերի միջից։ Ապա մէկը դիմեց ներքեւում գտնուողին.

— Ամո՛ւր զարկ, Աղասի՛։

Նոյն րոպէին սենեակում շրշոց լսուեց, ապա լուսամուտափեղկի չանգալը՝ որի ծայրն ամրացուած էր ներսում՝ շարժուեց։ Աղասին դուրս քաշեց այն և փեղկերը յետ ծալեց։ Արձակ, սեւ մազերով մի կին շրջանակներից մէկը բացեց և գլուխը

մօտեցրեց երկաթավանդակին։

— Բարի լոյս, քոյր,— ողջունեց Աղասին.— Օնէսը տո՞ւնն է։

— Դո՞ւն ես, եղբայր, Աստուած բարին, տունն է, — շշնջեց կինը նոր արթնացածի խաղաղ, լուսաբացային շշունջով և հեռացաւ դէպի սենեակի խորքի մթութիւնը։ Այնտեղից լսուեց, թէ ինչպէս նա արթնացնում էր ամուսնուն ցած ձայնով՝ միւս քնացածներին չխանգարելու համար.

— Օնէ՛ս, զարթի, Օնէ՛ս, Աղասի եղբայրը քեզի կը հարցնէ։

— Չեկա՞ւ,— անհամբերացան կառքերում։

— Կու գայ,— յայտնեց Աղասին,— մէկէլ կողքի վրայ դարձաւ։

Սպիտակեղէնով, լուսամուտին մօտեցաւ Օնէսը քնաթաթախ աչքերով և խռպոտ հարցրեց.

— Վո՞վ է...

— Օնէ՛ս, ես քու հոգուդ մեռնիմ,— աղմկեցին կառքերից։ — Օնէ՛ս ջան, դո՛ւս արի, աղիզ ջան։ Տո՛ւշ... Տո՛ւշ՝ Օնէսի հըմար։

— Արփաչայ կ'երթանք,— բացատրեց Աղասին։ — Հագի՛ր։ Իրիկունը Աւետիքենց տունը քէֆ կ'էնէինք։

Օնէսը երկաթավանդակից նայեց դուրս։

— Աւետի՛ք։

— Ջա՛ն,— բացականչեց նուագողների մօտ նստած միւսը՝ ձեռքով անելով.— շուտ էրա։

Օնէսն սկսեց հագնուել՝ լուսամուտից չհեռանալով։

— Էլ վո՞վ կայ, Աղասի՛,— հարցրեց նա։

— Սարգիսն է, Կարոն, Բագրատը։

— Բոլորդ էդտեղ էք,— եղրակացրեց Օնէսը։

Սպասելով իրենց ընկերոջը, կառքում սկսեցին նուագել մէկն այն եղանակներից, որոնցով բացւում է լոյսը Գիւմրիում։ Դաուլն այդ նուագի ընթացքում լուռ է մնում և եղանակը ծորում է զարմանալի մեղմ ու անուշ։ Կարծես մէկը քթի տակ երգ է ասում՝ առանց բառերի և հրաշալի։ Երբեմն զուռնան մի քիչ աւելի է բարձրացնում ձայնը և նոյն սահունութեամբ նորից իջեցնում, որից յետոյ եղանակն աւելի խորն է թւում և կարծես նիրհում է։

Նուագի ընթացքում Օնէսը հագնուեց, լուացուեց ու դուրս եկաւ։

— Բարի լուս, — դիմեց նա բոլորին։

— Աստու բարին, նանի, Օնէս ջան, ուշացանք։

Բագրատը վար ցատկեց, գրկեց Օնէսին, համբուրուեց և տարաւ կառք։

— Արի՛, աղիզ ընկեր, արի՛, — հրաւիրեց կարոն՝ տեղ անելով նրան փափուկ նստելատեղում։ Ապա կանգնեց կառքի մէջ և ձայն տուեց.— քշէ՛ք։

Կառքերը շարժուեցին։ Նուագը ցնցուեց և տեղահան լինելով սկսեց իջնել։ Մի րոպէ թւաց, թէ բոլորովին էլ չի գնում կառքը, թէ նա կանգնած է իր տեղում, և այդ՝ ժամանակն է, որ կուլ է տալիս դաուլ-զուռնայի հարազատ, անփոխարինելի նուագը... Գալուստը դուրս եկաւ իր ինքնասոյզ վիճակից, նայեց կառքերի յետեւից և տեսաւ, թէ ինչպէս հեռանում էին նրանք ու հեռանում էր նուագը, և նրա սիրտը սեղմուեց վշտի ծանր զգացումից. չէ՞ որ այդ գնում էին իր հօր ամենամտերիմ և ամենավերջին ընկերները...

Երբ վերջապէս մեղեդին սուզուեց լռութեան մէջ, Ջորի Բողազի վաղ առաւօտը դարձաւ աւելի խաղաղ, աւելի անձայն։ Նայեց Գալուստը բարդի-

ների համարեա անշարժ գագաթներին և չլսեց նրանց սոսափը, նայեց ջրին և չլսեց նոյնիսկ նրա կարկաչը։ Եւ չհամարձակուելով խախտել լուսաբացի այդ հրաշալի պահը, վախենալով անգամ իր ոտնաձայներից, նա զգոյշ քայլերով իջաւ ջրափ, անցաւ սակաւաջուր առուակը և բարձրացաւ դէպի իր հօր կառուցած առաջին աղբիւրը։

Նա հոսում էր զարմանալի վճիտ, աւելի վճիտ, քան երբեւէ։ Ջուրը, որ անշարժ կամարով ձգուել էր փայլուն խողովակից մինչեւ գուռի անցքը, թւում էր թէ ուստա Մկրտչի կեանքն է՝ անյայտութիւնից եկած և դէպի անյայտութիւն գնացած...

Ջարի Բողազում դեռ ոչ ոք չէր երեւում։ Ներքեւում առանձին կանգնած տները և վերեւում երկար փողոցները՝ դեռ անշշուկ քնած էին։

Ինչ որ տեղում, լսուեցին ճնճղուկների խուռն, գործունեայ կանչերը, ապա լսուեցին նրանց թեւերի մանր, բայց բազմաթիւ փռռոցները։— Նստեցի՞ն արդեօք նրանք դեռ դատարկ փողոցներից մէկում՝ գիշերով անցած սայլերից դեղին երիզով կաթած գարին հաւաքելու, թէ՞ թռան... Ջրափից մի քիչ բարձր գտնուող տներից մէկի բաց հայաթում զընգաց սպիտակ շան շղթան և ապա իր տախտակէ բնի մէջ շունը լայն յօրանջեց և ատամների ամուր շրըխկոցով բերանը նորից փակեց։ Այնտեղ, ծառերից մէկի տակ, երեկոյից ի վեր, ինչ որ երեխայ մոռացել էր իր խաղալիքը։ Ջրհորի վրայ ամրացուած ճախարակն անշարժ էր, բայց պարանի կախ ընկած ծայրը թեթեւ օրօրւում էր մարդու համար աննկատելի մի հովից։ Տան դուռը բացուեց. իր մօր ոտնամանները ոտները գցած՝ դուրս եկաւ կիսահագնուած, արձակ մազերով մի հասած աղջիկ և լուսամուտների կար-

միր փեղկերը յետ ծալեց։ Երկաթալանդակների և ապակիների յետևից ժպտացին ծաղկամանները՝ բացուած ծաղիկներով։ Աղջիկը գնաց ներս։

Յանկարծ ամենաբարձր բարդիների գագաթները պայծառացան։ Ըստ երևոյթին՝ ձորից այն կողմ, քաղաքից էլ այն կողմը, մի ինչ որ տեղում ծագեց արևը։ Սաղարթների վրայ ընկած նրա լոյսի տակ՝ տերևները, որ թաց էին, փայլեցին բազում ոսկիների պէս։ Իսկ երբ արևածագի պահին արագօրէն փչող և իսկոյն ընդհատուող քամու տակ շարժուեցին տերևները, և արևի լոյսը փոխն ի փոխ ընկաւ նրանց այլևայլ բազմութիւնների վրայ, թւաց թէ բարդիներից ոսկի է թափւում աշխարհին, — ո՛չ սովորական ոսկի, այլ այնպիսի, որը եղել է բոլոր ձորի-բողազցիների երազը։ Ձորի լռութիւնը, որ թէև դեռ չէր խեղդուել, այժմ լի էր ինչ որ անըմբռնելի խլրտումով. զգացւում էր, որ բնակարաններում արդէն արթնացել էին կամ արթնանում էին մարդիկ։

Աննկատելի կերպով անցնում էր ժամանակը։ Այժմ արևը գագաթներով իջել էր աւելի վար, ոսկեզօծելով համարեա բոլոր սաղարթները։ Եւ ահա նորից, յանկարծ, նա ընկաւ կտուրներից մէկի պռունգին կանգնած կարմիր ու դեղին փետուրներով աքաղաղի վրայ։ Աքաղաղը վառուեց հրդեհի պէս։ Տների դեռ ստուերոտ ֆոնի վրայ նա միակ պայծառ կէտն էր։ Երբ տաք ճառագայթներից աշխուժացած՝ նա հեռացաւ կուտ որոնելու, թւաց թէ արևն ինքն էր, որ մտաւ ամպերի տակ։ Փողոցն իսկոյն կորաւ համատարած ստուերի մէջ։ Բայց աքաղաղը երևաց հարևան կտուրի վրայ՝ աւելի պայծառ, յետոյ երրորդ կտուրի վրայ, չորրորդի...

կարծես մի խուրձ բոց՝ նա շրջում էր արևով հըրդեհելու Զարի Բաղը։

Եւ ահա յանկարծ, անսպասելիօրէն մօտիկ և բոլորովին անակնկալ՝ որոտաց գործարանային շչակը։ Նա շուտով անցաւ ձորն ի մէկ՝ վերջնականապէս արթնացնելով ու զգաստացնելով այն։ Առաւօտը վերջացաւ։

⁂

Հոսում էր նուիրական Արփաչայն իր յաւիտենական խաղաղութեամբ։ Ո՛չ խորն էր նա՝ մարդակուլ խորութեամբ, ո՛չ լայն էր՝ անանցանելի լայնութեամբ և ոչ սրընթաց՝ գահավէժ արագութեամբ։ Նա երբեք չէր աղմկում և երբեք դուրս չէր գալիս իր ափերից։ Լուռ, ծանր ու մտածկոտ՝ ձգուել էր նուիրական Շիրակի դաշտով վճիտ ջուրը։ Նա առաջ էր շարժւում դանդաղ ու հանդիսաւոր՝ իր հեռաւոր ակունքը խրած հին հազարամեակների մէջ և իր ողջ ընթացքով ձգուելով դէպի նոր հազարամեակներ։

Նա հոսում էր քաղաքի արեւմուտքում՝ մի երկարանիստ բլուրով քաղաքից թաքնուած։ Բլուրը մի տեղում ճեղքուած էր և այդ ճեղքով անցնում էր քաղաքից դէպի Արփաչայ տանող ճանապարհը։ Երբ խրախճանքի գնացողների կառքերը հասնում էին բլուրի այդ կտրուածքին՝ որտեղից անակնկալ կերպով բացւում էր նուիրական գետի տեսարանը, — ձիերը կանգ էին առնում իրենց տեղում մեխուածի նման և մարդիկ կառքերից նայում էին լուռ, հիացած...

Բլուրի լանջի մօտից անմիջապէս մի լայն դաշտ

աննկատելի վայրէջքով ցածրանում էր հեռու, մինչեւ դիմացի փոքրիկ և տափակ բլրակը։ Այդ բլրակը շատ կարճ էր և ընդամենը մի քիչ տեղ էր փակում տեսարանը։ Բլրակի ներքեւի ծայրում,— հարաւում և հարաւ-արեւելքում,— փռուած էր արեւով ողողուած լայն դաշտը։ Դաշտի պայծառութեան վրայ տեղ-տեղ կանգնած էին կանաչ ծառախմբերի մթին տուերները՝ իրենց մօտի գիւղերով, թէ՛ մօտիկ, թէ՛ հեռու, թէ՛ աւելի հեռու, իրարից անջատ՝ փայլում էին ջրի արծաթէ կտորները։ Ջրափների վրայ, արեւով ողողուած՝ երեւում էին մօտ ու հեռու բազմաթիւ բոստանները։

Բլրակի վերեւի ծայրում,— հիւսիսում և հիւսիս-արեւելքում,— կանգնած էին բազմակուտակ լեռներ ու ձորեր՝ կապոյտով շղարշուած։ Բայց այդ կապոյտը թւում էր ո՛չ թէ տարածութեան, այլ ժամանակի կապոյտ։ Թւում էր, թէ այնտեղ կանգնած էր պատմութիւնը, որ նայում էր դարերի մշուշից։ Այդպիսի լեռնաստան չկար ուրիշ ոչ մի տեղ, և նա թողնում էր հին մագաղաթի վրայ նկարուած աշխարհի տպաւորութիւն։

Սակայն մարդիկ կառքերի միջից նայում էին ոչ այդ կապտաւուն լեռնաստանին կամ ոսկեպայծառ դաշտին, այլ ուղիղ դէպի առաջ, ուր դիմացի բլրակի փէշը քերելով, անցնում էր արծաթափայլ ջուրը։

Այն ափի վրայ կար դաշտի մի ոչ լայն շերտ՝ դեղնածուփ հասկերով։ Հասած արտերը ջրափի մօտից կից մօտենում էին բլրակին, որի վրայ մի գիւղ էր փռուած։ Գիւղի տնակները շինուած էին լանջի վրայ, մէկ-մէկուց վերեւ։ Տնակների գորշ շարքերի մէջ, թէ՛ լանջի ներքեւում, թէ՛ վերե-

ւում, այստեղ ու այնտեղ ցրուած, գտնւում էին կալերը՝ պայծառադեղին չեղջերի կլոր շրջանակներով։ Աչք կուրացնող պայծառ դեղնութեան մէջ, արեւով ողողուած, քայլում էին դեղին ու կարմիր եզների զոյգերը՝ իրենց յետեւից կամեր քաշելով։ Կամերի վրայ կանգնած ոտաբոբիկ աղջիկները, որ սպիտակ լաչակներ ունէին կապած, ճիպոտների ծանր ձօձումով շտապեցնում էին եզներին։

Տնակների գորշութեան մէջ, այստեղ ու այնտեղ վեր էին բարձրացել բարդիները, որ զով խշշում էին։ Նրանց խիտ սաղարթների մուգ կանաչը և նրանց ներքեւի մուգ ստուերներն աւելի պայծառ էին դարձնում ոսկեղէն կալերի փռուած տեսարանները։ Գիւղի մի ծայրում, ամբողջապէս ուռիների թանձր ստուերում թաքնուած, գտնւում էր գիւղի ջրաղացը։

Նուիրական գետի ափերն անծառ էին, ցերեկնային արեւի տակ պարզօրէն ձգուած, բայց տեղտեղ, նրա երկու ափերին կանգնած էին փոքրիկ ծառաստաններ, որ կարծես կանչէին, ստուերի ու զովի կղզիներ լինէին՝ շրջապատի արեւային լոյսի և ջերմութեան մէջ...

Եւ դանդաղ մտրակում էին կառապաններն իրենց ձիերին, որոնք ծանրաքայլ իջնում էին սիրելի հովիտը։

* * *

Կառքերը վերադարձան քաղաք, իսկ արհեստաւորները սփռոց բաց արեցին մի հով ուռենու ստուերում։ Ջուրը հոսում էր սփռոցի մօտով, թրջելով նրա արեւոտ ծայրը։

Դաուլ-զուռնաչիների նստելու համար գտան-բերեցին երեք քար։ Նրանց առջեւ դրեցին ուտե-

լիք, օղի և բաժակներ։ Իսկ իրենք բոլորուեցին սփռոցի շուրջը՝ ծալապատիկ, տափակ։ Ուստա Մկրտչին յատկացրին ամենալաւ տեղը՝ սփռոցի գլխին, ծառի բնի տակ։ Նրա կողքերին նստեցին Օնէսն ու Կարոն, սփռոցի մի կողմում՝ Բագրատն ու Սարգիսը, միւս կողմում՝ Աւետիքն ու Աղա-սին։ Տարեցին եօթ բաժակ, օղի լցրեցին։ Ուստա Մկրտչի բաժակի մօտ դրեցին խորովածի և այլ խորտիկների ամենալաւ պատառները։ Մնացին լուռ, գլխահակ։ Գլխահակ լսեցին դաւուլ-զուռնայի լացող եղանակը, ապա՝ երբ նուագի վերջին հնչիւնները մարեցին ծառերի զով սաղարթներում, Աղասին վերցրեց իր բաժակը, խփեց ուստայի բաժակին և ասաց.

— Ամմէն անգամուայ պէս՝ առաջի կենացը կենացդ էղնի, ազի՛զ... Կեանքդ էնքան երկան էղնի, ինչքան որ, ափսոս, մահն է երկան...

Օնէսը նոյնպէս բաժակ վերցրեց.

— Մշտական մեր սուփրի գլխին նստած էղնիս, ախպէր։ Ձէններս կարենք, լսենք քեզի, լսենք ու չկշտանանք...

Կարոն նոյնպէս բաժակ վերցրեց.

— Կեանքի մէջ մեղնէն մենծը գուն եղար, Մկրտի՛չ։ Մահուան մէջ էլ մեղնէն մենծը գուն եղար։ Կենա՛ցդ։

Բոլորը բաժակ բաժակի տուեցին ուստայի բաժակի հետ և օղի խմեցին։ Յետոյ Աւետիքը վերցրեց ուստայի օղին, շպրտեց նուիրական գետը։ Ջուրն օղին տարաւ։

Բաժակները նորից լցրեցին։

— Ախպէրտինք, — դիմեց Սարգիսը նուագող-ներին, — ուստի սիրական երգը երգէք։

Եւ նորից խոնարհուեց իր բաժակի վրայ։

Շուրջը, գետնի վրայ, բուրում էր զով կանաչը։ Հեռուն, արեւի տակ, ջուրն էին մտել թուխ երեխաներ։ Երբ նուագը լռեց, ինչ որ տեղից լըսուեց թռչունի երազկոտ կանչը և իսկոյն մարուեց.

— Հօ՛ — պօ...

Ե՛րբ էլ նայէիր նուիրական գետին, ջուրը գնում էր ու գնում՝ անկանգ, անվերադարձ։ Երբեմն նա իր հետ բերում էր մի կանաչ ճիւղ եւ, երբեմն այնտեղից դուրս էր նետւում մի պսպղացող, փոքրիկ ձուկ և նորից ընկնում յետ։ Դիմացի ափից մի ծառ իր ստուերը կախել էր ջրի արեւոտ հոսանքի վրայ։

Բագրատը նորից օղի լցրեց և լուռ մնաց։ Խօսք վերցրեց Աւետիքը, որի կեանքն անցել էր կամուրջներ կառուցելով.

— Ես էլ, Մկրտի՛չ ջան, քեզի պէս նպատակ էի դրէ, որ կեանքիս մէջ տասներկու կամուրջ պիտի շինեմ։ Էդ բանը քեզի էլ է յայտնի, էս ախպըրտանցս էլ... Հիմի տասնմէկը շինել եմ, հըմը տասներկուսին ձեռքս չի երթայ... Ախըր կեանքն անոյշ է, ես վերջի կամուրջն ի՞նչըղ շինեմ...

Բոլորը լսում էին անձայն, քաշուած։

— Էս ափի վրայ կեանքն է։ Ես գիտեմ, թէ էն մէկէլ ափի վրայ ի՛նչ կայ ընձի հըմար։ Կամուրջն որ շինեմ, ուզեմ թէ չուզեմ առաջի անգամ ես պիտի անցնիմ վրայէն...

Նա շփեց ճակատը և շարունակեց.

— Էդիկ իմ հին սովորութքս է, Մկրտի՛չ ախպէր։ Առաջի կամուրջս որ շինեցի, հէչ մարդ չվըստահցաւ անցնի։ Գերդաստանս նստեցուցի կամրջի տակը, ես էլ փայտոն նստած՝ անցայ վրայէն։ Տասնըմէկ կամրջի վրայէն խնդումով անցայ, հըմը էս

վերջինը սիրտս մահուան դող է քցէ...

Նա անակնթարթ նայում էր օղուն։

— Հըմը ի՞նչ էնես, կարմունջ է հարկաւոր։ Ջրանցքն եկել է՝ արտերով կ'անցնի։ Կարել է սելերու համբէն։ Էն օրն էլլի եկան քովս, խնդրեցին, զարմացան.— էս ընչի՞ չես չինէ, ուստա՛. էս ընչի՞ ես կանգ առէ։ Էս մէկն էլ չինէ, էլ հարկաւոր չէ։ Էս մէկն էլ որ չինես, վաստակդ հերիք կը հաշուենք։ Ձեռքներէս եկած փողը կու տանք, սրտներէս անցած պատիւը, որ նստիս, քու սովեցուցած աշկերտներուդ գործը տեսնիս՝ ուրախանաս...

Աւետիքը թախիծով ժպտաց.

— Աշեցի երեսներուն, ձէն չհանեցի։ Ի՞նչ գիտնային, որ կարմունջն ուզելով՝ գերեզմանս կ'ուզէին։ Աշեցի, աշեցի ու խօսք տուի...

Նա վերցրեց բաժակը.

— Հիմի, Մկրտի՛չ ջան, դուն ընձի օրինակ էղնիս, որ սրտի հանգստութենով էս վերջի կարմունջն էլ վերջացնեմ...

Բոլորը նորից խմեցին և վարպետի օղին նորից յանձնեցին նուիրական ջրին։

Զուռնաչիներն սկսեցին կրակձայն նուագել, դաւուլչին դաւուլը կամացուկ խփեց և սկսեց երգել մի երգ, որ խրախճացողները լսել էին իրենց երիտասարդ հասակում, իրենց պատանի հասակում...

Հեռուում, արեւի տակ, դեռ լողանում էին երեխաները։

* * *

Երբ Բագրատը նայեց վեր՝ դէպի աննկատելիօրէն բարձրացող դաշտը, նրա բարձրում ձգուած բլուրի կարուածքում երեւացին խրախճացողների համար վերադարձող երկու կառքերը։

Աղասին բաժակների մէջ լցրեց վերջին օղին.

— Ամմէն անգամուայ պէս՝ վերջի կենացը կենացդ էղնի, աղի՛զ։ Վա՞վ գիտէ, մէկ էլ սաղա՛ն կը նստի՞նք էսպէս օխտը հոգով։ Ինչքան որ մեր ճակտի վրայ քրտինք կայ՝ տուինք աշխըրքին։ Հիմի մեր երթըլու էսօր-էգուցն է։ Էսօր վեց բաժակ կը վերցընենք քու կենացդ, հըմը կրնայ էղնի, որ էգուց էգոր կէսն էլ չմնայ։ Բանի որ հըլը սաղ ենք ու կենդանի՝ կենացդ, աղի՛զ, քառասուն ախպուրներուդ կենացը, որ պիտի վազեն հուր ուխտան։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

I

Քաղաքի հարաւ-արեւելքում միանգամից վերջանում են բոլոր փողոցները և անմիջապէս սկըսւում է մի ճանապարհ, որը ձգւում է երկու երկար, քարէ պատերի միջեւ։ Պատերը միապաղաղ են և նրանց վրայ, իրարից բաւական հեռու, կան միայն տախտակէ փակ դարբասներ և քառանկիւնի խորութիւններ, որ աղբիւրներ են։ Անմիջապէս պատերի յետեւում, պատերին զուգահեռ, շարուած են բարդիներ, իսկ բարդիների յետեւում բոստաններ են։

Այդ ճանապարհը տեղ-տեղ ոլորուելով գնում է դէպի դիմացի բարձրաւանդակը, որի հենց լանջի մօտ վերջանում են բոստաններն ու նրանց պատե-

րը։ Մերկ լանջով ճանապարհը բարձրանում է և գնում դէպի հեռու գերեզմանոցը, որ չի երևում. լանջն իր բարձրութեամբ ծածկում է նրան։

Ահա այդ լանջի վրայ, ուր այժմ ոչինչ չկայ, մի ժամանակ փռուած էր քաղաքի թուրքական թաղամասը։

Ազգամիջեան կռիւների ժամանակ ո՛չ միայն ոչնչացան կամ ցրուեցան նրա բնակիչները, այլև հիմնայատակ կործանուեցին բոլոր շէնքերն ու փողոցները, և քաղաքը զրկուեց իր գեղեցիկ թաղամասից։ Այժմ այնտեղ, քարքարոտ հողի վրայ, բուսնում է կարճ, դեղնաւուն խոտը, և հետք անգամ չի մնացել նախկին բնակավայրից։ Եւ լանջն այժմ թւում է այնքան փոքր, որ անհնար է պատկերացնել, թէ առաջ այդտեղ փռուած է եղել մի ողջ թաղամաս իր փողոցներով, իր տներով, իր հայաթներով։

Քաղաքի բոլոր բնակիչների նախահայրերը տասնեակ տարիներ առաջ եկել էին Տաճկաստանի քաղաքներից և իրենց հետ բերել էին իւրաքանչիւրն իր ծննդավայրի պատկերը.— յոյներն՝ Իզմիրի, հայերն՝ Էրզրումի և թուրքերը՝ Պոլսի։ Իւրաքանչիւրն իր թաղամասը կառուցել էր այդ պատկերի համաձայն, և ահա այնտեղ, ուր առաջ մի փոքրիկ գիւղ էր ընկած, փռուել էր եկուորների քաղաքը, որի միասնական անունն էր Գիւմրի։ Այնտեղ հայերը բռնում էին քաղաքի մեծ մասը, իսկ թուրքերն ու յոյները՝ մէկական թաղամաս։ Անցել էին երկար տարիներ, մեռել էին եկուորները, մեռել էին նաև նրանց զաւակները, որոնց յիշողութեան մէջ ելից աշխարհը լոկ տարտամ, մանկական պատկեր էր։ Իսկ թոռները, որ ծնուել էին այդ քաղա-

քում, չունէին նոյնիսկ այդ տարտամ պատկերը։ Նրանք արդէն իսկական գիւմրեցիներ էին։ Նրանք ելից աշխարհի մասին լսել էին լոկ իբրեւ մի հին պատմութեան՝ իրենց չվերադարձող, իրենցից այնքան հեռու, որքան որ հազար ու մէկ գիշերները։ Իսկ նոր զաւակներն ու թոռներն այդ էլ չգիտէին։ Եւ այն, որ նրանք ապրում էին Պոլսին, Էրզրումին և Իզմիրին անսահմանօրէն նմանուող թաղամասերում, ունէին այդ քաղաքների կենցաղն ու սովորոյթները, նրանք չէին գիտակցում և չէին էլ իմանում։

Ռուսները, որ տիրում էին քաղաքին, երբեք չէին կարողացել թափանցել նրա կեանքի խորքերը, չէին կարողացել իրենց գորշ երանգը ներծծել նրա մէջ։ Եւ այն, որ փողոցներում ոստիկաններ կային, իսկ քաղաքի շուրջը փռուած զօրանոցներում կամ բերդում՝ զօրքեր, դա միայն չուգունէ կափարիչ էր, որ դրուած էր կենդանի մարմնի վրայ։ Նրա տակ Գիւմրին ունէր իր սեփական գոյնը, որը և յամառօրէն պահում էր։

Ահա այդ էր պատճառը, որ թուրքական թաղամասում փողոցները ձգւում էին նեղ ու ոլորապտոյտ, և չգիտէիր թէ ո՛ւր էին սկսուել նրանք և ո՛ւր պիտի վերջանային։ Շատ փողոցներում տները երկյարկանի էին, ընդ որում ներքին յարկերը բոլորովին խուլ էին, իսկ լուսամուտներ կային միայն վերեւում։ Վերեւում կային նաեւ սրճագոյն փայտէ պատշգամբներ, որոնք ծածկուած ու փակ էին և ունէին գոյնզգոյն ապակիներով պատուհաններ՝ դէմից ու կողքե՛րից։ Երկու, երբեմն չորս բարակ գերաններ իրենց մի ծայրերով պատի մէջ թեք խըրուած, միւս ծայրերի վրայ պահում էին պատշգամ-

բը։ Պատշգամբների ցածրում, — ոչ անմիջապէս նրանց տակ, այլ կողքին, — դարբասներն էին, ցածր, լայն դարբասներ՝ հաստ տախտակէ փեղկերով, որ ունէին մուգ կարմիր, մուգ կապոյտ, կամ մուգ կանաչ գոյն։ Գորշաքար պատերի վրայ այդ դարբասները երևում էին ամուր ու ծանրանիստ։

Երբեմն փողոցի ոլորապտոյտից յայտնւում էր չադրայի մէջ փաթաթուած մի կին, որ մօտենում էր դռներից մէկին և չխչխկացնում էր վրայի երկաթէ թակը, կամ մի ահագին բանալի էր պտըտեցընում նրա ժանգոտ փականքի մէջ։ Դարբասը կիսաբաց էր լինում, կինը մտնում էր ներս, դարբասը փակւում էր։

Երբեմն տներից մէկից դուրս էր գալիս մի աղջիկ՝ նոյնպէս չադրայի մէջ փաթաթուած։ Նրա ձեռքից կախուած էր լինում մի գլուգլում, երկար ու կեռ խողովակով ջրաման։ Գլուգլումի դուրսը դեղին էր լինում՝ ինչպէս գունատ ոսկի, իսկ ներսը գորշ՝ ինչպէս գունատ արծաթ։ Պատահում էին նաև այլ տեսակի գլուգլումներ, — մուգ բրոնզից՝ ինչպէս եթովպուհու մարմին։ Դրանց վրայ արաբական տառերով փորագրուած էին լինում խօսքեր աղբիւրի, սիրոյ և աշխարհի մասին։

Բայց կային և այլ տեսակի փողոցներ, նման՝ քաղաքի բոլոր միւս փողոցներին։ Դրանք ուղղաձիգ էին ու լայն. շէնքերն այդ փողոցների վրայ միյարկանի էին ու սեւաքար, որ ունէին կարմրաքար քանդակներ։ Իւրաքանչիւր դրան առջև կար սալայատակուած փոքրիկ բարձրութիւն, որի երեք կողմերից բարձրանում էր քարէ ցածլիկ սանդուխքը՝ չորս կամ հինգ աստիճաններով։ Լուսամուտները, որոնք կամարաձեւ էին, ունէին սպիտակ շըր-

ջանակներ և սպիտակ երկաթավանդակներ։ Դռները նոյնպէս կամարաձև էին և նրանց կամարը հանդիսանում էր մի կիսաշրջանաձև լուսամուտ՝ միջանցքը լուսաւորող։ Տեղ-տեղ, ուր լանջը դառնում էր աւելի դիք, այդ շէնքերը կանգնած էին փողոցի միայն մի թևի վրայ և իրենց ներքևի փողոցների տափակ կտուրների վրայով նայում էին դէպի քաղաք։ Երբ վերջալոյս էր լինում և արևի նարնջագոյն ճառագայթներն ընկնում էին այդ շէնքերի ճակատներին, լուսամուտների ապակիները վառւում էին պայծառ, նարնջագոյն բոցով։ Քաղաքի հեռուներից անգամ մարդիկ տեսնում էին այդ, և այդ աւելի գեղեցիկ էր, քան ինքը՝ վերջալոյսը։

Իրենց փոքր, կլոր փափախները դէպի աչքերը թեքած, այդ շէնքերի առջևով անցնում էին թուրքերը։ Մի քանի քայլ այն կողմ, փողոցը նորից մտնում էր տների երկու շարքերի մէջ և նորից փակւում էին ներքևում փռւած թէ՛ տափակ կտուրների, թէ՛ բոսդանների և թէ քաղաքի տեսարանները։ Այժմ շէնքերը կանգնած էին իրար դէմ և նրանց լուսամուտները նայում էին միմեանց։ Սակայն քիչ յետոյ նորից պոկւում էր փողոցի մի թևը, նորից երևում էին տների տափակ կտուրները՝ մի քանի յարկերով իրար տակ, նրանցից ներքև երևում էին բոսդանները և ապա քաղաքը, որ սկսւելով բոսդանների մօտից, տարածւում էր լայն ու հեռու։

Այնտեղ, ուր վերջանում էին բոսդաններն ու նրանց մէջտեղով անցնող ճանապարհը և սկսւում էին քաղաքի փողոցները, հենց այնտեղ՝ առաջին իսկ փողոցում, թուրքական շուկան էր և թուրքերի խանութների շարքերը։ Այնտեղ էին նաև նրանց

աշխանաները, չայխանաներն ու ղայֆախանաները, այնտեղ էին նաև պանդոկները։ Ինչպես քաղաքի մյուս շուկաներում, այնպես էլ այնտեղ, շարունակ խռնուած էին լինում թուրքեր, հայեր, յոյներ։ Նրանք տալիս էին, առնում, թէյում, նարդի էին խաղում և խօսում էին միմեանց հետ այդ երեք լեզուներից որով էլ ցանկանային։ Յատուկ աչք էր հարկաւոր՝ նրանց զանազանելու համար միմեանցից. իսկ զանազանելիս էլ՝ գտնուած տարբերութիւնները լինում էին երկրորդական, անկարևոր, աննշան։ Նրանք բոլորը մի ժողովուրդ էին,— գիւմրեցի արհեստաւորների ժողովուրդը։ Ուստա Մկըրտիչը թուրքերի մօտ «Մկրտիչ ջան» էր, չայչի Ոսմանը՝ հայերի համար «Ոսման ախպէր», իսկ յոյն Աթանասը՝ բոլորի մօտ «անկող Աթօ»։

Սակայն մի թուրք,— Իբրահիմը,— առանց որևէ խորթութիւն մտցնելու ցանկութեան, մի ղայֆախանա էլ բացել էր իրենց թաղամասում, ուր միայն բնակարաններն էին։ Նա այդ արել էր պահանջից դրդուած և այդ հանգամանքը չէր թաքցընում ո՛չ հայերից, ո՛չ յոյներից։

— Է՛, դուք մեզնէն լաւ գիտէք, ախպէրտինք, — բացատրում էր նա նոյն գիւմրեցերէնով,— որ մենք Գիւմրի քաղաքը մզկիթ չունինք։ Վո՞վ իմանայ, մէկ էլ տեսար, մոլլէն կը մանի ղայֆախանա, որ կրօնքից խօսի, եա թէ չէ՝ շարիաթի դէմ գնացող մէ մուսուլմանիմ դատը պիտի կտրենք։ Լաւ կ'եղնի՞, որ ձեզի ըսենք՝ ախպէրտինք, դուս եկէք ղայֆախանից, առանձին գործ ունինք։ Էդոր հըմար էլ մեր մահլէն մէ էդ տեսակ տեղըմ հարկաւոր էր...

Եւ նայում էր Իբրահիմը յանցաւորի նման,

բայց ոչ միայն նա, այլև իր զրուցակից հայերն ու յույներն էին կախում իրենց գլուխները։ Ամաչո՞ւմ էին նրանք, թե՞ լուծումն էին փնտրում այն հարցի, թե այդ ինչի՞ց էր, որ չնայած իրենց այդքան մտերմությանը, այնուամենայնիվ հարկավոր էր առանձին հաւաքատեղի ունենալ, որ անհրաժեշտ էր առանձին թաղամասերում ապրել, որ իրար հետ չէին կարող ամուսնանալ ո՛չ միայն թուրքն ու հայը, այլև յույնն ու հայը, որոնք երկուսն էլ քրիստոնեաներ էին համարւում։ Աւելի՛ն,— իրար հետ չէին կարող ամուսնանալ երկու հայեր, որոնցից մեկը լուսաւորչական էր, իսկ միւսը՝ կաթոլիկ։ Ամաչո՞ւմ էին նրանք, թե՞ լուծումն էին փնտրում այն հարցի. թե այդ ինչի՞ց էր, որ թուրքը չէր ուտում հայի մորթած միսը, հայը՝ թուրքի պատրաստած պանիրը. մինչդեռ նույն թուրքն ու հայը խմում էին նույն սուրճը, ուտում էին նույն լաւաշը։ Այդ ամէնը նրանց տարօրինակ էր թւում, բայց քանի որ նրանք դեռ վաղ մանկութիւնից էին տեսել այդ ամէնը, ապրել ու մեծացել դրանցով, ուստի և թուրքի պանիր ուտելու լոկ միտքը սարսափ էր պատճառում նրանց, իսկ թուրքի հաց չուտելու միտքը՝ ծիծաղ...

Այնտեղ, ուր թուրքական թաղամասը լանջի երկարութեամբ ձգուելով միանում էր յունական թաղամասին և հայկական քաղաքին. գտնւում էր մի բաղնիք, ուր նորից նույն անխտիր խառնութեան շունչն էր։ Բաղնիքն արեւելեան սովորական բաղնիք էր՝ սեւ քարէ պատերով և նույն քարից շինուած երկու մեծ գմբէթներով։ Դուռը տանում էր ուղիղ դէպի քառանկիւնի հանդերձարանը, ուր կենտրոնում, բարձր գմբէթի տակ, սեւաքար

ուղանն էր՝ ջուր յորդող կարմրաքար գուռով, իսկ պատերի տակ բարձր ու լայն թախտեր կային, որոնցից դէպի վեր էին բարձրանում փայտէ սիւներ։ Սիւների արանքում, տախտակէ ցածլիկ միջնորմներով, թախտերը բաժանուած էին առանձին քառակուսիների, ուր հանւում էին միասին բաղանիք եկած կանանց առանձին խմբերը, և դրա մէջ ոչ մի վատ բան չկար։ Վատը և անհեթեթն այն էր, որ դա միայն հայուհիների հանդերձարանն էր, իսկ թրքուհիներն ունէին առանձին հանդերձարան։ Լողարանի դրան դէմ ու դէմ գտնւում էր այդ հանդերձարանի դուռը։ Սենեակը նեղ էր և ձգւում էր երկար՝ դռնից դէպի աջ ու ձախ։ Այնտեղ ուրիշ ոչինչ չկար, բացի պատերի տակ շինուած երկար թախտերից, որոնք մերկ էին ու միապաղաղ և չէին բաժանուած առանձին մասերի։ Սենեակը իր լոյսն ստանում էր ծայրի պատերի լուսամուտներից, բայց չգիտես ինչո՛ւ, երկու հանդերձարանների միջևի պատը դրան երկու կողմերում, համարեա անկիւնների մօտ, ունէր հորիզոնական — լուսամուտաձև երկու բացուածք։ Հայ երեխաներն այս հանդերձարանի թախտի վրայից և թուրք երեխաները՝ միւսից, հանուելիս կամ հագնուելիս, յաճախ նստում էին բացուածքի գոգը և խաղ էին անում միմեանց հետ։ Այդպիսի դէպքերում արագ մօտենում էր մէկն ու մէկի մայրը և իր երեխային հետ էր քաշում։ Քիչ յետոյ, նոյն երեխան, չոքած թախտի վրայ, այդ բացուածքի մօտ և արմունկները նրա գոգին յենած, լուրջ ու մտախոհ նայում էր դէպի այն կողմ, ուր հագնւում էին իր հասակի սևաթոյր աղջիկները։ Նայում և իր մանկական ուղեղում գուցէ արդէն հարց էր տալիս, թէ արդեօք ինչո՞վ

են իրենցից տարբերւում նրանք, ովքեր գտնւում են այդ անիմաստ պատի միւս կողմը…

Այն կողմում մի Թուրք կին երգում էր։ Իսկ այս կողմում, հայ երեխայի տատը՝ հանուելիս՝ քթի տակ ձայնակցում էր նրան և երբ ուժ էր անում բոխչան քանդելու և թասն այնտեղից հանելու համար, նրա երգի անորոշ մրմունջից պոկւում էին նոյն Թուրքերէն բառերը։ Թէ՛ այն և թէ այս կողմում, նոյն փարխաջներն էին,— «գեղին», «փախր» կամ «Թութիա», նոյն փեշտըմալները, նոյն նալընները, նոյն չիբլին-չայը։

Լողարանում նոյնպէս Թրքուհիների համար կար առանձին սենեակ։ Ներս մտնելիս, մեծ լողարանի ձախ պատի վրայ, գտնւում էին երկու դռներ. մէկը գոլորշու սենեակն էր, իսկ միւսը՝ Թրքուհիների լողարանը։ Հանդերձարանից մտնելով մեծ լողարան, Թրքուհիները գլխիկախ գնում էին դէպի իրենց դուռը, չհասկանալով թէ այդ ինչո՞ւ էր այդպէս։ Իսկ հայուհիները, որ նստած էին լինում դռների մօտ կամ կենտրոնի կլոր գէօփակ-դաշու վրայ, նոյնպէս տարակուսում էին և գլուխները կախում։ Վերևից, բարձր գմբէթի քրտնած քարերից, մի սառը կաթիլ ընկնում էր որևէ կնոջ վարդագոյն, լիքը ուսի վրայ և փխլւում. բայց նա, մտքերով տարուած, նոյնիսկ չէր զգում այդ և չէր սրփում։ Եւ այդպէս ապրում էին կողք-կողքի՝ հայերը, Թուրքերը, յոյները, իրար ո՜րքան մօտիկ, բայց և ո՜րքան հեռու…

2

Բաղանների մէջտեղից անցնող ճանապարհով դէպի Թուրքական Թաղամաս էր գնում չադրայի մէջ փաթաթուած մի թրքուհի։ Արեւոտ, չոր կէսօր էր և կինն ըստ երեւոյթին յոգնել էր։ Չադրայի նուրբ ծածկոցի տակ նրա գեղեցիկ մարմնաձեւերը փխրում էին խոնջացած շարժումներով ու միեւնոյն ժամանակ անհանգստութեամբ։ Բայց երբեմն թըւում էր, թէ ճանապարհն ու շոգը չեն նրան տանջողը, այլ մի ուրիշ, ներքին տագնապ։ Անհնար էր թւում, որ նրա գեղեցիկ, ամուր սրունքները յոգնած լինէին, թեկուզ և նա եկած լինէր քաղաքի միւս ծայրից։ Նաեւ անհնար էր թւում, որ նրա ջահէլ, առոյգ կազմուածքը նուաղէր այդ աւելի շուտ հաճելի, քան թէ այրող արեւից։ Իսկ այն, որ նա խմել էր ուզում և շարունակ շուրջն էր նայում՝ աղբիւր գտնելու համար, գալիս էր նոյնպէս ապացուցելու նրա ո՛չ թէ մարմնական, այլ հոգեկան տագնապը, որովհետեւ նա փնտռում էր չափից դուրս խելայեղ, չափից դուրս յուսահատ ձեւով։

Այնտեղ, ուր բաղանների պատերը գալարւում էին նախ մի կողմ, ապա միւս, նա վերջապէս տեսաւ մի սովորական աղբիւր՝ պատի խորանարդաձեւ փոսի մէջ։ Արագ մօտեցաւ և չադրան երեսից յետ տանելով, ձգուեց դէպի խողովակը։ Հազիւ նրա շրթունքները հպել էին փայլուն մետաղին, երբ յանկարծ ջուրը կտրուեց։ Կինը ճչաց և սարսափած յետ քաշուեց։

Նոյն րոպէին աղբիւրի կողքին գտնուող պարտէզի դռնակը բացուեց և մի հայ դուրս եկաւ այնտեղից։

— Ինչի՞ վախեցար, բաջի,— ասաց նա թուրքերէն։ — Ախպուրը ես կարեցի։ Ջուրը դարձուցի՝ բոստանը ջրելու համար։ Ներող եղի, բաջի՛, ես չիտէի, թէ խմող կար։ Հիմի կ՚երթամ, կը բանամ...

— Պէտք չէ,— ասաց Թրքուհին և նոր միայն զգաց, որ իր երեսը բաց է։ Նա արագ վրայ քաշեց չադրան, նրա ծայրերը բռնեց իր նուրբ ձեռքերով և չտապ հեռացաւ։

Բոստանչին մնաց հենց այդպէս կանգնած, Թըրքուհու յետեւից նայելով։ Նրան կայծակնահար էր արել նրա սքանչելի գեղեցկութիւնն ու վախեցած դէմքը։ Նոյն օրը երեկոյեան, նա իր մօտ հրաւիրեց ուստա Մկրտչին և չափից դուրս առատ վարձատրելով նրան, խնդրեց մի նոր ջուր բերել իր համար, որպէս զի նա բոստանը դրանով ջրի, իսկ աղբիւրը դրսում հոսի անընդհատ և յաւիտենական...

3

Թուրքական թաղամասի մի խաղաղ անկիւնում, ուր երեք կողմից երեք խուլ պատեր շրջապատել էին մի փոքրիկ հրապարակ, իսկ չորրորդ կողմից փողոցն էր անցնում, թաղամասի աղբիւրն էր կանգնած մի քանի սաղարթախիտ ծառերի տակ։ Նա ութանկիւնի, սեւաքար մի փոքրիկ գմբէթաւոր շինութիւն էր։ Ի՞նչ կար նրա ներսում, միայն աղբիւրի վարպետը գիտէր։ Իսկ դրսում, ութ պատերից մէկի վրայ՝ աղբիւրի խողովակն էր իր պայծառ ջրով։ Ջուրն այնտեղից հոսում էր մի քարէ գուռի մէջ և նրա անցքով անհետանում։ Աղբիւրի

ճակատին, մի կարմիր քարի վրայ, արաբական, հայկական և յունական տառերով փորագրուած էր ուստա Մկրտչի անունը։ Իսկ միւս եօթ պատերի վրայ գրուած էին եօթ իմաստութիւններ։

Թրքուհիներն աղբիւր էին գալիս թեթևաքայլ ու հանդարտ, կարծես երազի մէջ։ Ջուր լցնելիս չէին խօսում միմեանց հետ, լուրջ էին ու մտասեւեռ։ Եւ աղբիւրը նոյնպէս հոսում էր խաղաղ ու անձայն, վախենալով խախտել համատարած անդորրը։

Թրքուհին, որ աւելի յոգնած էր թւում և աւելի ծարաւ, երևաց փողոցի ծայրում։ Տեսնելով աղբիւրը, նա թեքուեց դէպի այն կողմ։ Երբ մօտեցաւ, կանայք յարգանքով յետ քաշուեցին և մէկը նրան ջրաման առաջարկեց։ Թրքուհին ջրամանը չվերցրեց։ Շրթունքները մօտեցրեց խողովակին, որ խմի, բայց յանկարծ ճչաց ու յետ քաշուեց։

— Ի՞նչ եղաւ, — վախեցան մի քանիսը։ — Ի՞նչ եղաւ, խանում։

Թրքուհին կանգնել էր սպրդնած, դողահար։ Նա անթարթ նայում էր աղբիւրին, որից ջուրը շարունակում էր գալ ա՛յնքան պարզ ու պայծառ։

— Ի՞նչ եղաւ, խանո՛ւմ, — կրկնեց նոյն հարցը մի տարիքոտ թրքուհի, և նրա աչքերում կար ոչ միայն հետաքրքրութիւն, այլև պահանջ։

— Հէ՛չ, ես ուրիշ բան կը մտածէի... Եղոր հըմար էլ, եբ որ աչքս ընկաւ ախպուրի վարպետի անուանը, էնպէս գիտցայ, թէ էնտեղից ընձի աղամարդ աչեց։

Եւ նա մեծ ճիգով փորձեց ժպտալ։

— Մի վախենա, ղարար չկայ, — ասաց տարիքոտ կինը։ — Կրնայ եղնի՝ քէֆըդ ես։

Այս անգամ Թրքուհին ժպտաց անբռնազբօսիկ, բայց մելամաղձոտ.

— Սրտի հիւանդութիւն ունիմ, մենծ բաշի...

— Ըշգը վախենալդ էգուրէն է,— բացատրեց տարիքոտը։ — Հըմը դուն շատ ֆիքր մի էնէ։ Ում սիրտն որ հիւանդ է, էնիկ չեթին բաներ չպիտի մտածէ, կ՚ըսէ չարխաթը...

— Գիտեմ,— հառաչեց Թրքուհին, շնորհակալութիւն յայտնեց և գնաց։

Նրանք, ովքեր ջուր պիտի վերցնէին, և նրանք, ովքեր ջուր վերցրել էին և կարող էին գնալ, նայեցին նրա յետեւից։

— Վո՞վ է,— հարցրեց մէկը։

— Ես մեր բիրադի կնկըտոց գիտեմ, հըմը էգոր հէչ չեմ տեսէ,— ասաց երկրորդը։

— Էգիկ իրեք օր առաջ եկաւ,— բացատրեց տարիքոտ կինը։ — Ես համամ՚ն տուն կու գայի, հանդպաւ Իբրահիմի ղայֆախանեցէն քիչըմ էս Թարաֆն ու հարցուց, թէ կրնա՞յ մեր մահլէն քրեհով օթախ բանէ։ Հեռու տեղից էր եկէ։ Ես մոքէս անցուցի Հաբիբէի տունը։

— Հաբիբէի տո՞ւնը,— վախեցած բացագանչեցին մի քանիսը։

— Հա՛։ Գնացի մոլլի քովը. մոլլա՛, ըսի, էս քանի՞ տարի է, որ Հաբիբէի դուռը փակ է ու մենք կը բաքլայենք էնոր գալուն։ Տասը տարի։ Հըմը ախըր Մեքքա երթըցողն էգքան վախտ չի մնայ էնտեղ։ Ըսել է՝ էնիկ մեռեր է։ Լաւ բան չէ, որ դուռն էսքան վախտ փակ մնայ։ Երեխեքը կը վախենան։ Մեր կնկըտիք հնարել են, թէ Հաբիբէն գողտուց յետ է դարձէ ու մէ տարեցէն աւելի է, որ գողտուց կ՚ապրի իրան տունը։ Եանի թէ գիշերներն էնոր

դրան ետեւէն ձէն կուգայ։ Բանալ է հարկաւոր...

— Հաբիբէի տո՞ւնը,— բացագանչեցին կանայք։

— Հա՛, Հաբիբէի տունը։ Բրեհը կը բաժանենք, եւ կը հաւաքենք ու էգով մէկիմ Մեքքա կը ղըրկենք։ Համ ուխտ կ՚ընէ, համ էլ,— վո՞վ գիտէ,— գուցցէ Հաբիբէին կը գանի ու յետ կը բերէ... Մոլլէն ռաղի եղաւ։

— Ռաղի՞ եղաւ մոլլէն։

— Ռաղի եղաւ։ Էդ կնիկը հիմի էնտեղ կ՚ապրի։

Գիւղխումն ընկաւ մէկի ձեռքից և ջուրը թափուեց։ Բոլորը քարացան։ Մէկը միայն հազիւ շշնջեց.

— Ալլահի դէմ գործ է։ Թէ որ խեղճ կնիկն իմանայ իրան տան պատմութիւնը, լեղին կը պատըռի։ Ինքն էլ էնքան վախլուկ...

— Իմացաւ։ Խնդաց։

— Խնդա՞ց։

— Հա՛։ Հանաք էրաւ։ Կ՚ըսէ՝ օղորթ է, Հաբիբէն յետ է եկէ։ Հաբիբէն ես եմ։ Ալլահն իմ ուխտ կատարել է...

— Իգիթ կնիկ է,— բացագանչեց մէկը։

— Քանի՞ տարեկան կ՚եղնի,— հարցրեց միւսը։

— Եառընհնգից եառընվեց,— ենթադրեց տարիքոտ կինը։

— Անունն ի՞նչ է։

— Էլի Հաբիբէ։

4

Բոլորովին խուլ պատի վրայ մշտապէս փակ էր այն փոքրիկ, բայց ամուր դարբասը։ Այնպէս էր թւում, որ այն երբեք չէր կարող բացուել։ Այնպէս էր թւում, որ եթէ բացուէր էլ, նրա յետեւում ոչինչ չէր գտնուելու, բացի նոյն խուլ պատից։ Երբ

մի ժամանակ փոքրիկ երեխաները պատահաբար այդ փողոցից անցնելիս, զուարճութեան համար չխչխկացնում էին դարբասի թակը, հարուածների ձայները տարածւում էին շատ խուլ՝ ինչպէս մամռապատ ջրի մէջ նետած քարերի ձայներ։ Երեխաները վախենում էին դրանից և երկրորդ անգամ այլևս ձեռք չէին վերցնում։

Ինչպէս երեխաները, այնպէս էլ մեծերը, առաջուայ նման դեռ այժմ էլ շարունակում էին խուսափել այդ տանը մօտենալուց։ Իսկ այն, որ հիմա այնտեղ ապրում էր Ջանէլ Հաբիբյան, ոչինչ չէր փոխել։ Նա նոյնքան փակ ու խորհրդաւոր կեանք էր վարում, որքան և անցեալում իր նախորդը։ Ոչ ոք չգիտէր, թէ ե՞րբ էր նա դուրս գնում, ո՞ւր էր գնում. ոչ ոք չէր կարող ասել, թէ ե՞րբ էր նա տանը, կամ ե՞րբ էր բացակայում։

Ճիշդ է, այդ ամէնն այլևս չէին վախեցնում մարդկանց և իհարկէ վախը չէր խուսափելու պատճառը։ Այժմ բնակիչները խուսափում էին Հաբիբայի տնից լոկ այն պատճառով, որ այնտեղ բնակուող թրքուհին անմատչելի էր իրենց համար։ Անմատչելի էր նրա կեանքը, նրա գաղտնիքը, նրա գեղեցկութիւնը։ Թէ՛ կանայք և թէ մանաւանդ տղամարդիկ այրւում էին հետաքրքրութիւնից, բայց ապարդիւն էին գտնում որևէ բանի ձեռնարկել։ Միակ բանը, որ գիտէին նրանք, վերաբերում էր բնակարանին։ Դուրս էր գալիս, որ պառաւ Հաբիբյան հարուստ կին էր եղել և թողել էր ընտիր կահ-կարասի, զարդեր, հագուստեղէն։ Ո՞վ էր եղել նա և ե՞րբ էր եկել Գիւմրի, ոչ ոք չէր կարող ասել, քանի որ թաղամասի ամենածեր բնակիչը եղել էր հենց ինքը։ Հայրերից մնացած մի աւանդութիւն էր

պտըտւում մարդկանց մէջ, որ իբր թէ Հաբիբան եղել էր մի հարուստ հնդիկի այրի և ո՞վ գիտէ ինչ հեռուներից եկել էր այդ քաղաքը՝ իր վերջին օրերն այդտեղ անցկացնելու։ Մոլլան Ջահէլ Թրքուհուն պատմել էր այդ աւանդութիւնը, որ նրան շատ դուր էր եկել։ Նա միանգամից գնել էր Հաբիբայի տան ողջ սարքուկարգը և արդուզարդը, որով պարզուել էր, որ նա եւս իր նախորդի նման հարուստ էր։

Այդքանը միայն։

Եւ նորից խուլ էր պատը՝ և նորից փակ էր դարբասը։ Այդ փողոցը, որ շատ կարճ էր և իր երկու ծայրերում կտրւում էր երկու այլ փողոցներով, չարունակ ամայի էր, քանի որ ուրիշ ոչ մի բնակարանի դուռ չէր բացւում այդտեղ։

Բայց ահա արագ քայլերով այդ փողոցը մտաւ մի մարդ։ Թէեւ նա փափախ էր դրել, բայց իսկոյն երեւում էր, որ հայ է։ Եթէ նա ցանկացել էր Թուրքական այդ գլխարկով իր ազգութիւնը թաքցընել, ապա բոլորովին իզուր։ Իսկ եթէ նա այդ արել էր գեղեցկութեան համար, ուրեմն ճիշդ էր վարուել։ Նրա շատ երիտասարդ և շատ դուրեկան դէմքի հետ փափախը սազում էր զարմանալի լաւ։

Նա մտաւ փողոց, կանգ առաւ մի րոպէ, ձեւացրած անտարբերութեամբ նայեց դէս ու դէն, ապա ոչ ոքի չնկատելով, շտապ մօտեցաւ Հաբիբայի դրանը և չորս անգամ թակեց։ Սպասեց մի վայրկեան, ապա նորից չորս անգամ թակեց։ Դուռը կիսաբաց եղաւ, երիտասարդը մտաւ ներս. դուռը փակուեց։

5

Երիտասարդն իրեն զգաց լիակատար մթութեան մէջ. Այն դարբասը, որից նա հենց նոր ներս էր մտել, արդէն խուլ կերպով փակուած էր և նրա շատ նեղ մի քանի ճեղքերից միայն մի քանի արեւային երիզներ էին ներս ընկել՝ առանց լուսաւորելու որևէ բան։ Թւում էր, թէ դրանք նուրբ ոսկեթելեր էին՝ մթութեան մէջ կախուած։

— Ինչը՞ղ գտար տունը, ազիզ ջան,— վախեցած շշունջով հարցրեց Թրքուհին։ Նա խօսում էր հայերէն և խօսում էր նոյնքան լաւ, որքան և թուրքերէն։

— Քու անուշ հոտովը գտայ, անո՛ւշ ջան. քու ամուր քաշելովդ գտայ, քաշո՛ղ ջան...

— Չէ, դուն ըսա, թէ ինչը՞ղ գտար տունը։

— Աչքերս խփի՝ սէրդ ընձի բերեց։ Անկջներս խփի՝ ձէնդ ընձի բերեց...

— Չէ, չէ, դուն ըսա, թէ ինչը՞ղ գտար տունը։

— Ինչը՞ղ չգտնէի։ Քու քաղցր լեզուի նկարագրութենով գտայ։ Դուն որ ըսիր՝ մեր գաղտնիքի նման խուլ տունըմ է, էգիկ ընձի հերիք էր։

Նոյն րոպէին դարբասի թակն ուժեղ չխչխկաց մի քանի անգամ։ Թրքուհին վախեցած ճիչ արձակեց և կպաւ տղային։ Տղան ամուր բռնեց նրան, իսկ յետոյ նետուեց դէպի դարբասը։ Բայց բաց անելու հարկ չեղաւ։ Թակողը երեխաներ էին, որոնք թակի հնչիւններից վախեցած, շտապեցին հեռանալ՝ ձայն տալով մէկ-մէկու։

— Զուր տեղը վախեցար, ազիզ...

— Շատ կը վախենամ, ազիզ... Քիչըմ առաջ, ճամբուն ծարուըցայ։ Մօտեցայ ախպըրին՝ ջուր

խմելու,— ախպուրը ցամքաւ։ Մեր բանած գործն Ասսու սրտովը չէ։

— Մի մտածէ, անուշ ջան։ Դատարկ բան է։

Թրքուհին ձայն չհանեց։

— Երթանք նես,— ասաց երիտասարդը ժպտացող ձայնով.— տեսնինք մեր սիրու տուտը...

Թրքուհին նորից ձայն չհանեց։

— Երթանք.— կրկնեց երիտասարդը։

— Չերթանք, անուշ ջան...

Եւ Թրքուհին բռնեց նրա ձեռքը.

— Չերթանք, աղիզ։ Ես կը վախենամ... Գէշ բան կ'եղնի...

— Ի՞նչ գէշ բան եղնի,— բացագանչեց տղան։ — Ես կայնած եմ քեզի հըմար։ Վո՞վ կրնայ բան էնէ։ Երթանք...

— Ես մարդոցից էնքան չեմ վախենայ։ Ես Ասսուց կը վախենամ։ Վո՞վ է տեսէ, որ մարդ ունեցող կնիկը սիրական պահէ...

Երիտասարդը պատասխանելու փոխարէն վերցըրեց նրան իր թեւերի վրայ, սեղմեց կրծքին ու մթութեան մէջ խարխափելով՝ փորձեց դուռը գըտնել։ Երկու անգամ նրա ձեռքը կպաւ դարբասին։ Ո՛չ, այդ չէր հարկաւոր։ Իսկ կողքի պատերը, որոնց վրայ նա փնտռեց սենեակի մուտքը, խոնաւ էին ու խուլ։

— Ո՞ւրտեղ է դուռը։

Կինը սարսափից կարկամած՝ փորձեց ազատուիլ նրա գրկից։

— Ո՞ւրտեղ է դուռը, աղիզ...

— Չիտեմ, մի հարցնէ...

Դիմացի պատի վրայ տղայի ձեռքը երկաթէ մի ունկ շօշափեց։ Տղան քաշեց այն։ Բացուեց փողոցի

դարբասին յար և նման մի դարբաս և տղան զարմացաւ անսպասելիութիւնից։ Այնտեղ, ուր նա ենթադրում էր տեսնել սենեակ, տեսաւ տան պարտէզը։

Մի փոքրիկ, քառակուսի բակ էր այն։ Չորս պատերի տակ կային սպիտակաքար մայթեր։ Կենտրոնում ամբողջովին, մայթերի պռունգներից սկսած, բուսել էին ոչ բարձրահասակ, բայց սաղարթախիտ ծառեր։ Նրանց ճիւղերն այնպէս էին գրկել մէկ-մէկու, որ ամբողջ բակի վրայ գոյացել էր կարծես կիսաթափանց կանաչ ապակուց ծածկոց։ Տաս տարուայ ընթացքում թափուած տերևները, կորցրած իրենց գոյնը և հողի երանգ առած, հաստ ու փափուկ գորգի պէս ծածկել էին ողջ գետինը։ Նրանք փռուել էին նաև մայթերի վրայ, որոնց վերևում ևս ծառերն իրենց կանաչ ճիւղերն էին տարածել, թէև ոչ այնքան խիտ.— արևի պայծառ, խոշոր պատառներն ընկել էին մայթերին և կարծես աւելի էին շեշտում պարտէզի կանաչաւուն կիսախաւարը։

Պարտէզի կենտրոնում քառակուսի մի աւազան կար, որի մէջտեղի գուռից բուխ յորդում էր ջուրը։ Ըստ երևոյթին նա փակ էր եղել և միայն թրքուհին էր բացել այն, քանի որ ջուրն աւազանում թարմ էր և չմամռակալած։ Աւազանի շուրջը նկատւում էին ծաղիկների մարգերի հետքեր՝ նոյնպէս ծածկուած մեռած տերևներով։

Բնակարանը բռնում էր դիմացի ողջ պատը, որ զուարթ նարնջագոյն աղիւսից էր։ Նրա կենտրոնում, կամարակապ խորութեան մէջ, դուռն էր, դէպի որը բարձրանում էին քարէ մի քանի աստիճաններ։ Դրան մի կողմում կային սպիտակ շրջանակներով երեք լուսամուտներ, իսկ միւս կողմում

համարեա ողջ պատը բռնել էր մի քառակուսի մեծ շրջանակ՝ անթիւ մանր ու մեծ գոյնզգոյն ապակիներով։

Բակի միւս պատերը եւս զուարթ նարնջագոյն աղիւսից էին։ Կողքերի պատերի վրայ օժանդակ սենեակներն էին նեղ դռներով, իսկ դիմացի պատը դարբասի երկու կողմերում ունէր սպիտակ սուաղած, սրածայր կամարաձեւ երեքական որմախորշեր՝ եռեւի տափակ պատերով։ Այդ որմախորշերում դրուած էին վեց հիանալի, մեծ սափորներ՝ տարբեր ձեւի, բայց բոլորի էլ բրոնզը նախշուած արաբական տառերով ու նկարներով։

— Սաղ Գիւմրին էլ որ տաս կայնի,— բացագանչեց տղան,— էլի չպիտի կրնընայ մեր սիրու- տունը դանի, անո՛ւշ։ Հէչ մի վախենա։

Թրքուհին փաթաթուեց նրա վզով։ Տղան իր գրկից ցած չթողնելով նրան՝ քայլեց դէպի բնակարանի դուռը։

6

Ամբողջ յատակը ծածկուած էր գորգերով։ Երեք պատերը, մինչեւ իրենց բարձրութեան կէսը, նոյնպէս ծածկուած էին գորգերով. իսկ գորգերից մինչեւ առաստաղ, պատերի վրայ կային նուրբ մանրանկարներ, որոնք տեղ-տեղ ընդհատւում էին սպիտակ սվաղուած, սրածայր կամարաձեւ որմախորշերով։ Ինչպէս պարտիզում, այնպէս և այստեղ, որմախորշերում շարուած էին սափորներ, բայց աւելի փոքր և ոչ միայն բրոնզից, այլեւ գունազարդուած կաւից, ճենապակուց, պղնձից։

Դիմացի պատն ամբողջովին՝ բազմագոյն անթիւ ապակիներով զարդարուած շրջանակն էր։ Նրա վրայ

կային հազար ու մի տեսակ օղակաձեւեր, աստղաձեւեր, արեւնաձեւեր, ծաղկաձեւեր, բաղկացած մանր ու մեծ ապակիների խայտաբղէտ ներդաշնակութիւնից։ Այնքան բազմազան ու բազմագոյն էին ապակիները և նրանց շրջանակներն այնքան նուրբ, որ թւում էր, թէ այդ ամբողջ պատը ձեռքով նկարուած մի հիանալի մանրանկար էր, ուր վառուող գոյները պայծառ ներկեր էին և ոչ թէ արեւի լոյսը։

Առաստաղի չորս անկիւններում կային ուռուցիկ քանդակներ, բաղկացած բազմաթիւ մանր եռանկիւնիներից, որոնք ծածկուած էին հայելու փոքրիկ կտորներով։ Հայելու նոյնպիսի կտորներով էր ծածկուած նաեւ կենտրոնը, որից կախուած էր բրոնզէ մի մեծ ջահ։

Թէ՛ շրջանակի, թէ՛ գորգերի և թէ պատերի հէքիաթական մանրանկարն այդ բեկբեկուն հայելիների մէջ արտացոլւում էր ամենաանհնար ձեւերով ու երանգներով։ Սենեակի խորքում, գորգերից մէկի վրայ թեք ընկած և թեւն ասեղնագործ մետաքսէ մի բարձի յենած՝ այդ հայելիներին էր նայում երիտասարդը։ Նրա մօտ, ամօթից շառագունած և աւելի գեղեցկացած, նստել էր Թրքուհին։ Նրանք մտածում էին՝ իրենք էլ չգիտենալով, թէ ինչի՛ մասին։ Դա չմտածելու էր նման։ Տղան նայում էր ջահին, որի վրայ մոմերը չէին վառուել ահա տասը տարի։ Կինը խոնարհել էր իր գլուխը և նայում էր գորգի անիմանալի նկարներին։ Եւ յանկարծ տղան նայեց դէպի լուսամուտը և բազմաբղէտ լոյսն արտացոլուեց նրա աչքերում։ Նա առանց նայելու ձեռքը դրեց կնոջ ձեռքին և շշնջեց.

— Ես կ'խաղկեմ այդին տասը տարուայ մե-

ուած տերեւներէն, աղջի՛կ. Թող ուրախ եղնի մեր սիրու տունը։ Ես կը նորոգեմ մարգերն ու նորից ծաղիկներ կը ցանեմ էնտեղ, աղջի՛կ. Թող զուարթ եղնի մեր սիրու տունը։ Ես կը ; նօսըրցնեմ ծառերու ճիւղքերն արեւի հըմար, աղջի՛կ. Թող պայծառ եղնի մեր սիրու տունը...

— Հարկաւոր չէ, աղջի՛կ։ Ձկամեցողը երգիք կ'ըլնի, էնտից քեզի կը նկատէ։ Թող էսպէս մնայ։

— Ես ծառի ու ծաղկի ուստա կը կանչեմ, զարդարել կուտամ այգին։ Թող մեր սէրը լաւ անցնի ու լաւի մէջ անցնի։

— Հարկաւոր չէ, աղջի՛կ։ Ատանց էն էլ դուն շատ ես մոխէ։ Ընչի՞ հըմար։ Ես տասը տարով քեզնէն մենծ եմ։ Դուն ջահէլ տղայ ես, դուն ընձի շուտ մոռնան կ'էնես... Էսքանն էլ որ էրիր ընձի հըմար՝ էսքանն էլ հերիք է...

Երիտասարդը ձեռքով փակեց նրա բերանը, որ նա այլեւս չշարունակի, ապա գրկեց նրան և նայեց նրա մաքուր, սպիտակ ճակատին.

— Դուն տասը երկնքով ընձնէն բանձր ես, անո՛ւշ։ Տասը տերեւ բացած ծաղիկ ես դուն։ Տասը գարուն տեսած աղունիկ ես դուն...

Թուաց, թէ այդ ջահէլ տղան մի մեծ տղամարդ էր, իսկ այդ փարթամ ու լիքը կինը մի փոքրիկ երեխայ։ Թուաց, թէ ուրիշ ոչինչ չպիտի մտնէր սիրոյ այդ տունը, բայց յանկարծ կինը տագնապով դուրս պրծաւ տղայի գրկից, ձեռքը դրեց սրտին և մրմնջաց.

— Գէշ բան պիտի եղնի, աղջի՛կ։ Սիրտս անհանգիստ է։ Մեր սէրը երկար տեւել չի կրնայ։ Կնիկ արարածն էսքան երջանիկ ըլնելու իրաւունք չունի...

— Մի խօսի, մի ըսէ։

— Դուն պզտիկ ես, դուն չիտես։ Գէշ բան պիտի եղնի, հոգի՛։

Տղան մռայլուեց։ Նա մազերի գանգուրը յետ տարաւ ճակատից, նայեց ջահի հանգած մոմերին ու շշնջեց.

— Ընչի՞ մեր սէրը հալածուած ջէյրանի պէս էս տունը մտնէր... Ընչի՞ ամչնայինք մարդոցից ու աշխըրքից։ Ընչի՞, ախըր ընչի՞...

Կնոջ աչքերը թրջուեցին արցունքով։ Տղան շարունակեց.

— Աշխարքը կը թքէ մարդուց բաժնուող կնկայ երեսին։ Աշխարքը կը թքէ էդ կնկան առնող մարդու երեսին։ Մենք իրաւունք չունինք իրար հասնելու։ Մեր սէրը գողութիւն է...

— Ընչի՞, ախըր ընչի՞...

...

7

Քաղաքի հեռուներից հասան եկեղեցիների զանգերի ձայները։ Կինը ցնցուեց։

— Գնա՛, հոգի, գնա՛։ Հիմի բոլոր տղամարդիկ բազարից տուն կու գան։ Էնոնք չպիտի նկատեն չէ թէ իմ տնէս դուս գալդ, նաև էս մահլից երթալդ։ Դուն ձախ կողմի աւիրակ փողոցով իջի դէպի բոստընները։ Էդ աւիրակ փողոցն էս վախտ մարդ չի եղնի։

— Կ'երթամ, հոգի, կ'երթամ...

— Չէ, հիմի գնա, աղի՛զ։ Ախըր ես էլ պիտի երթամ, ուշ է։ Խօ գիշերն էստեղ չե՞մ մնայ...

Տղան վեր կացաւ, կապեց գօտին, դրեց փափախը։

— Մէկ էլ ե՞բ կու գաս, անո՛ւշ, — դիմեց նա կնոջը։

— Կիրակի օրը։

— Որ ես մեռնի՞մ մինչի Կիրակի, անգո՛ւթ։ Գոնէ Ուրբաթ օրը։

— Ուրբա՞թ, — ժպտաց կինը։ — Թուրքի Կիրակի՞ն։ Բոլոր տղամարդիկ էդ օրն իրանց տները կ'եղնին։ Դուն ինչը՞ղ պիտի գաս։

— Գոնէ Շաբաթ օրը։

— Չէ, աղի՛զ, չի եղնի։ Որ չուտ-չուտ գամ, մեր տնեցիք կը նկատեն։ Որ չուտ-չուտ գամ, աշխարքը մեզի չուտ կը բաժանէ իրարուց...

Տղան գլխիկոր դուրս ելաւ և թրքուհին էլ նրա հետ։ Երկու դարբասների մութ միջանցքում տղան նորից համբուրեց նրան և փողոցի դարբասի փակը յետ քաշեց։ Թրքուհին գլուխը դուրս հանեց, նայեց աջ ու ձախ։

— Մարդ չկայ։ Գնա։ Դէպի ձախ կողմի աւիրակ փողոցը...

Նրա գնալուց յետոյ՝ կինը մօտ քառորդ ժամ սպասեց այդտեղ, ապա ինքն էլ դուրս ելաւ, մի մեծ բանալիով դարբասը կողպեց և նոյնպէս ձախ կողմի փողոցով իջաւ դէպի բոստանների միջով անցնող սովորական ճանապարհը։

Նրան ոչ ոք չնկատեց։

8

Քաղաքի փողոցներում վերջալոյս էր։

Իրենց տների մօտ դրուած քարերի վրայ նըստել էին հասակաւոր գիւմրուհիները և գուլպայ էին գործում։ Մատների մեքենայական շարժումով ճաղերն աշխատեցնելով, նրանք նայում էին անցնող-դարձողներին կամ նայում էին պարզապէս դէպի

փողոցի մի ծայրը, որը գնում էր ուղիղ և շատ հեռուում ընդհատվում արձակ դաշտում։ Այն փողոցները, որոնք հյուսիս-հարավ էին ձգված, արդեն գտնվում էին աղջամուղջի մեջ։ Միայն խաչաձևող փողոցների անկյուններն էին լուսավորվել ոսկե եռանկյունիներով, ցույց տալով, որ արևմուտքից-արևելք ձգված փողոցները դեռ ողողված էին արևի վերջին լույսով։ Ո՜րքան պայծառ էր երևում արևի վերջին լույսն այդ գրոհող ստվերի մեջ, ո՜րքան համառ էին կառչել ճիգից կարմրած դեղին ճառագայթներն ապակիներին, պատերին և բարդիների գագաթներին։ Արևում նստած գիմբուհիները նույնպես թվում էին վերջալուսային էակներ, և այնպես էր թվում, թե մարող-հանգչող շողերի հետ կը լուծվեն, կը չքանան նաև նրանք և դռների առջև դրված քարերի վրայ այլևս ոչ ոք չի լինի. քարերը կը մնան դատարկ։

Ձեռների ջերմությունից տաքացած ճաղերը շարժվում էին արագ ու վարժ, կարճափող բրդէ գուլպաներն աճում-երկարում էին դանդաղ, աննկատելի։ Երբ փողոցով փչում-անցնում էր աննկատելի մի հով, ճաղերը սառչում էին կանանց ձեռքերում և կարծես կարծրանում։

Կանանց կողքին նստել էին երեխաները՝ խելօք, ուշադիր, կարծես վերջալույսի պահից տագնապած։ Գիմբուհիները, ուշադրությունն արդեն դէպի գործվող գուլպան, շրթունքների մեքենայական շարժումով պատմում էին երեխաներին հին պատմություններ, ավանդում էին հռչակավոր գիմբեցիների կյանքն ու վարքը։

Պատմում էին, օրինակ, մի գիմբեցու մասին, որն իր տունը կառուցելիս՝ հիմքի չորս ան-

կլուններում գրել էր ուրագ, օղի, մատանի և խաչ։ Պատմում էին մի այլ գիւմրեցու մասին, որը քառասուն տարի շարունակ ապրել էր մի մեռած աղջկայ սիրով և այդպես էլ մեռել։ Եւ պատմում էին մի գիւմրեցու մասին, որը յաւիտեան շրջում էր իր պատանն ուսի վրայ գցած՝ մտախոհ ու յամրաքայլ։ Եւ պատմում էին մի գիւմրեցու մասին, որ վաղուց ի վեր պատրաստել էր տուել իր գերեզմանաքարը։ Եւ պատմում էին մի գիւմրեցու մասին, որ եղել էր քաղաքի ամենաբարձր եկեղեցու խաչն ամրացնողը, որի համար ստացել էր «արդար» կոչումը։ Եւ պատմում էին մի գիւմրեցու մասին, որ բազմաթիւ անգամներ մերձ ի մահ ընկած, հագուել էր մի կերպ, դուրս էր եկել տանից, գնացել էր օղետուն, խմել էր խեղդուելու չափ ու վերադարձել բոլորովին առողջ։ Եւ պատմում էին մի գիւմրեցու մասին, որի եղբայրն աքսորուած էր և որը երեսուն տարի շարունակ, ամէն երեկոյ, սեղան էր պատրաստում, վառում էր տան բոլոր լամպերը, գնում էր կայարան՝ եղբօրը դիմաւորելու և վերադառնում էր մենակ։ Եւ պատմում էին մի գիւմրեցու մասին, որը եղել էր նշանաւոր որմնադիր և ստեղծել էր համատարած հռչակ։ Թագաւորը Գիւմրի այցելելիս, հիացել էր նրա պատերով ու ցանկացել էր նրան տեսնել, բայց երբ գնացել էին նրա ետեւից, նա եղել էր սարսափելի հարբած ու քնած։ Ու վերադարձել էր Թագաւորը, իսկ բախտն ու երջանկութիւնը անցել էին վարպետի մօտով՝ առանց նրան դիպչելու...

Պատմութեան այդ կէտում, կանայք նկատում էին շուկայից տուն վերադարձող իրենց ամուսիններին կամ տղաներին և վեր էին կենում նստած

տեղերից։ Երբ տղամարդիկ մօտենում էին ու բարի երեկոյ մաղթում, նրանք պատասխանում էին բարեւին և նրանց յետեւից մտնելով տուն՝ դուռը փակում։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1.

Բոստանչին, որի աղբիւրն այժմ հոսում էր անընդհատ ու միշտ, նստել էր փողոցում, իր դարբասի մօտ և նայում էր անցնող մարդկանց։ Պայծառ կիրակի էր, և հեռաւոր գիւղերից շատ սայլեր ու գիւղացիներ գալիս-անցնում էին դէպի շուկայ, իսկ քաղաքից դէպի գերեզմաննոց էին գնում սեւ հագած կանանց խմբեր։ Նայում էր բոստանչին բոլոր նրանց,— և՛ եկողներին և՛ գնացողներին,— բայց ըստ երեւոյթին նրան ոչինչ չէր հետաքրքրում, նրա միտքը ոչ ոք չէր զբաղեցնում։

Կիրակի օրով ինչո՞ւ էր մնացել նա այդտեղ։ Չէ՞ որ նա կարող էր գնալ քաղաք, ուր իրենց փակ խանութների դռների մօտ հաւաքուած կամ ղայֆախանաներում նստած՝ զրոյց էին անում իր ծանօթ արհեստաւորները։ Նա կարող էր գնալ քաղաքի հիւսիսում գտնուող Ջիթողցոնց Զաքոր զբօսավայրը, ուր կիրակի օրերը շատ ժողովուրդ էր լինում։

Նա կարող էր գնալ նուիրական Արփաչայի ափը, ուր հովասուն ծառերի տակ քէֆ էին անում իր հասակակից արհեստաւորները և լողանում էին գեղեցկամարմին մատղաշ տղաները։ Վերջապէս նա կարող էր գնալ տուն, ուր իր ընտանիքն իրեն էր սպասում: Բայց չէր գնում, և նրա ճակատը մռայլ էր։ Ըստ երևոյթին նա ծանր մտքեր ունէր և ուզում էր մենակ մնալ։

Քաղաքի կողմից մահուան Թափօր երևաց։ Ժողովուրդը, բոստանների զոյգ պատերի միջև սեղմուած, դանդաղաքայլ առաջ էր գալիս և բերում էր մի թանկարժէք դագաղ։ Թափօրի առջևից գալիս էին եօթ քահանաներ՝ կարմիր և դեղին շուրջառներով, որոնց վրայ մէջ ընդ մէջ գործուած էին ոսկեթել նախշեր։ Երկու տիրացուներ բուրվառում էին, շատ այլ տիրացուներ բերում էին խաչվառներ, կրօնական զանազան նկարներ։

Բոստանչին ուշադրութեամբ նայեց այն կողմ և փորձեց յիշել, թէ ո՞վ պիտի լինէր արդեօք այդ հարուստ մեռելը։ Երբ յիշեց, արհամարհանքով շարունակեց նստած մնալ և չափխան նոյնիսկ չհանեց գլխից։ Գլխաւոր քահանան, որ միւս քահանաների հետ սաղմոս էր երգում, աչքերը չռեց դէպի բոստանչին և աւելի բարձր երգեց։ Կողքից գնացող տիրացուն բուրվառեց դէպի նա և բարկացած առաջ անցաւ։ Բոստանչին ոչ մէկի վրայ ուշադրութիւն չդարձրեց։ Իսկ երբ նրա մօտով անցաւ դագաղը, նա բարձրաձայն յօրանջեց և «փառք Աստու» ասաց, ինչպէս ասում են բոլոր յօրանջողները։

Դագաղի յետևից գալիս էին լացող տիկիններ՝ վուալներով ու մինչև արմուկները հասնող ձեռնոցներով, գալիս էին փողպատաւոր պարոններ՝

շլեապաներ դրած։ Նրանց յետեւից գալիս էին գործակատարներ և ընդհանրապէս հասարակ ժողովուրդ։ Թափօրի յետեւից գալիս էին մուրացկաններ՝ չդաբաղած կաշիէ տոպրակները թելերով մէջքներից քաշ արած։ Իսկ ամէնքից վերջում զոյգ-զոյգ գալիս էին բազմաթիւ կառքեր։

Երբ կառքերի առաջին զոյգը հաւասարուեց բոստանչուն, նա աթոռից վեր կացաւ և բղաւեց մուրացկանների յետեւից.

— Մելքո՛ն, Աւետի՛ս, Առաքե՛լ հայրիկ...

Մի ծեր և երկու խեղանդամ յետ նայեցին։

— Ձեզի հետ եմ։ Էն ախպօրս էլ իմաց տուէք։ Էն քուրոջս էլ։ Ետ դարձէք՝ եկէք, բան պիտի ըսեմ։

Մուրացկանները մօտեցան և բարեւեցին։

— Ամօթ չէ՞, ախպէրտինք։ Մարդ էլ էդոնց դագաղի ետեւէն կ'երթա՞յ...

— Ի՞նչ ընենք, Երանո՛ս ախպէր,— արդարացաւ երկու աչքով կոյր ու ծաղկատար մի ջահէլ տղայ։ — Ուրախութեան օրը մեզի մտահան կ'ընեն, կ'ըսենք՝ գոնեա սգի վախտը մտքերն ընկնինք։

— Հաստատ որ ջահէլ ես,— ժպտաց բոստանչին։ — Տէ՛, ախպէրտինք, էսօր դուք իմ ղոնախս էք։ Մտէք ներս, քաղէք ինչ որ սրտերդ կ'ուզէ։ Ում տոպրակն որ լիքը լեցուած չեղաւ, դուս չեմ թողնէ։

Աստած քեզի երկան արեւ տայ, Երանո՛ս որդի,— օրհնեց ծերը։ — Ջուխտ ապրիս... Մէ բարձի ծերենաս...

Բոստանչին ծանր հառաչեց.

— Էդպէս մի ըսէ, հայրի՛կ։ Դուն էլ, քոյրի՛կ, էդպէս մի ըսէ։ Դուք ամմէնքդ ձեր արդար բերնով մէ-մէ բերան Աստուն աղաչէք, որ մուրազս կատարէ։ Ուրիշ բան չեմ ուզէ։ Տէ՛, մտէք ներս...

Մուրացկանները մտան բոստան, իսկ Երանոսը մնաց նորից իր տեղում կանգնած, աչքերը դէպի գետին խոնարհած։ Փողոցի դեղնաւուն փոշու մէջ խորը խրուել էին բազմաթիւ մարդկանց ու ձիերի խառն ի խուռն ոտնահետքերը։ Եւ յանկարծ այդ փոշու վրայ ընկաւ արագ առաջացող մի ստուեր։ Երանոսը ճանաչեց ստուերը, ցնցուեց և նայեց վեր։ Գալիս էր Թրքուհին։

— Բաջի՜...

Եւ Երանոսը կտրեց նրա առաջը։

Թրքուհին, չադրայի մէջ խուլ կերպով փաթաթուած, կտրուկ կանգ առաւ, ապա նոյն վայրկեանին արագ ու բարկացած շարժումով առաջ անցաւ։ Հոգեպէս ջախջախուած՝ Երանոս վերադարձաւ դէպի պատը և փլուեց աթոռի վրայ։

Քիչ յետոյ պարտէզի դռնակը բացուեց և մուրացկանները դուրս ելան։

— Ձեզի չըսի՞ որ տոպրըկներդ լիքը լցնէք։

— Լաւ, Երանոս ախպէր, ըպը նամո՞ւսն ինչ կ'ըսէ։ Մենք շնորհակալ ենք քեզնէն։ Էսքանն էլ մեզի շատ շատ է։ Աստուած թող...

— Ես էլ եմ շնորհակալ. բարով երթաք։ Հըմը Աստուած, կ'երեւնայ, վրէս շատ է հերսոտէ։ Ջուր տեղը միք օրշնէ։

Մուրացկանները տարակուսած նայեցին միմեանց և դանդաղաքայլ հեռացան դէպի քաղաք։

2

Շուկայի փակ խանութների առջեւից, լուրջ ու մտասեւեռ՝ անցնում էր բարձրահասակ ուստա Մկրտիչը։ Նա իր կապոյտ կաստոր չափխան թեքել

էր դէպի ծածրակը, բաց անելով իր լայն ճակատը։ Խանութների մօտ հաւաքուած մարդիկ բառի կէսի վրայ ընդհատում էին խօսակցութիւնը, ակնածանքով բարեւում էին նրան՝ չափխաները գլխներից արագ հանելով և դանդաղ ծածկելով։ Ուստան պատասխանում էր գլխի աննկատելի շարժումով, համարեա առանց նայելու նրանց։ Նրա՝ լայն ճակատի վրայ կային քրտինքի մարգարիտներ։ Նա չուխայի փէշը յետ տարաւ, ձեռքը մեկնեց դէպի գօտին, վերցրեց այնտեղից կախուած և իր ներքեւի ծայրով համարեա գետին քսուող մեծ, մուգ-կարմիր Բաղդադի Թաշկինակը, սրբեց ճակատը և նորից իր տեղը կախեց։ Ապա կանգ առաւ, չուխայի գրպանից հանեց չիբուխն ու թութունի քիսան, թուլացրեց քիսայի ղայթանը և չիբուխի գլուխը կոխեց թութունի մէջ։ Դիմացի ղայֆախանայից մարդիկ հետեւում էին նրա շարժումներին։ Նա չիբուխը լիքը լցրեց թութունով, բթամատով սեղմեց, տեղաւորեց և յետոյ բարակ ծխափողի ծայրն առաւ բերանը։ Անմիջապէս ղայֆախանայից դուրս թռաւ մօտ քսանհինգ տարեկան մի երիտասարդ և դեռ փողոցի մէջտեղում լուցկին վառելով մօտեցաւ ուստային։ Ուստան նրա վրայ ուշադրութիւն չդարձրեց։ Նոյն քիսայից հանեց չախմախն ու չախմախաքարը, հանեց խուաթելը, դրեց քարի վրայ և պողպատը խփեց քարին։ Թելի ծայրը մխաց. ուստան այն դրեց թութունի վրայ և փափատացնելով օդը ներս քաշեց։ Թութունը վառուեց։ Նոյն վայրկեանին՝ լուցկին այրուեց — վերջացաւ. երիտասարդի մատների մէջ և մաշկը խանձեց։ Նա առանց ցաւն արտայայտելու, կամացուկ վայր գցեց այրուած լուցկին և շարունակեց մնալ անշարժ կանգնած։

— Ո՞ւմ տղէն ես, — չափազանց խիստ տոնով հարցրեց ուստա Մկրտիչը՝ գործը վերջացնելուց յետոյ։

— Ոսկերիչ Վաղինակի։

— Վարոս մա՞նչն ես։

— Հրաման կ'ընես։

— Ի՞նչ կ'ընէիր պայֆախանան։

Տղան ձայն չհանեց։

— Ամօթ է, ամընչէ։ Հօրդ հարստութիւնը կերար։ Խեղճ մարդն ատուր հացի կարօտ պիտի մեռնի։ Հերիք չէ՞ պայֆախանէքն ու մեյխանէները քաշ գաս...։

— Հօրեղբա՛յր, — փորձեց արդարանալ Վարոսը, — ես մեյխան ոտք չեմ դրէ։ Պայֆախանէն էլ գործով մտայ։ Դրան քովը նստած, աչքս ճամբէն կը պահէի՝ ընկերս հանդիպելու։

— Սո՛ւս... — Եւ ուստան չիբուխը բերանից հանեց։ — Սալախանա՛յ։ Ափսոս էն հէրը, որ դուն ունիս։

Վարոսը գլուխը կախեց։ Պայֆախանայում տիրեց լռութիւն։

— Ի՞նչ արհեստի ես։

— Արհեստ չունիմ, հօրեղբա՛յր։

— Ապրիս։ Ոսկերչութիւնը թեւդ կը ցուցնէ՞։

Վարոսն ամենայն խոնարհութեամբ նորից լռումեաց։

— Բեղի հարկաւոր է դամըրչի Բաղտասարի քովը ղըրկել, որ ոսկըրներդ ջնջխէ։ Համ արհեստի ղադըրը կ'իմանաս, համ փարի... Տէ՛, ռատ եղի աչքէս, անառակ...

Եւ ուստան շարունակեց ճանապարհը։

Բարկութեամբ գլուխը ցնցելու ժամանակ՝ նրա

չիբուխի արծաթէ կախարիչը փակուել էր։ Ուստան միայն այժմ նկատեց այդ և բաց արեց։ Չիբուխի գլխի մօտից կարճ շղթայով կախուած ձողիկը ձեռքն առնելով՝ նա սկսեց թութունը խառնել: Երբ նորից կրակը բորբոքուեց, ուստան թողեց ձողիկը և թեքուեց դէպի բոստանների մէջտեղով անցնող ճանապարհը։

Նա գնում էր Երանոսի բոստանը։

3

Որքան որ խուլ ու սեղմուած է բոստանների մէջտեղով անցնող ճանապարհը, այնքան ազատ և լայնահորիզոն են բոստանները։ Մտնելով նրանցից մէկի դարբասից, մարդ իրեն անմիջապէս կը զգայ բոլորովին ուրիշ աշխարհում, ուր չկայ դեղին, թանձր փոշի և ուր չկան երկնքի կապոյտը սահմանափակող բարձր պատեր։ Բացւում է բոստանների մի ընդարձակ տեսարան, որ տարածուած է հեռու, մինչեւ դաշտերը։ Բոստաններն իրարից սահմանագծուած են միայն խոպան հողի լայն շերտերով, որոնք միաժամանակ իշատայլակների ճանապարհներ են։ Այդ ճանապարհների երկու եզրերին ցանցառ կերպով շարուած են հովատուեր ուռիներ և բարձրահասակ բարդիներ։ Ուռիներ և բարդիներ կան նաև բոստանների մէջ՝ այստեղ ու այնտեղ, իսկ բոստանների պռունգներին կանգնած հոլիկները երեք կողմից խիտ շրջապատուած են ծառերով եւ նրանց միայն ճակատի կողմն է բաց։ Իւրաքանչիւր հոլիկի յետեւում կանգնած է մի փոքրիկ սայլակ, որի մօտ կապուած արածում է մի էշ։ Ծառերով շրջապատուած՝ հոսում է ջրի արխը և գնում է դէպի հարեւան բոստանները։ Իսկ պատերի՝ և ոչ մի հետք։ Պատերի փոխարէն, բոստանների յետե-

ւում, հեռու, շատ հեռու խոպան դաշտն է սկսւում, ուր մարդիկ կոյտերով թափում են քաղաքի աղբը։ Այնտեղ արեւի տակ պսպղում են ապակու մանր կտորներ։ Մի քանի տարի յետոյ, աղբով պարարտացած հողի վրայ նորանոր բոստաններ ու ծառեր կ'աճին, իսկ աղբի սայլակների ճանապարհն աւելի կ'երկարի։

Եւ այսպիսով բոստանների միակ պատերը նշանակուած են ճանապարհն անջատելու համար, որպէս զի այնտեղով անցնող գիւղացիները բոստանները չմտնեն։ Ահա նորից անցան այդ գիւղացիները։ Նրանք իրենց սայլերով վերադառնում են գիւղ։ Դեռ հազիւ է կէսօրը եւ նրանք ի հարկէ արեւով տեղ կը հասնեն։ Ահա նրանցից մէկը վար ցատկեց սայլի վրայից, մօտեցաւ պատի մէջ շինուած մի աղբիւրի, գիւղացու ահագին կումերով շատ կուլ տուեց ջուրը եւ վազեց՝ գետնագործ շալէ չուխայի թեւքով սրբելով իր թաց բեխերը։

Երբ վերջին սայլը պատերի ոլորում անհետացաւ, երեւաց ուստա Մկրտիչը։ Դեռ հեռուից նա տեսաւ դատարկ աթոռը Երանոսի դարբասի մօտ։ Մօտեցաւ, վերցրեց, իր հետ ներս տարաւ եւ դրեց պատի տակ։ Յետոյ գնաց դէպի հեռու հոլիկը։

— Բարի օր, Երանո՛ս։

— Աստու բարին, ուստա Մկրտիչ,— ուրախացաւ բոստանչին եւ արագ դուրս եկաւ՝ մի ձեռքին դանակն, միւսին՝ բահի կոթը։ — Ես ի՞նչքրդ լաւ բան էրիր, որ եկար։ Համմեցի, համմեցի...

— Գործդ էրա, գործդ էրա,— ասաց ուստան՝ տեսնելով, որ Երանոսը դանակը վար է դնում։

— Ամենամենծ գործը քու հրամանքիդ ծառայելն է, ուստա՛ Մկրտիչ։

Ուստան նստեց հոլիկի պատի տակ դրուած թախտին և չափւան հանեց։ Լայն ճակատի վերեւում նա ունէր խիտ, սեւ մազեր։

— Էս ի՞նչըղ մէտքդ քցիր, ուստա ջան։ Բանձր նստի։ Կեցի բարձ բերեմ։

— Բարձ չեմ ուզէ։ Էս ճամբի թոզը հոգի հանեց։

Եւ նա ոտքերից հանելով չուստերը, թափ աւեց նրանց մէջ լցուած հողը, ապա բրդէ գուլպաների կալերը շալվարի փողերի վրայ ամրացնելուց յետոյ, ոտնամանները նորից հագաւ։

— Ի՞նչ բանի ես, Երանո՛ս։

— Ուստա ջան, մէ խորովածմ էնեմ։

— Ձեռ ուզէ, շնորհակալ եմ։

— Ուստա ջան, օրեցէն մէ օրըմ բոստանս ես եկէ, դէմ մի եղնի։

— Թէ բախի ունիս՝ բէ։ Ուրիշ բան պէտք չէ։

— Բախլին իրան կարգին։ Ըպը զակուսկի՞։

— Բոստանդ կ'ուտենք։

Երանոսը ներսից բերեց գաւով լիքը օղի և կաւէ գաւաթներ, ապա մտաւ վարունգի և պամիդորի մարգերը։ Բաղեց, բերեց։

— Մէ քանիմ հատ էլ կծու տաքտեղ բէ։

— Աչքիս վրայ, ուստա՛։

Երանոսի գնալուց յետոյ ուստան վերցրեց դանակը, որով բոստանչին բահի կոթն էր տաշում, և սկսեց վարունգներն ու պամիդորները կտրատել։ Վարունգի կճեպները փռեց և զակուսկին դրեց նրանց վրայ։

— Էս տարի լոբիդ ի՞նչըղ է, — հարցրեց նա մօտեցող Երանոսին։

Շատ լաւ է։ — Եւ բոստանչին կանաչ պըղպեղները դրեց զակուսկու մօտ։ — Հըմը, ուստա

ջան, զուր տեղը չթողիր մէ խորոված էնէլ։

— Նստի, բանը մէ անգամ կ'ըսեն։

Երանոսը ժպտաց.

— Բարձի խօ՞սքն էլ չէնեմ։

— Չէ։

Ուստան վերցրեց պղպեղներից մէկը, կիսեց։ Պղպեղը կիսուեց չրխկալով և նրա միջից սուր կծու հոտով ցնդեց գոլորշանման նօսր գաղը։

— Լաւ տաքտեղ ունիս։

— Շնորհակալ եմ։ Իմ հողս տաքտեղի ու լոբու հող է։

Երանոսը նստեց, օղի լցրեց և վերցրեց իր գաւաթը.

— Տէ՛, ուստա ջան, կենա՛ցդ։ Շատ էի իմացէ քու մասիդ, լաւն էի իմացէ։ Հըմը հետդ ծանօթութուն չունէի։ Ծանօթացայ, լաւէն էլ լաւը տեսայ։ Ես մէ երջանիկ մարդ եմ, որ ախպուրս սարքելէն ետեւ դուն չգնացիր ու գնացիր, այլ էսօր մխաքդ քցիր ու եկար։ Հիմի ես մէ նպատակմ ունիմ, որ մեր բարեկամութունն էս բախու պէս կարճ չըլնի, այլ էն ախպուրի պէս երկան։ Սաղ եղնիս, ուստա՛ ջան, հազար տարի ապրիս, հազարն էլ հազար բարիքով ապրիս։

Երանոսը մի ումպով օղին դատարկեց և վերցըրեց մի կտոր վարունգ։

— Ես, Երանո՛ս ջան, — սկսեց ուստա Մկրտիչը, — շատ մարդու չեմ հաւնի։ Վո՞վ գիտէ, մարդն ի՞նչքան լաւ պիտի եղնի, որ ես հետն երթամ-գամ։ Հըմը ուղիղն ասած, էն օրն որ դուն ընձի կանչիր, թէ՝ ուստա՛, իմ ախպըրիս ջուրն ու բոստընիս ջուրն իրարէ ջոկ էրա, դուն ընձի դուր եկար։ Քանի՞ տարեկան ես։

— Եասընկինը։

— Ես եասընծինդ գիտէի։ Ինչորա. էլի քեզնէն վեց տարով մենծ եմ ու դուն ընձնէն չպիտի նեղենաս։ Ըսելս էն է, որ քու մէ բանդ հէչ դուրըս չեկաւ։ Էդ էն էր, որ դուն ընձի էնքան առատ վճարեցիր։ Ես կը վերցնեմ, իմ թեւս չի ցաւի, հըմը տուողն իրան փարի ղադրը պիտի իմանայ։ Թէֆ կ'էնես՝ բան մի խնայէ, բաղար կ'էնես՝ լի-զու-բերան մի խնայէ.— մենծանոց խօսք է։ Հիմի, թէ Աստած տուեց՝ դուն իմ ըսածս մարդը դուս եկար, ուստա Մկրտիչը քեզի ծառայ։ Թէ որ փուչ դուս եկար՝ Աստած քեզի հետ, Աստած էլ ընձի հետ։ Սաղ եղնիս...

Օղին խմելուց յետոյ՝ ուստան վերցրեց մի պղպեղ, թաթախեց աղի մէջ և առանց կոպն անգամ թարթելու՝ կերաւ։

Թէեւ բոստանների ու դաշտերի լայնարձակ տեսարանի վրայ դեռ պայծառ արեւն էր, բայց Թախտին փռուած ջէջիմի պայծառ նախշերի վրայ արդէն ընկել էր հոլիկի պատի լայն ստուերը։ Երանոսը նորից օղի լցրեց։

— Ուստա՛ ջան, հրամանք տու՝ պատմեմ քեզի. թէ ընչի՛ բոստընիս ջուրն ու ախպըրիս ջուրը ջոկ էնել տուի։ Որ պատմութիւնս իմանաս, էլ ընձի չես մեղդրէ չռայլութեան համար։ Էրածս՝ մատղի պէս բանմ էր։ Իսկ մատղի համար, դուն ընձնէն լաւ գիտես, որ փարա չեն խնայէ...

Ուստա Մկրտիչը չիբուխը հանեց գօտկի յետեւից և Թութունի քիսան՝ գրպանից, դրեց կողքը և սկսեց լսել։

— Ուստիս որ ըսեմ, մէ օրըմ,— օրն էլ ցորեկ էր,— աչեմ տեսնիմ՝ կոտեմս ջրել է հարկաւոր։

Տէ՛, դուն ընձնէն լաւ գիտես, որ մենք բոստըն-ներէն վազող արխի ջրէն մէննակ կարդոֆիլը, լոբին, դդումն ու էդ տեսակ բաները կը ջրենք։ Հըմը կոտեմի ու առհասարակ ուտելու կանընչի հըմար, թէ որ կ՚ուզես կանանչդ լաւ եղնի՝ խմելու ջուր է հարկաւոր։ Մէ խօսքով, գնացի որ ախպուրս դարձնեմ դէպի մարգը։ Հըլը նոր էի ջուրը փակէ, եբ որ դաշէն մէկը ճչաց։ Դուս թռայ։ Տեսնիմ՝ մէ թուրքիմ կնիկ, գոյնը քցած, կայնէ ու ցամաք ախ-պըրին կ՚աշէ։ Վո՞վ իմանար, ի՞նչ կ՚անցնիր մըտ-քէն։ Դուն լաւ գիտես, որ էդ թուրք միլլաթը մեղնէն շատ չեղնի՝ մեզի չափ կրօնապաշտ է։ Դուց-ցէ կը մտածէր, թէ էս ախպուրն որ կտրաւ՝ Աս-տանից էր։ Ըսել է՝ Աստուած իրան վրէն նեղեցեր է։ Էդտեղ, ուստա՛ ջան, ես մէ տեսակմ եղայ։ Ջուրը մարդն է կտրէ, հըմը էնիկ Աստու էրածը կը հաշ-ուէ։ Մեղաւորը ես էի...

Ուստան, որ չիբուխ էր պատրաստում, ընդ-հատեց գործը.

— Սխալ ես։ Մարդու ջուր կտրելն էլ Աստու կամքով կ՚եղնի։ Կրնայ եղնի, որ էդ րոպէին Աս-տած ինքն էր քու ձեռքիդ հրամանք էնողը։

— Մենք, ուստա՛ ջան, մեղաւոր մարդիկ ենք։ Թէ Աստած մէ անգամըմ մեր ձեռքին ճամբայ ցուց տայ, սատանէն տասս անգամ կուտայ։ Կրնայ եղնի, որ ինքը սատանէն էր էդ գործն էնողը, որ անմեղ կնիկը վախենար։

Ուստան չախմախ խփեց։

— Մտածեցի, աւելի լաւ չի՞ եղնի, որ ջուրը միշտ վազէ ու մարդու մեղաւոր ձեռքը չդիպնի էնոր։ Թէ Աստած չուզենայ, որ մէ մարդմ իրան ջրէն խմէ, թող ինքն իրան հրաշքով կտրէ էդ ջուրը։

Ուստան ծուխը ներս քաշեց, ապա մտածկոտ կերպով դուրս փչեց և սկսեց երկար մտածել։ Երանոսն անթարթ նայում էր նրան։

— Վերցուր թասդ, Երանո՛ս, Ես էլ թող քու կենացդ եղնի։ Թող Աստված քու բարիդ յիշէ, չարդ մոռհան էնէ։ Ապրիս շատ, չապրիս վատ։ Քու էրածիդ նպատակն ընձի հէչ դուր չեկաւ։ Տայ Աստված, որ էդ սխալմունքդ վերջի սխալմունքդ եղնի։ Ես քան տարուայ ուստա եմ, քան ախպուր եմ չինէ, հըմը հէչ չեմ տեսէ, որ Աստված իրան սեփական ձեռքով ջուր կարէ։ Քու էդ մտածմունքդ Աստուն փորձել կը նշանակէ։ Աստված կը գործէ մարդու ձեռքով։ Ճիշդ է, սատանէն էլ կը գործէ մարդու ձեռքով, հըմը էնտեղ էլ Աստու մատը խառն է։ Ընպէս որ էդ րոպէին քու ջուր կարելդ մէ գերբնական նշանն էր։ Աստված չէ ուզեցէ, որ էդ կնիկը ջուր խմէ: Տայ Աստված թողութուն թէ՛ էնոր մեղքերուն, թէ՛ քու, թէ՛ իմ ու թէ առհասարակ աշխըրքի։ կենա՛ցդ։

Ուստան խմեց, կերաւ մի պղպեղ և շարունակեց ծխել։

— Շնորհակալ եմ, ուստա՛ ջան, — սկսեց Երանոսը, — որ դու ընձի խրատ տուիր, որ դուն իմ կենացս խմիր։ Քու ըսածդ խօսքն իմ գլխուս էլ պառկաւ։ Ճիշդ է, ես սխալմունք եմ էրէ, հըմը ախպուրն Աստուն հաճելի գործ է։ Թէ իմ ախպուրս առաջ տասերկու ժամ կը վազէր, հիմի քսանչորս ժամ կը վազէ։ Առաջուայ տասերկու բերնի տեղակ՝ հիմի քսանչորս բերան թողութուն կը խնդրէ իմ մեղքերուս համար։ Տայ Աստված, որ էնոնց բարեմաղթութուննը իմ էդ մեղքս էլ ջնջէ։

— Ամմէն, — մրմնջաց ուստան։

Երանոսը գաւաթը վար դրեց և մի կտոր պա-

միդոր կերաւ։ Հետևեկալ երեք գաւաթը նրանք խմեցին լուռ, ամէն մէկն իր մտքերի հետ։ Արդէն արևն իջնում էր դէպի վերջալոյս։

— Ի՞նչ դերդաստան ունիս, Երանո՛ս։

— Երկու պզտի ախպէրտինքս, նշանածս, վեց տարեկան աղջիկս։ Մէ օրըմ մեր տուն համմեցի, ուստա ջան։ Աստած սաղ պահէ՝ դո՞ւն ինչ ունիս։

— Մէրս, նշանածս, ութ տարեկան տղէս։ Ես էլ մենծ դերդաստան չեմ։

— Աստած մենծցնէ։

— Ամմէն։

4

Խմիչքը նկատելի կերպով ազդել էր Երանոսի վրայ։ Նա դարձել էր աւելի թախծոտ, բայց միևնոյն ժամանակ աշխուժացել էր։ Տուտ-չուտ օղի էր լցնում, վերցնում էր իր գաւաթը և երկար նայում էր հեռու հորիզոնին, ուր իջնում էր արեգակը։ Մի անգամ, այդպէս նայելով, նա իր գաւաթն իջեցրեց դէպի թախտը, շօշափելով գտաւ ուստայի գաւաթը, չրխկացրեց և սկսեց խօսել կարծես ինքն իր հետ կամ դիմելով արեգակին.

— Ես շատ կը զարմանամ աշխըրքի վրայ։ Եօըռնինը տարի է որ կ'ապրիմ, հըմը էլի կը զարմանամ։ Էս ի՞նչ տեսակ հրաշք բան է աշխարքը, ուրտի՞ց է ծագէ։ Կ'ըսեն՝ Աստած է ստեղծէ։ Տէ՛, ես էնոր զօրութանը մ·տաղ եղնիմ, հըմը Աստած է ստեղծէ խօսքը շատ կարճ է, ես էլ անհասկացող մարդ եմ։ Կ'ուզեմ, որ մէկը նստի ու ընձի երկան-բարակ բացատրէ, թէ վո՞վ ենք մենք, ընչի՞ կ'ապրինք ու էդոր մէջն ի՞նչ տեսակ նպատակ կայ։ Ընչի՞, օրինակի համար, իմ ծնողքս ընձի այսինչ

աղջկայ հետ նշանեցին, ոնչ թէ այնինչ։ Ինչո՞ւց է, որ հայ ու թուրք կայ ու էնոնց մէջ խտրութիւն կայ։ Ինչո՞ւց է, որ մարդու սիրտը մէկին չկպաւ՝ չի կպնի, կպաւ՝ չի պոկուի։ Ինչո՞ւց է, որ ադաթ կայ, օրէնք կայ ու մարդ իրան ուզածի պէս ապրի չէ...

Նա գաւաթը վար դրեց, նայեց ուստա Մկըրտըչին, որ լուռ ծխում էր և ուշադիր լսում։

— Մարդը, ուստա՛ ջան, կընայ ամմէն բոպէ ընկնի մեռնի։ Օրինակի հըմար, բահի կոթը տաշել ես ու դանակը դրել ես մարգի թմբին։ Մէկ էլ տեսդ քարին դիպաւ, կամ թաց հողի վրայ սըքտաց, ընկար, մտաւ սիրտդ։ Ասսու գործն է։ Հըմը ես շատ կ'ուզեմ ապրիլ ու իմանալ, թէ, օրինակ, մարդն ի՞նչըղ պիտի ապրի մէ եասուն-քառասուն տարի ետեւ, վո՞վ պիտի նստի էս թախտի վրայ, ո՞ւր պիտի աշէ, ի՞նչ պիտի մտածէ... Մէկ էլ կ'ըսեմ՝ աշես էն վախտ պիտի եղնի՞ն էս թախտը, էս հոլիկը, էս բոստանը, էս ադաթն ու օրէնքը...

— Ամմէն բան կ'եղնի, Երանո՛ս, դուն թասդ դարտկէ։

Յանկարծ բոստանչին դիմեց ուստային.

— Դոուլ-զուռնա բերել տա՞մ, ուստա՛ ջան։

— Չէ, ուշ է։ Երթըլու վախտ է։

— Խաթրս մի կոտրէ։

— Չէ, Երանոս ախպէր։ Մութն ընկաւ։ Երթամ։

— Լաւ, ուստա ջան, հըլը շատ վախտ կայ։ Մէ քիչ էլ նստինք։

Երանոսը գաւի մնացած օղին դատարկեց գաւաթները և մտաւ հոլիկ։

— Երանո՛ս։

— Համմէ։

— Էլ չբերես։

— Մէ գաւմ, ուստա՛ ջան, մէննակ մէ գաւմ։

— Խօ չպիտի՞ հարբենք, ա՛յ Երանոս։ Պէտք չէ։

Բոստանչին կոտրուած դուրս եկաւ հոլիկից։ Նա մի քիչ օրօրւում էր։

— Էս անգամ էլ խաթրս կոտրեցիր, ուստա՛ ջան։

— Պզտի ախպօր խաթրը մենծի ծառան է, Նասի։

Արեւն ամբողջովին իջաւ։ Անմիջապէս դարձաւ երեկոյ։ Ուստան գաւաթը վերցրեց, նայեց բոստանչուն, յետոյ յանկարծ նայեց աւելի ուշադիր ու երկար և գաւաթը նորից տեղը դրեց։

— Տխուր ես, Երանո՛ս։

Բոստանչին ձայն չհանեց.

— Դարդ ունիս։

Բոստանչին նորից ձայն չհանեց։ Նա խոնարհեց գլուխը։

— Բախու մէջ թաթխած դարդը չի խեղդի։ Դարդն ստեղծուած է ընկոր հետ կիսելու համար։ Ես քու մենծ ախպէրդ եմ...

Երանոսը դարձեալ լուռ մնաց, բայց այս անգամ արդէն, ըստ երեւոյթին, պատրաստւում էր խօսել։ Շուռ եկաւ դէպի ուստան, ուզեց սկսել։ Նրա դէմքի վրայ խաղում էր անվճռականութիւնը։

Ուստան գաւաթը խփեց նրա գաւաթին և խմեց։

Երանոսն իր օղուն ձեռք չտուեց։

— Սէր է ընկէ սիրտս, ուստա՛։

— Ի՞նչ...

Պղպեղը ցած ընկաւ ուստա Մկրտչի ձեռքից։ Նա արագ վեր կացաւ, չափխան դրեց, վերցրեց չիբուխն ու թութունի տոպրակը։

— Թքել եմ քու աղ ու հացիդ վրայ։

Եւ շտապ քայլերով դիմեց դէպի հեռու պատի կողմը։

— Ուստա՛ Մկրտիչ...

Երանոսը կտրեց նրա առաջը։

— Հեռու քաշուի, աննամուս, թո՛ւ... Բայց տարի՞քդ, կնի՞կդ, երեխէ՞դ... Էս ի՞նչ էր լսեցի...

— Ուստա՛ ջան, ես քու հոգուդ մատաղ, մի նեղենա, ներէ։ Իմ ուզածս էլ ըշտը էն է, որ դուն ընձի մէ խրատ տաս, թէ ի՞նչըղ էդ սատանական սէրը պոկեմ սրտէս, քցեմ գիշերուայ քամուն, որ չտեսնիմ էլ, թէ ո՛ւր տարաւ... Ետ երթանք, շատ կը խնդրեմ...

— Էլի ես պիտի համբերեմ,— ասաց ուստան տարակուսած և յետ դարձաւ դէպի հոլիկը։ — Տես հըլը ի՛նչ դուս եկաւ։ Ես էլ գիտէի՝ պատուով, նամուսով մարդ ես։

— Ուստա՛ ջան, տու էս դանակն ու սիրտս խրէ, հըմը էդպէս մի խօսի։ Ամմէն մարդ աշխըրքի երեսը գտնէս մէ անգամըմ սիրելու խրատունք ունի։ Ում սիրտն որ սէր կայ, էլ ուրիշ կնիկարմարդ չի կրնայ մտնի էնտեղ։ Հըմը ում սիրտը սիրուց դատարկ է, էնոր սիրտը քու խաւաթելիդ նման բան է,— կայծ ընկաւ՝ կը մխայ...

— Բայց նշանա՞ծդ,— շշնջաց ուստան, կարծես ինքն իր ձայնից անգամ վախենալով։

— Սաղած ողորմի ծնողացս հոգուն։ Ես էնոնց խօսքին չհակառակուելու համար եմ առէ էնոր։

— Լաւ ես էրէ։

— Հըմը աղջկաս աղիղ արեւը վկայ, ուստա՛ ջան, տասը տարուայ մէջ ես էնոր հէչ մէ օրմ չեմ սիրէ...

— Սուս, Երանո՛ս, ամօթ է։ Ջահել աղայ չես։

Սէրս ո՞րն է։ Բուրըս ծնողացդ կամեցածը չէ՞։ Սուրբ պսակով հետդ կապուածը չէ՞։ Էն մատաղ անատունի ծնողը չէ՞։ Տասը տարի քու առաջդ ծառայե՞լ է թէ չէ։ Ըսիր, որ քեզնէն պզտի ջուխտ ախպէր ունիս։ Էնոնց չահել, պահե՞լ է թէ չէ։ Հետի խրանից՝ աչքը խօ դուսը չէ՞, կամ բնութիւնը խօ փուչ չէ՞։ Թէ էզպէս բան կայ՝ ըսա։

— Չէ, ուստա՛ ջան, ես երկնքէն-գետին չնորհակալ եմ էնոր բարքէն թէ բնութիւնէն։

— Էլ ի՞նչ կ՚ուզես։

Երանոսը ձայն չհանեց։

— Մարդը, որ, հետի լաղոց. լիրբ կնիկ էլ ունենայ, էլի պիտի սիրէ ու հետն ապրի, քանի որ գէշ կնիկն էլ Աստու տուածն է։ Սուրբ պսակն անքակտելի է։ Գէ՞շ է կնիկը՝ խրատ տու, ծեծէ, հըմը էնիկ էլի քուկդ է։ Ուղղուա՝ շատ լաւ։ Ձուղըրուա՝ պիտի քաշես Աստու պատիժը։ Օրէնք էդ է։ Լաւ է թէ գէշ է՝ կնիկը մարդու բախտն է։ Մեննակ մահն իրաւունք ունի էնոնց բաժնելու, իսկ մահէն ետեւ՝ մարդ լաւ կ՚էնէ, որ նորից աշխարք չմտնի։ Դուն մենծ մարդ ես, էս ամմէն բանը պիտի գիտնայիր...

— Գիտեմ... Ըշար էդոր հըմար էլ սիրտս արուն կու լայ։

— Ամօթ է, Երանո՛ս, խմած ես՝ չիտես ինչ կը խօսիս։ Որ այեղնաս, գետինը պիտի մտնիս բանծից հըմար։

Նրանք լռեցին։ Հեռւում, հարեւան հովիւների լուսամուտներում, երեւացին կրակներ։ Բոստաններից մէկում մի էշ կանչեց երկար և աղեկտուր։ Երբ նա լռեց, լսուեց շատ հեռու մի շան անընդհատ, միապաղաղ հաչոցը։ Յետոյ դարձա- զարմանալի

կերպով լուռ ու խաղաղ։

— Իսկ ի՞նչ լըբի վրայ ես սէր քցէ։

— Էնպէս մի ըսէ, ուստա՛ ջան, ես քու հոգուդ մատաղ։ Մի կոտրէ սիրտս։ Խեղճ անտատունը հետս լիզու էլ չէ թաթխէ...

— Ումոնցի՞ց է։

— Պատմածս Թուրքի կնիկ է, ուստա՛...

— Թուրքի՞ կնիկ է...

Ուստան կատաղեց։ Նրա լայն ճակատի վրայ ուռեցին երակները։ Նա համարեա գոռաց.

— Էն էլ Թուրքի՞ կնկայ վրայ ես սէր քցէ։ Ամօ՛թ քու քրիստոնութանդ էլ, հայութանդ էլ։ Թքա՛ծ բիաբուռ աշխըրքի վրայ։ Թքա՛ծ բիաբուռ մարդու վրայ։ Թո՛ւ, հազար անգամ...

— Ուստա՛...

— Սուս, Երանո՛ս, ոտքս կոտրիր, ես քու չեմ-քէդ նես չգնէի։ Արի՛, արի դարբազդ ցուց տու՛ երթամ։ Մութն է։

Երանոսը թախտի վրայից վերցրեց պանակը և դրեց ուստայի ձեռքը.

— Ահան դարբազս...

Ու նա քանդեց կրծքի կոճակները։

— Բաց էրա, գնա, ուստա՛ ջան, ձեռքդ դա-լարի...

Ուստա Մկրտիչը պանակը դրեց թախտի վրայ։

— Թողութիւն կ՚էնես, Երանո՛ս ախպէր։ Ես քու բոստընիդ մէջ քու հետդ էդ տեսակ խօսելու իրաւունք չունէի, հըմը մեղքն իմս չէ։ Ես չլսած բաներ լսեցի, չտեսած բաներ տեսայ... Բարի գիշեր։

— Ուստա՛։

— Համմէ։

— Էդ ծանր խօսքերո՞վ կը հեռանաս։

— Ի՞նչ կ'ուզես...

— Խորուրդ չունի՞ս տալու, ուստա՛ ջան։ Չէ՞ որ ես խորըրդի հըմար բացի էս խօսքը։ Դուն իմ մենծ ախպէրս ես...

Ուստա Մկրտիչը կանգ առաւ։

— Խորո՞ւրդ...

Երանոսի խօսքերը հասան նպատակին։

Տիրեց երկարատեւ լռութիւն։ Խաւարի մէջ ոչինչ չէր երեւում։ Յանկարծ չխչխկաց ուստայի չախմախաքարը և մանր կայծեր թռան։ Ուստան ծխեց։

— Լաւ լսիր, Երանո՛ս։ Քեզի խորուրդ է հարկաւոր։ Ես իրաւունք չունիմ էս տեսակ հեռա-նալու։ Հըմը իմ խորուրդս պիտի էն գլխուց քեզի յայտնի եղնէր։ Սիրտդ խառըկէ էդ ալաից։

— Ի՞նչըղ խառըկեմ, ուստա։

— Գերդաստանէդ հեռու մի մնա, մենակ մի մնա, պատուով, նամուսով բարեկըմութիւն ունեցի, լաւ ընկերտանք ունեցի, ուրիշի սէրը տես՝ բարի նախանձով նախանձէ, ինքդ էլ սիրէ, ադաթ ու օրէնք ճանչցի։ Գալով Թուրքին, ինհարկէ Թուրքն էլ մեզի նման Աստու ստեղծածն է, էնոր Աստածն էլ էն է, ինչ որ մերը, հըմը կրօնքն էլ է ուրիշ, ազգն էլ։ Ի՞նչըղ կրնայ եղնի, որ քրիստոնայ միլ-լաթը մահմետականի հետ կապուի։ Էդ բանը ոնչ հայը կ'էնէ, ոնչ Թուրքը, ոնչ էլ ուրիշը։ Թէ որ մէկն ու մէկն իրան կրօնքն ու ազգը փոխէ, եաւ-նչանուի, էդ հըլը կարելի է։ Հըմը վո՞վ կը փոխէ։ Հայը փոխէ՝ հայերն էնոր կը սըպանեն, Թուրքը փոխէ՝ Թուրքերը...

Թէեւ ուստա Մկրտչի վերջին խօսքերը հնչեցին շատ դաժան, բայց նրա ձայնը մեղմ էր և ըստ երե-

ւոյթին նա այլեւս բարկացած չէր Երանոսի վրայ։

— Գեղի ոսկոռը գեղի շանը պիտի հասնի։ Հին օրէնք է,— շարունակեց նա։ — Թուրքը Թուրքի հըմար է ծնուէ, հայը՝ հայի։

Երանոսը կանգնել էր գլխիկոր ու ընկճուած։

— Լաւ, ա՛յ ախպէր, հայն ու Թուրքն որ իրար առնեն, էնոնց զաւակն ի՞նչ ազգ պիտի եղնի։ Դուն ինքդ ըսա...

Բոստանչին լուռ էր։

— Առանց ազգի մարդ կ՚եղնի՞։

Եւ մի քանի վայրկեան պատասխանի սպասելուց յետոյ, ուստան նորից հարցրեց.

— Առանց կրօնքի մարդ կ՚եղնի՞...

Նա չիբուխը թխկթխկացրեց թախտի ծայրին, թափ տուեց մոխրից և դրեց գրպանը։ Այժմ նա ուղղակի խղճաց իր առջեւում կանգնած այդ վշտաբեկ մարդուն։ Եւ նայելով մթութեամբ պարուրուած նրա կերպարանքին, ուստա Մկրտիչը յանկարծ ժպտաց իր սեփական երջանկութեան գիտակցութիւնից։ Դրանցից աւելի ահա թէ ի՛նչը կարող էր ազդել Երանոսի վրայ։ Եթէ նա տեսնէր սրբազան աւանդների պահապան իր մօրը, ամուսնացած կնոջ հրաշալի տիպար իր Հեղնարին և տան ուրախութիւն ու զարդ ութ տարեկան իր Գալուստին, եթէ նա գոնէ մի անգամ լինէր իր ընտանեկան խաղաղ յարկի տակ և տեսնէր, թէ ի՛նչքան բախտաւոր կարող է լինել մարդը, անպայման կը նախանձէր իրեն բարի նախանձով և կ՚ազատագըրուէր այդ չլսուած կախարդանքից։ Երանոսը լաւ մարդ է և ափսոս է նա։

— Երթանք, Երանո՛ս, ես քեզի գինի պիտի պատուեմ։

— Ուստա՛ ջան, ես շատ շնորհակալ եմ։ Հիմի ախպէրտինքս կու գան։ Ընձի որ էստեղ չտեսնին, անհանգիստ կ'եղնին։ Մարդ է, մտքերէն հազար բան կ'անցնի։ Եղաւ չորս օր որ տուն չեմ գնացէ։ Մնա մէ ուրիշ անգամըմ կու գամ։

Ուստան յանկարծակիի եկաւ.

— Պատիւս չե՞ս ընդունէ։

Բոստանչին զգաստացաւ. զգաց, որ վիրաւորում է ուստային և ստիպուեց համաձայնուել.

— Լաւ, ես մէ քիչմ ետեւ կու գամ, մե՛նծ ա՛-պէր։ Ներող եղի...

— Էդ կարելի է։ Իսկ թուրքի կնկայ վրայ ըսածդ խօսքերն անցած հաշուենք։ Հարբած էիր։ Տունս Զօրի Բողազն ո՛ւմ որ հարցնես, քեզի ցուց կու տան։

Հագիւ Երանոսն ուստա Մկրտչին ճանապարհ էր դրել ու վերադառնում էր, երբ իր հոլիկում վառուեց նաւթի լամպը։ Եկել էր միջնեկ եղբայրը։

— Էսօր ինչի՞ տուն չեկար, ախպէ՛ր ջան,— հարցրեց նա մօտեցող Երանոսին։

— Մարդ կար քովս։ Ի՞նչ կայ-չկայ տունը։

— Ի՞նչ պիտի եղնի, լաւ է։ Մեննակ թէ հարս — խաթունը շատ անհանգիստ եղաւ։ Կերակուր եմ բերէ։

— Ես կուշտ եմ, անո՛ւշ ջան։ Իսկ հիմի տեղ պիտի երթամ։ Դուն էստե՞ղ կը քնիս։

— Չէ, կանանչ պիտի տանիմ քաղաք։

— Հոլիկը հարուր դաստա թարխուն կայ, էն էլ տար։ Տէ՛, արի դարբասը փակէ։ Բարի գիշեր։

— Բարի գիշեր, ախպէր ջան։

Երանոսը գնաց։

5

Երանոսն արագ-արագ քայլեց, որպէսզի հասնի ուստայի յետեւից: Ճանապարհը կորած էր մթութեան մէջ և այնտեղ ոչ ոք չէր երեւում: Տեղ-տեղ, մերթ այս կողմի պատի խոռոչում, մերթ այն, խաղաղաձայն հոսում էին աղբիւրները: Դարբասները փակ էին և պատերի յետեւում հանգիստ էին ծառերը:

Երանոսը քայլերն աւելի արագացրեց: Հասնելով այն անկիւնին, որտեղից ճանապարհը թեքւում էր դէպի Թուրքական շուկայի փողոցը, նա յանկարծ նկատեց իր առջեւից գնացող մէկին: Հարբածութիւնի՞ց էր թէ խաւարից, նրան այնպէս թուաց, թէ դա Թրքուհին էր: Նա արագ քայլեց, որպէս զի մօտենայ և ստուգի, թէեւ առանց այն էլ համոզուած էր նրա ով լինելու մէջ: Բայց դեռ մի քանի քայլ չարած, իր առջեւից գնացողն արագ նայեց յետ և տեսնելով, որ մարդ է գալիս, չադրան վար առաւ գլխից և անհետացաւ մի դարբասի յետեւում: Երանոսը նոյնպէս նետուեց այնտեղ: Դա քաղաքի պանդոկներից մէկն էր: Նրա բակում, մթութեան մէջ, կանգնած էին հայ գիւղացիների սայլեր, թուրք գիւղացիների արաբաներ, ռուս գիւղացիների ֆուրգոններ, անկարգ խառնիխուռն: Ոչ ոք չէր երեւում: Աջ կողմի պատն իր ամբողջ երկարութեամբ ախոռն էր՝ եզներով ու ձիերով լցուած, իսկ ձախ կողմի պատը՝ չայխանան էր և գիշերելու մեծ սենեակն իր հասարակ թախտերով: Պանդոկում ի հարկէ ոչ մի կին չէր իջեւանում, և Թրքուհին, — որքան էլ որ նա չադրան վար առած լինէր զգուշութեան համար, — իսկոյն կը նկատուէր տղամարդկանց մէջ

և բնականաբար զարմանք կ՚առաջացնէր։ Բայց Երանոսը գիտէր, որ նա պանդոկ մտաւ ոչ թէ թաքնըւելու, այլ մի ուրիշ անցքով դուրս պրծնելու համար։ Եւ որովհետեւ նա լաւ գիտէր ինչպէս քաղաքի բոլոր պանդոկները, այնպէս էլ այդ պանդոկը, ուստի և իսկոյն նետուեց դէպի նրա յետեւի դռնակը, որ բացւում էր մի այլ փողոցի վրայ։ Այնտեղից դուրս գալով փողոց, բոստանչին արագ նայեց շուրջը։

Փողոցը դատարկ էր։ Ոչ ոք չկար։

Ո՞ւր կարող էր անհետացած լինել թրքուհին այդքան արագ։ Փողոցի երկու անկիւններն էլ պանդոկի դռնակից բաւական հեռու էին, և դժուար թէ նա արդէն հասած և թեքուած լինէր նրանցից այն կողմ։

Յանկարծ Երանոսը մտածեց, որ կինը կարող էր մտած լինել եկեղեցի, որը գտնւում էր պանդոկի դռնակից ոչ այնքան հեռու։ Նա շտապ առաջ անցաւ փակ խանութների միյարկանի շարքերի միջով և մօտեցաւ եկեղեցուն, բայց և իսկոյն անդրադարձաւ, որ երեկոյեան ժամերգութիւնը շատ շուտ է վերջանում և այդ ժամին ոչ մի եկեղեցի բաց չի լինում։

Մթութեան մէջ՝ խանութների դեղին, կապոյտ, կարմիր կամ կանաչ փեղկերը երեւում էին միանըման սեւ գոյներով։ Երանոսն շտապեց դուրս գալ նրանց տաղտուկ պատճառող շարքերի միջից դէպի գլխաւոր փողոցը։

Այնտեղ վառւում էին էլեկտրական հատ ուկենտ լոյսեր, և բաց խանութներից գալի լամպերի պայծառ շողերը դուրս էին յորդել դէպի փողոց, առատ լուսաւորելով այն։ Փակ խանութները տախտակէ փեղկեր չունէին, այլ երկաթէ ճաղեր, որի

պատճառով և շուարթ տպաւորութիւն էին թողնում։ Շատ խանութների վրայ կային երկրորդ յարկեր, որոնք բնակարաններ էին՝ պայծառ լուսաւորուած ու գեղեցիկ լուսամուտներով։ Փողոցն ընդհանրապէս շքեղ էր, խանութները՝ ճոխ և անները՝ հարուստ։ Մայթերով անցուդարձ էին անում շլապաւոր ու փողպատաւոր տղամարդիկ՝ սեդեկիւլաւոր ու կարսետաւոր կանանց հետ թևանցուկ, զբօսնում էին ասես, երբեմն նաև հայ սպաներն իրենց սիրուհիների հետ, օրօրւում էին տուն վերադարձող հարբած գինարբցիները, փողոցի մէջտեղով անցնում էին կառքերը՝ մերթ կենտ-կենտ, որ սլանում էին արագ և մարդկանց տանում կայարան, երեկոյթ կամ այլ տեղ, մերթ զոյգ-զոյգ ու երեք-երեք, որ գնում էին զանգակ, կոչք-կոչքի։ Նրանցում նստած էին լինում քէֆ անողներ, և անպայման նուագում էր դաւուլ-զուռնան ու բացագանչում էր մէկը՝ մի ձեռքում բաժակ բռնած, միւսում՝ շիշ։ Անկիւնում կանգնած ռուս ոստիկանը բեխերն էր ոլորում բաւականութիւնից, ապա լըրջանում էր և խիստ տոնով դիմում կառապանին՝ պահանջելով լռեցնել նուագն ու բացագանչութիւնն այդ վայելուչ փողոցում։

Երանոսը նայում էր կանանց՝ Թրքուհուն գըտնելու յոյսով։ Թէև նա միայն մէկ անգամ էր տեսել նրա դէմքը և այն էլ մի քանի վայրկեանով, բայց կասկած անգամ չունէր, որ իսկոյն կը ճանաչէր նրան։ Բայց կինը, որ շարունակ չադրայով խուլ կերպով փաթաթուած, նոյնպէս մի անգամ էր տեսել իրեն և այն էլ այնքան շփոթուած վիճակում, այժմ հազիւ թէ ճանաչէր։ Ուստի և բուտանչին վստահ էր, էր նա իրենից խոյս չէր տայ։

Բայց նա չկար։

Երանոսը, որ մութ փողոցում կնոջ խուսափելու ժամանակ չէր կարողացել որոշել, թէ նա ինչ հագուստ էր հագել, այժմ ի զուր էր շտապում այս ու այն մենակ կնոջ յետեւից և դէմքին նայում։ Անցորդները զարմանում էին նրա վրայ, երբեմն և վախենում։

Ի զուր փնտռելով՝ նա կտրեց-անցաւ գլխաւոր փողոցի լուսաւոր ու բազմամարդ մասը։ Այժմ նրա երկու կողմերում կանգնած էին միայն միյարկանի բնակարաններ, որոնց լուսամուտները դրսի կողմից ունէին կարմիր կամ կապոյտ փեղկեր՝ այդ ոչ ուշ ժամին արդէն ծածկուած։ Միայն մի բնակարանի լուսամուտներն էին բաց, և այն էլ հենց որ Երանոսը մօտեցաւ՝ փակուեցին։ Կինը, որ փողոց էր դուրս եկել փեղկերը ծածկելու, վրայ բերեց չանգալներն ու զարմացած նայեց բոստանչուն։

Երանոսն զգաց, որ ինքը յուզուած կամ շփոթուած տեսք ունի և զգաստացաւ։ Դիմացը երեւում էր Ձորի Բողազը, և հաւանաբար ուստա Մկրտչի տունը մօտ էր։ Պէտք էր դէմքի վայելուչ արտայայտութիւն ունենալ։

Երեւաց մի կառք, առանց ձիերի, կառապանի դրան առաջ կանգնած։ Մի դարբասի դռնակից դուրս եկան երկու մարդիկ։ Մէկը բարի գիշեր ասաց ու գնաց, իսկ միւսը նորից մտաւ ներս։ Հանդիպեց ու յետ մնաց փողոցի անկիւնում կանգնած մի աղբիւր՝ նոյնպէս ուստա Մկրտչի շինածը։ Լսելի դարձաւ Ձորի Բողազով հոսող Գիւմրի-չայի մեղմ խշշոցը։ Հասնելով այն տեղին, ուր դիմացից եկող գետակը մտնում էր կամարակապ ստորգետնեայ անցքը և այդպէս հոսում ողջ քաղաքի միջով,

տների ու փողոցների տակով, մինչև քաղաքի միւս ծայրը, մինչև բոստանները, Երանոսը տեսաւ իր աջ ու ձախ կողմում, — ցածրում և մանաւանդ բարձրում, — պլպլացող բազմաթիւ կրակներ. նկատեց մի դեզ խոտ՝ կտուրներից մեկի վրայ և լսեց ինչ որ շան տխուր, միալար հաչոցը։

Սկսւում էր Ձորի Բողազը։

6

Երանոսն ուռիներից մեկից մի ճիղ պոկեց՝ շների հնարաւոր յարձակումներից պաշտպանուելու համար և առաջ անցաւ։ Երկու տնից այն կողմ, մի նեղ քարէ սանդուխք ուղիղ ջրափից բարձրանում էր դէպի ձորի բարձրը, դէպի ամենավերին փողոցը. որտեղ, իր շրջակայ շէնքերից ցայտուն զանազանուելով, կանգնած էր մի երկյարկանի տուն՝ կապոյտ ներկած պատերով և ամբողջ երկրորդ յարկի երկարութեամբ փայտէ գեղեցիկ պատշգամբով։ Դա պատկանում էր ոսկերիչ Վաղինակին։ Երանոսը գիտէր այդ տունը, ուստի և բարձրացաւ դէպի այն՝ ուստա Մկրտչի տան տեղն այնտեղից իմանալու համար։ Տան առաջին յարկի մի անկիւնը մանրավաճառի խանութ էր, որ նոյնպէս պատկանում էր ոսկերիչ Վաղինակին։ Խանութը դեռ բաց էր, — այնտեղ պայծառ լոյս կար, — ուստի և բոստանչին իր քայլերն ուղղեց դէպի այնտեղ։ Ներսում, դախլի յետևում, նստած էր ոսկերչի կինը։

— Բարի իրիկուն, հարս — աբլա, — ողջունեց Երանոսը։

— Աստու բարին, ախպեր։

— Ուստա Մկրտչի տունը ո՞րն է։

Ոսկերչի կինն ըստ երևույթին իր արժանապատուութիւնից ցած համարելով այդ հասարակ ուստայի տան տեղն իմանալը, դէմքը ծամռեց.

— Մեր տան դուռը ծեծէ, Վարոսին հարցուր։ Ես չիտեմ։

Նոյն րոպէին խանութ մտաւ ինքը՝ Վարոսը։

— Վարոս ջան, ուստի տունն էս ախպօրը նշանց տու,— դիմեց մայրը նրան։

Վարոսը ոտքից գլուխ չափեց բոստանչուն և առանց խանութից դուրս ելնելու, բացատրեց.

— Կ'իջնիս, կ'երթաս ուղիղ, մինչև Ջուխտախպուրը։ Էնտից էն կողմ՝ վրայ չորս տունն է։

Երանոսը դուրս ելաւ և գնաց։ Խանութում վառուող թէև նաւթի, բայց մեծ լամպի լուսաւորութիւնից յետոյ, այժմ հեռու և մօտիկ պլպլացող կրակները թուացին ա՛յնքան մանր և նրանցով լուսաւորուած Ջարի Բողազն ա՛յնքան մութ...

7

Ուստա Մկրտիչը դուռը բաց արեց։

— Նես համմեցի. Երանոս ախպէր։ Տունս խօ դժուար չգտա՞ր։

— Չէ, ընչի՞։

Փոքրիկ միջանցքում, դէմ-դէմի, գտնւում էին երկու դռներ։ Ուստան բաց արեց դրանցից մէկը և հիւրի հետ մտաւ ներս։ Նա երկու ձեռքով յետ տարաւ կանաչ մահուդէ ծանր վարագոյրները և նորից կրկնեց.

— Համմեցի։

Բոստանչին չափխան դրեց անկիւնի կլոր սեղանին, նարդու մօտ, և նստեց։

— Եա՛, — զարմացաւ ուստան, — էդ չեղաւ։ Առաջի անգամ աթոռքի վրայ նստող զոնախը վերջի անգամ տանտիրոջ գլխուն կը նստի։ Համմեցի թախտի վրայ։

— Լաւ է, նեղութիւն մի քաշէ, ուստա ջան։

— Է՛, ե՞ս եմ տանտէրը թէ դուն — կատակեց ուստան։ — Իմ տանս մէջ ուրիշ կարգադրութիւն չեղնի։

Երանոսը ծիծաղեց և տեղափոխուեց թախտին։ Յենուեց մութաքաներից մէկին և գրպանից թաշ-կինակը հանելով ճակատը սրբեց։

— Տուն խօ վրայ չհասա՞ւ։

— Չէ, լաւ պրծայ։

Ուստան գնաց դէպի դուռը, կիսաբաց արեց, ձայն տուեց մօրը, ապա պատասխանի չսպասելով՝ դուրս ելաւ։

Մինակ մնալով՝ Երանոսը չուրջը նայեց։

Սենեակի մէջտեղում դրուած էր մեծ, ծալովի սեղանը, որի մի թեւը բաց էր։ Նրա վարդագոյն նախշերով սպիտակ սփռոցի վրայ առատ լոյս էր յորդում առաստաղից կախուած չուգունէ գեղեցիկ լամպը՝ սպիտակ, մեծ լուսամփոփով։ Լուսամփո-փից վերեւ, ամբողջ սենեակում հաճելի կիսախա-ւար էր։ Իր դիմացի պատի վրայ, երկու լուսա-մուտների միջեւ, ամրացուած էր պատի լամպը, որ հանգած էր։ Լուսամուտները ծածկուած էին ժանեակաւոր սպիտակ վարագոյրներով, իսկ անմի-ջապէս ապակիները՝ դունատ վարդագոյն քողով։ Դուռը ծածկուած էր կանաչ մահուդէ ծանր վարա-գոյրներով։ Դրան պատի խորքի անկիւնում գտնը-ւում էր կլոր սեղանը՝ կարմիր շալէ ծածկոցով, որի վրայ Երանոսն իր չափխան էր դրել և որի կախ

ընկած ծոպերի հետ լուռ խաղ էր անում տան կատուն։ Միւս պատի խորքի անկիւնում դրուած էր բուֆետ-պահարանը։ Բոլոր պատերը ծածկուած էին գորգերով և նրանց վրայ խփուած էին զանազան ընտանեկան լուսանկարներ և այլ նկարներ։ Սենեակում կային նաև ուրիշ առարկաներ, շատ մանրմունր բաներ, որոնք գեղեցիկ և հաճելի էին դարձնում այն, բայց Երանոսը չզբաղուեց դրանցով։ Դրսում լսուեց ուստա Մկրտչի ձայնը, որն ինչ որ կարգադրութիւն էր անում։ Յետոյ մեղմ ճռաց միւս սենեակի դուռը։ Երանոսը գրպանից հանեց իր հօրից յիշատակ մնացած սև, փայլուն թութունի տուփն աստղ ու լուսնի արծաթագոյն նկարով և պատրաստուեց ծխախոտ փաթաթելու, երբ սենեակի դուռը բացուեց ու ծածկուեց. կանաչ վարագոյրները հանդարտ յետ գնացին և նրանց միջև, ոտից գլուխ նոյնպէս կանաչ գոյն հագած, երևաց ուստայի կինը։

Երանոսը ցնցուեց անակնկալից կայծակնահար եղած. ուստայի կինն անսահման նման էր Թըրքուհուն...

Մի վայրկեան բոստանչուն թուաց, թէ դա տեսիլք է, մի կանաչ տեսիլք, յայտնուած՝ դրան կանաչ վարագոյրների միջև։ Սակայն կինն առաջ շարժուեց և որովհետև դեռ Երանոսի հետ ծանօթ չէր, ապա միայն անցողակի բարևեց ու մօտեցաւ պահարանին։ Եթէ մի վայրկեան նոյնիսկ հնար լինէր ենթադրել, որ նա մի ինչ որ հրաշքով Թըրքուհին էր, ապա նա չճանաչեց բոստանչուն, իսկ նրա չփոթմունքն ամենայն հաւանականութեամբ վերագրեց իր անթերի գեղեցկութեան թողած տպաւորութեանը։

— Չար ես՝ խափանուլ, — մտածեց Երանոսը աչքերը սառած։ Նա շատ էր լսել, որ սատանան ինքը շատ յաճախ հրաշալի Թրքուհու կերպարանք առած, գալիս է մարդկանց խելքից հանելու, բայց երբեք իր աչքով չէր տեսել այդ բանը և երբեք էլ չէր հաւատացել։ Սակայն այժմ ահա նա իր աչքի առաջ... Թէ՞ հարբածութիւնից է այդ իրեն թւում և սենեակում ոչ ոք չկայ։ Եթէ չար ես՝ խափան-ուլիր, խափանուլիր...

Բայց եթէ մի վայրկեան հնար լինէր նոյնիսկ ենթադրել, որ նա ինչ որ հրաշքով Թրքուհին ինքն էր, ապա քիչ առաջ էր վերադարձել տուն, քանի որ դեռ դրսի հագուստով էր։ Նա հագել էր վառ կանաչ մահուդից ջուբբա՝ մուգ կանաչ գոյնի թաւիշ կրծկալով։ Գլուխը ծածկել էր մերթ կանաչագոյն և մերթ կապտագոյն երեւացող մետաքսէ թաշկինակով, որի ծայրերը նա թոյլ կերպով կապել էր ծոծրակի տակ։ Թաշկինակի տակից, նրա լայն ճակատի վրայ, երեւում էր վրան բազմագոյն ծանր թելեր կպցրած կանաչ թաւիշէ ճակատակալը, թանթանա, որի երկու ուռուցիկ ծայրերը գտնւում էին նրա համարեա քունքերի վրայ։ Թանթանայից ներքեւ, նրա մի ուռուցիկ ծայրից միւսը, գնում էին մարգարիտների շարքեր, իսկ դրանցից էլ ներքեւ՝ երկու շարք ոսկեդրամ, այնքան խիտ կերպով մէկ-մէկու վրայ եկած, որ նրանցից իւրաքանչիւրը հազիւ էր երեւում մի նեղ կիսալուսնով։ Քունքերի մօտ, ոսկու համահաւասար շարքերի տակից կիսով չափ կախուել էին երկու մեծ ոսկիներ, իսկ ճակատի մէջտեղում՝ մի երրորդը, աւելի մեծը։

Գիւմրուհու այդ ողջ գլխազարդը ծածկել էր

նրա ճակատի միայն վերին մասը, ոսկիների և յօնքերի միջև թողնելով ճակատի մի հրաշալի, լայն շերտ։ Նրա վզից ոսկէ նուրբ շղթայով կախուած էր մի փոքրիկ ժամացոյց՝ նոյնպէս ոսկէ։ Այժմ, երբ նա կռացել էր դէպի պահարանը, ժամացոյցը կախ էր ընկել և ճօճւում էր։ Ինքը շղթան շատ երկար էր և Հեղնարն ութ-ինն անգամ այն փաթաթել էր իր բարձր, սպիտակ վզի շուրջը։ Երբ նա շարժում էր գլուխը, նրա գլխի մետաքսէ թաշկինակը հուրհրատում էր մերթ կանաչ և մերթ կապոյտ։

— Իսկ եթէ յանկարծ նա թրքուհին ինքն է, — անցաւ Երանոսի մտքով և նա սարսափեց։ — Մեծ է զօրութիւնդ, Աստուա՛ծ։ Այս ի՞նչ մեղաւոր բաներ են անցնում նրա գլխով։ Նա վաղը կը գնայ Աստուածածնի եկեղեցին, հինգ մոմ կը վառի, տաս մոմ կը վառի իր պղտոր մտքերի մեղքը քաւելու համար։ Ի՞նչպէս կարող է ուստա Մկրտչի ընտանեկան սուրբ յարկի տակ ապրող անբիծ կինը լինել նոյն այն թրքուհին։ Չէ՞ որ եթէ այդ այդպէս է, ուրեմն նա թուրքական թաղամաս գնում է գաղտնի բանի համար։ Մեղա՜յ, մեղա՜յ քեզ, Աստուա՛ծ...

Բայց ինչո՞ւ նստել-տարակուսել ու մեղանչել։ Երանոսը կարող է ջուր խնդրել նրանից և փոխանակ «քուր ջան» ասելու, «բաջի ջան» ասել։ Եթէ բաջի խօսքի վրայ նա ինքն իրեն մատնեց, ուրեմն... Մեղա՜յ, մեղա՜յ քեզ, Աստուա՛ծ, դու ինքդ հանիր այդ կասկածը Երանոսի սրտից և թոյլ մի տա նրան՝ սուզել իր մեղաւոր միտքն ու այդպիսով աւելի մեղանչել...

Կինը պահարանի մօտ իր գործը վերջացրեց և յետ դարձաւ։ Երբ նա անցաւ Երանոսի մօտով, Երանոսը հազիւ կարողացաւ տիրապետել իր դեռ հար-

բաց ուղեղին, որպէս զի չկտրի նրա առաջը՝ ինչպէս ցերեկով և չրղաւի «բաջի»... Լաւ էր, որ կինն իս-կոյն յետ տարաւ դրան կանաչ վարագոյրները և կորաւ նրանց յետեւում՝ ինչպէս կանաչ տեսիլ...

Համարեա անմիջապէս դրանից յետոյ, դուռը բացուեց և այս անգամ ներս մտաւ ուստա Մկրտիչն իր ութ տարեկան տղայի հետ։

— Երանո՛ս ախպէր, ծանօթացի ժառանգիս հետ, իմ ամենաբանձր, ամենամեծ ախպըրիս հետ։ Գա-լո՛ւստ, ձեռքդ տու հօրեղբայրին։ Էդպէս... Հիմի, Երանո՛ս ախպէր, ես հաստատ գիտեմ, որ դուն լաւ մարդ ես։ Իմ Գալուստս մինչեւի հիմի մէկ գէշ մար-դում ձեռք չէ տուէ, քովը չէ գնացէ։ Իմ անմեղ երեխիս անմեղ հոգին իմ սրտիկ տաղըղս է...

Պարզ չեղաւ՝ կատա՞կ էր անում ուստա Մկըր-տիչը, թէ լուրջ էր ասում։ Երանոսն այնքան ցըր-ւած էր, որ անկարող եղաւ ուշադրութիւն դար-ձընել այդ բանի վրայ։

— Հիմի, Գալուստ ջան, քիչըմ խօսի հօրեղ-բայրի հետ։ Մէ քանիմ րոպէ ընձի նորից ներէ, Երանո՛ս ախպէր...

Եւ ուստա Մկրտիչը դարձեալ դուրս գնաց։

Երանոսը գրկեց երեխային։ Ուրեմն այն կինը տեսիլ չէր, այլ իրականութիւն։ Ահա և նրա տղան՝ նրան անչափ նման։ Երանոսը ձեռք է տալիս նրա սեւ մազերին, շօշափում է սպիտակ մորթը, նայում է մութ աչքերի մէջ։ Եթէ գոյութիւն ունի այս փոքրիկ երեխան, նշանակում է գոյութիւն ունի և նրա մայրը։ Դրանում կարելի էր բոլորովին էլ չկասկածել, բայց չէ՞ որ այնքան անակնկալ էր հան-

դիպումը, այնքան կարճատև էր նրա այցելութիւնը և այնքան մթագնած էր իր գիտակցութիւնը... Զարմանալի մի լոյս սփռուել էր սենեակում, իսկ այդ լոյսի մէջ կանգնել էր սքանչելի Հեղնարը...

8

Ուստա Մկրտիչը բացեց մի ճոխ սեղան։ Նրա մայրը նստել էր թախտի վրայ, Երանոսի կողքին։ Ինքն ուստան նստել էր աթոռին, մէջքը դէպի դուռը։ Երեխան կլոր սեղանի տակ խաղ էր անում կատուի հետ։ Սեղանին սպասարկում էր Հեղնարը, որն ուստայի խնդրանօք չէր փոխել իր դրսի զգեստը։ Նա յաճախ ներս ու դուրս էր անում, բայց յետոյ, երբ սեղանի վրայ ամէն ինչ արդէն իր տեղն էր, եկաւ և նստեց ամուսնու կողքին, ամուսնու և Երանոսի միջև։

Վառւում էր նաև պատի լամպը։ Նրա ուժեղ լոյսի տակ Երանոսն սկսեց աւելի ուշադիր նայել Հեղնարին։ Կինը հազիւ երեսունհինգ տարեկան լինէր։ Ունէր լիքը մարմին և փոքրիկ, նուրբ ձեռքեր։ Երբ խօսում էր ամուսնու հետ, թւում էր, թէ նա իր հայրն է, թէև ընդամէնը տասը տարուայ տարբերութիւն կար նրանց մէջ։ Բոստանչին նայում էր նրան անվայելուչ չափով երկար, անկարող՝ քողարկելու իր հետաքրքրութիւնը։ Ուստան և իր մայրը կա՛մ չէին նկատում այդ, կա՛մ չնկատել էին ձևացնում. իսկ Հեղնարն անկասկած զգում էր նրա հայեացքը, սակայն առանց մազաչափ չփոթուելու։ Ու նա զարմանալի կերպով նման էր Թըրքուհուն, աւելի նման, քան առաջին անգամ ներս մտնելիս։

Ուստա Մկրտիչը գինի լցրեց և վերցնելով բաժակը՝ դիմեց հիւրին.

— Երանո՛ս ջան, կենացդ։ Դուն բարով ես եկէ իմ տունս։ Ցանկանք և յուսանք, որ մեր բարեկամութիւնը երկարատեւ եղնի...

— Կենացդ, ախպէ՛ր, — ասաց Հեղնարը և բաժակ բարձրացրեց։

Երանոսը նայեց նրա բաժակին, յետոյ ոսկէ մատանիներ հագած նուրբ մատներին, յետոյ ջուբբայի լայն թեւքին, որի միջից երեւում էր Հեղնարի ձիւնափայլ թեւը, դաստակի վրայ հագած ոսկէ ապարանջանին, որն իր գունատ դեղինով զարդարել էր մաշկի սպիտակութիւնը։ Երանոսին թւում էր, թէ հիմա ինքը վար կը շպրտի իր բաժակը, «բաջի» կը բացագանչի և կ'ընկնի նրա ոտները։

— Կենացդ, օղո՛ւլ, — լսուեց ուստայի մօր ձայնը։

Բոստանչին սթափուեց և հայեացքը շուռ տուեց այն կողմ.

— Ամմէնքէդ էլ շնորհակալ եմ ձեր քաղցր հիւրասիրութեան համար։ Մկրտի՛չ ախպէր, շնորհակալ եմ քու բանձր պատուիդ համար, որ դուն ընձի ցուց կու տաս...

Երբ բոստանչին սկսեց խօսել, Հեղնարը յանկարծ լարուեց, կենտրոնացաւ։ Թւաց, թէ նա ուզում էր յիշել հիւրի ձայնը, բայց և իսկոյն հանդարտուեց։ Խօսելիս՝ բոստանչին մի քանի անգամ նայեց նրան և սոսկաց, որ յանկարծ, ո՛վ գիտէ, գուցէ իրօք նա թրքուհին է։ Այդ դէպքում, երեւի շատ շուտով կինը կը ճանաչի իրեն, երբ ուստա Մկրտիչը որեւէ առիթով յիշատակի իր բոստանչի լինելը։ Չգիտես ինչու՝ վախեցաւ։ Նա չէր ուզում ճանաչուած լի-

նել։ Գուցէ այն բանի համար, որ իրեն ճանաչելուց յետոյ կինը կարող էր շփոթուել, մատնել ինքն իրեն։

Երկրորդ բաժակն առաջարկեց ինքը, Երանոսը։ Նա գնաց կլոր սեղանի մօտ, բերեց այնտեղից երե-խային, նստեցրեց իր ծնկանը և սկսեց.

— Ես էս անմեղի կենացը կը խմեմ ամմենէն առաջ։ Դուն, հայր-աղա, էս տան մեծն ես, բա-ղում տարի քուկդ է եղէ ամենամեծ պատիւը, պա-տիւը հիմի էլ քուկդ է, հըմը էգուանն էս մար-դունն է։ Էգուան մարդիկ բոլորիս մահան պիտի էնեն, էսր պիտի պատուեն։ Ուստա՛ Մկրտիչ, թէ դուն էսր մէջ քու շնորքէդ բան դրած ունիս, ուրեմն գիտցի, որ էսր յարգողը քեզի յարգած կ'եղնի։ Հեղնա՛ր քուրիկ, թէ դուն քու սիրունու-թենէդ բան դրած ունիս, ուրեմն գիտցի, որ էսր սիրողը քեզի սիրած կ'եղնի։ Ծնողքը պիտի ապրի իրան զաւակի մէջ։ Գալո՛ւստ ջան, ես քու ան-ուանդ միտքը կ'ըսեմ, հըմը մահան չէնես, — Գա-լուստ՝ էդ էն է, որ պիտի գայ...

Երեխան ժպտաց և նայեց մօրը։ Մայրը խան-դաղատանքով թեքուեց և ամուր գրկեց նրան։ Եղաւ մի վայրկեան, երբ նրա թեւը չփուեց Երանոսի ձեռքին։ Երանոսը ցնցուեց կնոջ ջերմութիւնից և բաժակը վար դրեց։

— Բոյրիկ...

Նա կարկամեց։ Ինչո՞ւ դիմեց նրան և ի՞նչ ու-նէր ասելու։

— Բոյրի՛կ, — կրկնեց նա, — Մկրտիչ աղպէրս առաւօտուընէ իրիկուն տունը չէ, մէրս էլ պառա-կնիկ է...

Հեղնարը յանկարծ գունատուեց։ Ո՞վ գիտէ ի՛նչ վերջաւորութիւն էր սպասում նա հիւրի խօսքերից։

— Դուն ինքդ պիտի մենծցընես էս ճուղը, — շարունակեց Երանոսը։ — Էնպէս էրա, որ էնիկ միշտ դալար մնայ ու պտուղ տայ։

Հեղնարը ժպտաց, շնորհակալ եղաւ և բոստանչու մօտից վերցնելով երեխային, ակնածանքով թեքուեց դէպի ամուսինը։ Ուստան պայծառացաւ։ Երանոսը նայեց նրան և իր ամբողջ հոգով նախանձեց նրա երջանկութեանը, և իր ամբողջ հոգով խղճաց նրա դժբախտութեանը...

9

Եւ վերջապէս եկաւ ժամանակը, երբ պէտք էր Հեղնարի կենացը խմել։ Երանոսն ինքը լցրեց բաժակները և մտքի մէջ ընկաւ։

Ի՞նչ ասել բաժակի վրայ... Ակնարկե՞լ Հեղնարին, որ ինքն այն բոստանչին է, որը գիտէ նրա գաղտնիքի մի կէսը և գուշակում է միւս կէսը։ Կամ գուցէ հասկացնե՞լ տալ ուստա Մկրտչին, որ իր կինն ունի մի սոսկալի գաղտնիք, չլսուած ու չտեսնուած մի մութ պատմութիւն...

Բայց ի՞նչպէս թէ... Ախր Երանոսն ինքն էլ դեռ չի կարող հաւատալ այդ բանին. Թէեւ Հեղնարի դէմքը մի կաթիլ ջրի պէս նման է Թրքուհու դէմքին։ Կարող է պատահել, որ դա հրաշք է։ Հրաշքն աւելի է հաւատալի, քան այդպիսի չլսուած խայտառակութիւնը...

Բայց ախր ի՞նչպէս հաւատալ հրաշքի հիմա, երբ ողջ կեանքիդ մէջ ո՛չ տեսել ես, ո՛չ հաւատացել։

Գուցէ ստուգելն ամենից լաւ է...

Սակայն այդ միտքն աւելի սարսափեցրեց Երանոսին։ Եւ նա, դեռ ոչ մի որոշում չկայացնելով,

բաժակը վերցրեց և ոտքի կանգնեց։ Մի րոպէ մնաց լուռ, աչքերը խուփ. ապա շշնջաց.

— Ընտանիքի պատիւը սուրբ է... Հըմը սէրն էլ է սուրբ... Ո՞րն է աւելի սուրբ, Աստած գիտէ։ Վայ ընտանիքի պատուի հըմար իրան սէրը սպանէ՝ իրան կը սպանէ... Վայ նրա հըմար ընտանիքի պատիւը սպանէ՝ ընտանիքին կը սպանէ։ Տայ Աստած, որ ամէն տեղ ընտանիքն ու սէրը իրար բռնեն, իրար հետ եղնին...

Ուստա Մկրտիչը բոստանչուն լսում էր մեծ գոհունակութեամբ, իսկ նրա պառաւ մայրը գլխի մերթ ընդ մերթ շարժումներով տալիս էր իր համաձայնութիւնը։

— Ընտանիքի պատիւն արեատաւորի պէս է,— շարունակեց Երանոսը.— արեատաւորի ճակտի պէս բաց է, սրտի պէս ազնիւ, ձեռքի պէս հալալ...

Երանոսը յարգանքով լցուած մի հայեացք գցեց ուստայի կողմը, լսեց մի վայրկեան, ապա նորից շարունակեց.

— Հըմը սէրը Թուրքի կնկայ պէս է...

Հեղնարը կայծակի արագութեամբ գունատուեց և ողջ մարմնով թեքուեց հօրի կողմը։

— Թուրքի կնկայ պէս սէրն էլ չադրի տակ է, որ ոնչ տեսնել է կարելի, ոնչ իմանալ...

Ոչ ոք չէր նկատել Հեղնարի գունատուելը։ Երանոսի վերջին խօսքերից յետոյ՝ նա, ըստ երեւոյթին տեսնելով, որ Թուրքի կնոջ յիշատակութիւնն իրեն չէր վերաբերում, այլ միայն համեմատութեան համար էր, հանգստացաւ և սկսեց խաղ անել երեխայի հետ։

— Ուստա՛ Մկրտիչ,— դիմեց բոստանչին նրան,— դուն իմ մենծ ախպէրս ես։ Թէ բանծիս մէջ

սխալմունք չանեմ, ներող եղի։ Հըմը ինչքան որ իմ խելքս կը հասնի, ես էսպէս գիտեմ.— աղամարդն ընտանիքի սունն է, իսկ կնիկն՝ երդիքը։ Սունն թրան գլխու վրայ պիտի պահէ երդիքը։ Հըմը երդիքն էլ պիտի արգիլէ, որ ոնչ թէ մեննակ անձրեւը չցուի սունը, այլ օտար աչքը նես չաշէ։

— Ճշմարիտ է, Երանոս ջան,— հաստատեց ուստան և դարձաւ դէպի մօրը՝ հաւանութեան ակընկալումով։

Մայրը ժպտաց և գլխով համաձայնութեան նշան արաւ։

Երանոսը կտրուկ դարձաւ դէպի Հեղնարը, գինին մօտեցրեց իր շրթունքներին և ասաց.

— կենացդ, բաջի՛...

Մի ուժեղ ճիչ խառնեց սեղանի խաղաղութիւնը։ Ուստան նետուեց դէպի կինը, Երանոսը վար գցեց չդատարկուած բաժակը, իսկ ուստայի մայրը թախտից իջաւ վար, չփաթուած կերպով ոտքը չօշափեց յատակի վրայ, փնտռեց բաբուջները, հագաւ և նոյնպէս մօտեցաւ Հեղնարին։ Երեխան կանգնել էր մօր մօտ և զարմացած նայում էր։

— Անհանգիստ մի եղնի, Երանո՛ս,— դիմեց ուստա Մկրտիչը նրան։ —Կ'անցնի։ Էս մէ ամիս է, որ Հեղնարս էսպէս է. մէկ-մէկ կը ճչայ ու գոյնը կը քցէ։ Վախեցած կ'եղնի։ Նստի, ես հիմի կու գամ...

Նա չափազանց մեղմ ու սիրով բռնեց իր կնոջ ուսերից, վեր բարձրացրեց նրան ու տարաւ։ Դրան մօտից նա յետ նայեց և դիմեց մօրը, որն առանց այն էլ գնում էր նրանց յետեւից։

— Արի, մայրի՛կ, վախը բռնէ...

...Դատարկուած սենեակում մենակ նստած,

Երանոսը նորից լսեց ննջասենեակի դրան ձայնը, որից յետոյ ամէն ինչ լռեց։ Կատուն աննշչուկ անցաւ յատակին փռուած գորգի վրայով, գնաց նստեց նրա մի անկիւնում և աչքերը կիսախուփ՝ սկսեց մտածել։

Երբ ուստա Մկրտիչը նորից ներս մտաւ, Երանոսն արդէն չափխան ծածկել էր։

— Ո՞ւր, ախպէ՛ր։

— Երթամ, ուստա՛ ջան։ Հա՛մ ուշ է, հա՛մ էլ քոյրիկս...

Ուստան չպնդեց։ Երբ հասան դրսի դրան մօտ, նա բռնեց բոստանչու ձեռքը․

— Ներող կ՚ըլնիս, Երանո՛ս ախպէր, պատահմունք է։ Մէ ուրիշ անգամ ըմ աւելի ուրախ բարի գիշեր կ՚ըսենք իրար։

Հեռուում, Զարի Բողալի բոլորովին անլոյս մի անկիւնում, մի շուն հաչում էր տխուր, խորը և միալար։ Թւում էր, թէ դա արձագանգ է և ոչ իսկական հաչոց...

Երանոսը գնաց։

10

Առաւօտեան, Երանոսին գտան իր հոլիկի դրան առջև, թախտի վրայ պառկած, դանակը կրծքի մէջ։ Քրէական և բժշկական քննութիւնն այդ դէպքն արձանագրեց իբրև անյայտ պատճառներից դրդուած ինքնասպանութիւն։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1

Իբրահիմի ղայֆախանան սովորականի պէս բազմամարդ էր և սովորականի պէս լուռ։ Ովքեր հիւանդ էին և չուկայ չէին գնացել, ովքեր ծեր էին և չուկայ չէին գնացել, ովքեր այս կամ այն պատճառով չէին բացել իրենց արհեստանոցներն ու խանութները և տանն էին, իրենց ամբողջ ցերեկն անցկացնում էին ղայֆախանայում։ Ընդհանուր լռութեան մէջ լսւում էին միայն նարդիների զառերի չխկոցները և լուացուող բաժակների ձայնը։ Իբրահիմը կանգնել էր դախլի յետեւում, իսկ դախլի վրայ շարուած էին վեց-եօթ նարգիլէ՝ տարբեր չափի ու ձեւի։ Կողքի պատերից մէկի վրայ խփուած էր շահ-աբբասի կոչուող շատ հին և շատ թանգ մի գորգ, իսկ նրա դիմաց խփուած էր խորասանի կոչուող շատ նուրբ և շատ ընտիր մի գորգ։ Դիմացի պատի վրայ, դախլի յետեւում, կախուած էին պղնձէ զրահներ և պողպատէ թրեր, որոնցով յանուն խալաֆի կռուել էին գնացել Իբրահիմի պապերի պապերը և նրանց էլ պապերը։ Դախլի մի ծայրում փաթաթուած դրուած էին երկու նամազլըղ փոքրիկ գորգեր և շարուած էին նամազի մի քանի կոնքեր։ Դիմացի պատը խանութի առջեւապատի նման ամբողջովին ապակուց էր և զուրկ էր որեւէ զարդարանքից, բայց

այնտեղ, դրան վերեւ, կախուած էին դաֆ, թառ և քամանչա։ Դաֆը կախուած էր մաշկով դէպի պատը։ Երբ ներս մտնող ոեւէ մէկը դուռն ամուր վրայ էր դնում, նրա փուլերն օրօրւում էին և հազիւ լսելի զնգզնգում։ Վերջին անգամ ե՞րբ էին նուագել երաժշտական այդ գործիքները, ոչ ոք չգիտէր։ Յունական, հայկական և թուրքական դաւուլ-զուռնան միակ տիրապետող գործիքն էր Գիւմրիում, որը և դուրս էր մղել պարսկական թառ-քամանչան։ Ուրբաթ երեկոները Իբրահիմն աւելի ուշ էր փակում իր ղայֆախանան, ուր ցատկաշէս այդ օրերի համար հրաւիրուած դաւուլ-զուռնայի խումբը նուագում էր Գիւմրու հռչակաւոր եղանակները։ Ամփինչք՝ ի հարկէ չկար, և մարդիկ լսում էին լուրջ ու մտախոհ... Իւրաքանչիւր րոպէ ներս էին մտնում նորանոր մարդիկ։ Իսկ այժմ, սովորական ցերեկով, ժամանակն անցնում էր և ոչ ոք չէր գալիս։ Ու-երբ կէսօրն աւելի բորբոքուեց ու փողոցում դիմացի պատը ողողուեց ամենապայծառ լոյսով, դուռը բացուեց և սպասուած թարմ յաճախորդի փոխարէն ներս մտաւ մոլլան։ Նա շտապ պատասխանեց բոլոր բարեւներին, արագ գնաց դէպի խորքը և նստեց անկիւնի դատարկ սեղաններից մէկի մօտ։ Նա մոռացաւ դրան մօտ հանել իր բաբուջները, որոնք յատակի գորգի վրայ թողեցին փոշու նկատելի հետքեր։ Այդ նշանակում էր, որ մոլլան յուզուած էր անսովոր յուզումով, որովհետեւ չէր պատահել նրա հետ բազմաթիւ տարիներ։

Մոլլայի դեղին տամաշներ են՝ իրենց գոյնով ու մաշկով կիտրոնի կեղեւից ոչնչով չտարբերուող։ Նրանք այնքան սիրուն են հագնուած ոտքերի վրայ և այնքան նման են ոտքերի, որ հեռուից թւում է,

թե մարդը նստել է բոբիկ, թաթերը բաց։ Իսկ բաբուջները լոկ ներբաններ են, որոնց երեսները բաղկացած են միայն քթերի փոքրիկ կաշիներից՝ նույնպես դեղին։ Այնքան փոքր է լինում քթի կաշին, որ ոտքի մատները հազիւ են տեղաւորւում այնտեղ՝ մինչև իրենց արմատները։ Անվարժ մարդուն տարօրինակ է թւում, թէ ի՞նչպէս է լինում, որ քայլելիս ոտքը դուրս չի պրծնում բաբուջների միջից։ Իւրաքանչիւր քայլի վրայ՝ բաբուջների ներբանները չրմփալով կպչում են մէկ մի կրունկին, մէկ՝ միւս։ Այդ յաւիտենական մանրիկ ապտակներից մաների կրունկները մաշւում են և գունատւում։ Այժմ նոյնպէս, երբ մոլլան վեր կացաւ նստած տեղից և յուղուած քայլեց, բաբուջներն սկսեցին իրենց ապտակները։ Իբրահիմը մօտեցաւ մոլլային։

— Մէ՛ տեսակմ ես, մոլլա՛։

Թէև ամառ էր, բայց մոլլան իր ուսերի վրայ կրում էր քիրմանշահի մի ընտիր շալ։ Նա կանգ առաւ, ձգեց շալի ծայրը, բայց ոչինչ չասաց։ Բարձրահասակ ու նիհար՝ նա նայեց վար, դէպի Իբրահիմի հարցական աչքերը։

— Հը՞,— պնդեց ղայֆաչին։

— Մէ չայըմ բէ,— ասաց մոլլան և նորից վերադարձաւ իր տեղը։

Իբրահիմը լցրեց թէյը և իր ձեռքով տարաւ։ Չնայած այն բանին, որ նա հետաքրքրւում էր մոլլայի անհանգստութեամբ և շտապում էր որևէ բան իմանալ, բայց դարձեալ չմոռացաւ թէյը լցնել իրեն յատուկ վարպետութեամբ. նախ լցրեց ջուրը բաժակի կիսից մի քիչ աւելի, ապա լցրեց գոյնը այնքան ճարտար, որ նա մնաց ջրի երեսին՝ առանց

խառնուելու նրա հետ։

— Նստի՛, — շշնջաց մոլլան, երբ Իբրահիմը բածակը դրեց նրա սեղանին և ձևացրեց, թէ ուզում է հեռանալ։ — Նստի... նստի ու լսէ։ էն վո՞վ է էնտեղ. հաջի Քեարի՞մն է։ Հաջի՛ Քեարիմ...

Մի սպիտակամազ, առույգ ծերունի նոյնպէս մօտեցաւ մոլլայի սեղանին և նստեց։

— Հաբիբէն...

Մոլլան մի վայրկեան ընդմիջում առեց և նայեց սեղանակիցներին։ Նրանք ծայր աստիճան լարուեցին։

— Հաբիբէն սիրական ունի...

— Ի՞նչ, — բացագանչեց հաջին։

— Սո՛ւս..., — զգուշացրեց մոլլան, բայց արդէն մի քանի սեղանների վրայ ընդհատուեցին զառերի չխկոցները, մի քանի հասակաւոր մարդիկ վեր կացան իրենց տեղերից և մօտեցան մոլլային։

— Աթոռքներդ մօտ քաշէք՝ նստէք, — ասաց մոլլան։

— Հաբիբէն սիրական ունի, — մունչաց հաջին՝ պատասխանելով նոր հաւաքուածների հարցական հայեացքներին։

— Սիրակա՞ն, — հարցրեց նրանցից մէկը գործնական ու հանգիստ տոնով և սկսեց ծխախոտ փաթթել։ — Լաւ չէ։ Մեր անունը կը մունդըռէ։

— Սըպանել է հարկաւոր, — վրդովուեց տաքարիւն հաջին։ — Սըպանելը քիչ է։ Բիաբուռ էնել է հարկաւոր։

— Ամմէնից լաւն էն կ'ըլնի, որ քեաբինենք իրար հետ, վերջանայ երթայ, — ոչ լուրջ կերպով առաջարկեց նոյն գործնական մարդը և ծխախոտը վառեց։

— Ուրտից որ եկել է՝ թող էնտեղ երթայ,— ատամների արանքից բաց թողեց Իբրահիմը։ —Մենք մեր ձեռքերն արունքի մէջ չենք թաթխէ։

Յանկարծ, համարեա միանգամից, բոլորն սկսեցին մտածել միեւնոյն նիւթի մասին։ — Իսկ ո՞վ է վայելում այդ գեղեցկուհուն, որի աչքերի մասին հրաշքներ են պատմում... Իրենց թաղամասի ո՞ր տղամարդուն է վիճակուել այդ երջանկութիւնը։ Թէ՞ գուցէ ոչ իրենց թաղամասի... Եւ յանկարծ, համարեա միանգամից, բոլորը դիմեցին Մոլլային.

— Իսկ ո՞վ է սիրականը։

Մոլլան սառած թէյը մի կողմ հրեց, թաղբեհը սեղանի վրայ դրեց եւ սկսեց խաղալ նրա հատերի հետ։ Մի քիչ յետոյ գլուխը վեր առաւ եւ յայտնեց.

— Հաբիբէի սիրականը...

Մարդիկ այնպէս նայեցին, որ կարծես նրանց աչքերն ուզում էին կէս ճանապարհին բռնել Մոլլայի խօսքերը եւ տեղնուտեղը լափել։

— Հաբիբէի սիրականը հայ է...

Աննկարագրելի աղմուկ ու գոռոց բարձրացաւ։ Իւրաքանչիւրն այնպէս զգաց, թէ կացինի սուր բերանով խփեցին իր գլխին։ Իւրաքանչիւրն այնպէս զգաց, թէ Հաբիբային խլեցին իրենից։

— Կը սպանենք, մարգարէի միրուքը վկայ... Վո՞վ իրաւունք ունի մեր օղլուշաղին։

— Ամմէն գեղի ոսկոռն իրան չանը պիտի հասնի... Վո՞վ իրաւունք ունի մեր ոսկոռին...

Այդ խօսքերից յետոյ, փրփրակալած զայրոյթը քարացաւ մի րոպէ, ապա գլորուեց դէպի հակառակ կողմը,— դէպի Թրքուհին, որն այնքան սքանչելի էր եւ անմատչելի։

— Գառի պէս կը մորթենք... Ի՞նչըղ թէ հայի տղի հետ...

— Կը չոքեցնենք իրան մեղքի դրանը առաջը, ճիտը կը կտրենք։ Հայ տղի հե՞տ...

— Մատաղ կ'ենենք չարխաթին։ Քրիստոնի հե՞տ...

Ընդհանուր աղմուկի մէջ Իբրահիմը խօսեց հանդարտ ու կամացուկ, ուստի և նրա ձայնը լսելի դարձաւ բոլորին.

— Չեմ կրնայ աւատա... Ո՞ր հայն էրքան նամուսըղ կ'եղնի։ Ախպօր պէս հալալ կ'ապրէինք իրար հետ, իրար չոռ չէինք ըսէ, հըմը էնոնք մեր աղջկա՞ն...

Աղմուկն իջաւ։ Մոլլան նորից հաստատեց իր խօսքերի ճշմարիտ լինելը։

— Սըպանելը լաւ չէ, — շարունակեց Իբրահիմը։ — Ուրտից որ եկել է, թող էնտեղ էլ երթայ։ Մեզի էդ տեսակ թուրք հարկաւոր չէ։ Իսկ տղի գործը մենք կու տանք իրանց ալսախալ մարդոց, թող էնոնք թքեն էնոր երեսին։ Ի՞նչ կ'ըսես, մոլլա՛։

Մոլլան ափի մէջ հաւաքեց իր ցանցառ, կարճ մօրուքը և սկսեց մտածել։

— Ըպը ի՞նչըղ իմացար, մոլլա՛, — հարցրեց հաջին։

— Սաֆարի երեխէքն էին տեսէ հայի տղին՝ Հաբիբէի տունը մտնելու վախտը։

Տիրեց խոր լռութիւն։ Եւ այդ լռութեան մէջ հազիւ երեք վայրկեան անցաւ, երբ գործնական մարդը ծխափողը թխկթխկացնելով սեղանի ծայրին, ծխախոտի մնացորդը մաքրեց նրա միջից և առաջարկեց.

— Մէ բանըմ մտածէք։ Իրիկունը մերոնք բազարից կու գան, Հաբիբէին կը սըպանեն։ Կա՛մ մենք ըսպանենք, կա՛մ էդոր առաջն առնինք...

Նա այնքան գործնական տոնով էր խօսում, որ թւում էր, թէ կատակ է անում։ Սակայն նրա խօսքերը բոլորի ուշադրութիւնը թեքեցին դէպի նշած կողմը։ Ու մինչդեռ նրանք մտածում էին, նա նորից առաջարկեց.

— Աղջկան վռնդենք, իսկ տղին ծեծենք։ Իբրահիմ, հաջի Բեարիմի դաւաղանն էստեղ բէ։

— Տղին ծեծենք..., — համաձայնուեցին մի քանիսը.— Հըմը աղջկան...

Նրանց սրտերը, ովքեր դեռ ծեր չէին, սեղմըւեցին խանդից և այն մտքից, որ մի անծանօթ գեղեցկուհի եկաւ իրենց թաղը, սէր արաւ բոլորովին կողմնակի մարդու հետ և այժմ պէտք է հեռանայ, թէկուզ և վռնդուելու ձեւով... Աւելի լաւ չէ՞, որ նա ընդմիշտ մնայ իրենց մօտ, թէկուզ և գերեզմանի մէջ... Խփել դանակը, վրնջալ չյագեցած և այլեւս երբեք չյագեցող կարօտից, իսկ գիշերը, անցնելով նրա անշիրիմ հողաթմբի մօտից, գնդակի նման ծանր մի քանի կաթիլ արցունքներ կաթեցնել նրա վրայ...

Մէկը տեսել էր նրա աչքերը, միւսը՝ ճակատը, երրորդը՝ նուրբ ձեռքը։ Երբեմն քամին բարձրացրել էր նրա չադրայի և շրջազգեստի փէշը, երբեմն քամին փչել էր յետեւից և չադրան ու շրջազգեստը ամուր փակցնելով նրա մարմնին՝ քանդակել էր նրա գեղեցիկ մարմնաձեւերը... Իսկ յետոյ, սուրճի մանրիկ գաւաթների վրայ գլուխները կախած, նրանք երկար խօսել էին իրար հետ, նրանք երկար պատմել էին ու նկարագրել, և ահա բոլորի ուղեղներում ամբողջացել էր Հաբիբան իր ողխտակ ճակատով ու սեւ աչքերով, բարակ ձեռներով ու լիքը կրուծքներով, մօտիկ, բայց անմատչելի...

— Շարխաթը...

Բոլորն սթափուեցին. Բոլորը նայեցին մուլլային.

— Շարխաթը չատ գէշ բան կը պահանջէ, հաւատացեալնե՛ր... Հըմը ես ձեզնէն էգ գէշը չեմ ուզէ. Եկէք կակուղսիրտ եղնինք ու թող Ալլահն ընձի պատժէ իմ բարի խասիաթիս հըմար... Աղջըկան վռնդենք, իսկ տղին ծեծենք... Ես իմ մենծ կնկաս էսօր կը ղրկեմ Հաբիբէի քովը...

Հաջին և միւս բոլոր հաւատացեալները գլուխներն օրօրեցին դրական կերպով՝ թէ՛ իրենց փոխարէն, թէ՛ նրանց՝ ովքեր չուկայումն էին, և թէ բոլորի...

2

Ցերեկուայ պայծառ անդորրը տարածուել է բոստանների վրայ։ Ամէն ինչ անշարժ քարացել է այնտեղ, բայց դա շոգի թմրութիւն չէ, այլ միջօրէի խաղաղութիւն։ Արեւը լճացել է բոստանների վրայ, դաշտերի վրայ՝ հորիզոնից հորիզոն։ Խոշոր, մուգ պուտերով երեւում են առանձին ծառախմբեր մարգերի ափերին կամ հոլիկների մօտ։ Շոգն ու հովն ապրում են կողք-կողքի։ Մի զովացնող քամի հանդիսաւոր ու ծանր խշշացնում է սաղարթները, որոնք հովահարում են իրենց տակերում հանգստացող մարդուն կամ կենդանուն։

Հոլիկի մօտ, ծառերի տակով, սահում է վճիտ ջրի առուն, սահում է արագ, բայց բոլորովին լուռ։ Երբեմն միայն, ջրի մի կոհակ բարձրանալով մի փոքրիկ քարի վրայ և իջնելով, ծլլթում է կամացուկ։ Կարծես աղջիկ մտաւ ջուրը լողանալու և նրա սառնութիւնից վախեցած՝ սրտփաց։ Վերեւում, ուռի-

ների ճյուղերի մեջ, որոնց նայելիս մարդու աչքերը շաղվում են արևի ամենամանր պատառների և ամենամանր տերևների խառնուրդից, համատարած կերպով լսվում է պիծակների համաչափ անըմբռնելի, նուրբ բզզոցը։ Նրանք աննկատելի են և պտըտվում են իրենց նման աննկատելի ծաղիկների շուրջը։ Նրանց բզզոցի հետ խառը՝ դեպի կանաչ գետինն է իջնում այդ անհամար ծաղիկների սքանչելի բույրը՝ նույնքան անըմբռնելի, նույնքան նուրբ։

Հեռուում, ուր վերջանում են բոստանները և ուր փոքրիկ կոյտերով թափված են պսպղացող ապակու կտորտանքով լի աղբակոյտեր՝ մխալար, կանոնավոր ընդմիջումներով և մտածկոտ, լսվում է յոպոպի ձայնը. — հօ-պօ... Լռությո՜ւն խորը և պայծառ. հօ-պօ... Լռությո՜ւն ջերմ ու խաղաղ... հօ-պօ... Ցերեկ... Անշարժություն... Մարդիկ կարող են ժամերով պառկել մեջքի վրա, ուռիների տակ, արխի մոտ, զգալ սաղարթների թարմությունը, ճյուղերից իջնող քաղցր և գլխահանող բույրը, պիծակների բզզոցը, ջրի յանկարծակի ծկլթոցը և լսել արևոտ հեռուից եկող հանդիստ, խաղաղ և անմարմին ձայնը.— հօ-պօ... Յետոյ հաճելի լռություն և յետոյ նորից՝ հօ-պօ... Լռությունը չի խախտվում այդ ձայնից, խաղաղությունը չի վըրդովվում, այլ նրա իւրաքանչիւր կրկնությունից յետոյ դառնում է ավելի խորը, ավելի լայնատարած...

Երբեմն հեռուում, որևէ ծառախմբի տակով կամ ծառուղով անցնում է մի մարդ, բահն ուսին և ոտաբոպիկ. Հօ-պօ, — լսվում է նույն րոպեին, և

մարդը նույնպես թևում է անմարմին ու խաղաղ պատկեր... Երբեմն, զբոսնելու դուրս եկած երկու աղջիկներ մտնում են բոստաններից մեկը և քայլում են ծառերի ստվերներով։ Նրանք հագած են լինում աննկատելի վարդագույն երիզներով սպիտակ շրջազգեստներ, սպիտակ գուլպաներ և սպիտակ գլխարկներ։ Շրջազգեստները խշշում են և նրանցից բուրում է մատաղահասակ աղջիկների յուրահատուկ բույրը,— անմեղությունը։ Իրենց անբիծ հագուստներով նրանք նման են լինում խնձորենու ծաղկի,— սպիտակ և աննկատելի վարդագույն։ Նրանք անցնում են ուրախ ծիծաղներով ու կանչերով, միայն երկուսով լցնելով ամբողջ լռությունը։ Իսկ հետո, հեռու ստվերի մեջ կորչում է նրանց ճռվողյունը, նորից վրա է հասնում համատարած լռությունը, նորից լսվում է՝ հո-պո, և աղջիկները նույնպես թևում են անմարմին պատկեր...

Հեռու պատի վրա բացվում է Երանոսի բոստանի դուռը և ներս է մտնում ուստա Մկրտիչը։ Նա էլ է թևում անմարմին երազ, որը գոյություն է ունեցել երբևէ, ապրել է և աշխատել, ապրել է և մեռել, իր հետ տարել է նաև իր աշխարհը, բայց այժմ նորից է վերակենդանացել, այն էլ միայն երևութականորեն, այն էլ միայն մի վայրկյանով, և հենց այդ պատճառով էլ հանդիսավոր է տասնապատիկ անգամ ավելի։

3

Ուստա Մկրտիչը մոտեցավ Հոլիկին։ Հեռու մարգերից մեկում, Երանոսի միջնեկ եղբայր Գեղամը բահը խրեց հողի մեջ և շտապեց դեպի նա։ Հոլիկի ետևից նախ նայեց, ապա դուրս եկավ Երա-

նոսի կինը, որն այնտեղ զբաղուած էր կանաչեղէնի դաստաներ կապելով։

— Բարեւ, քուր։

— Բարեւ, ախպէր։

Ուստան Երանոսի ընտանիքի հետ ծանօթացել էր բոստանչու թաղման օրը, ուստի և, նայելով աջ ու ձախ, հարցրեց.

— Ըպը Մանանս ո՞ւր է։

— Բարեւ, ուստա՛ ջան, — ասաց Գեղամը տեղ հանելով։

— Ասսու բարին, օղո՛ւլ. Մանանս ո՞ւր է։

— Գնած է, ախպէ՛ր, — ասաց կինը և գլխով ակնարկեց դէպի արխի այն մասը, որի եզերքներին չարուել էին սաղարթախիտ ուռիները։ Ուստան շտապեց այնտեղ։ Կինը և Գեղամը հետեւեցին նրան։

Ուստան աչքերով փնտռեց, նկատեց և քայլերն ուղղեց դէպի աղջիկը։ Նա պառկել էր կանաչի վրայ՝ մանկական անփութութեամբ բաց անելով իր փոքրիկ, կլոր սրունքները։ Կարճ շրջազգեստը վեր էր քաշուել, և նրա ծնկները թաղուել էին խիտ կերպով բուսած սպիտակ, մանր ծաղիկների մէջ։ Նա իր գլուխը դրել էր մի թեւի վրայ, միւս ձեռքը դրել էր կրծքին՝ կարծես պաշտպանելով խուտուտ անող չարաճճի ինչ որ մէկից։ Նրա սեւ մազերն անմիջապէս վերջանում էին խոշոր, կլորիկ խոպոպներով։ Նրա մազերին կապուած էր մի լայն, պայծառ-կանանչ ժապաւէն։

Ուստան նայեց նրան սիրով ու գուրգուրանքով և ուզում էր կռանալ դէպի նա, երբ իր ուսի յետեւում լսեց կնոջ հեծկլտոցը։ Արագ յետ շրջուեց։

— Բո՞ւր...

— Որբ ու անտէր մնաց...

— Աստված ողորմած է, քո՛ւր։ Սաղ միան հօրախպէրները, սաղ մնաս դուն։ Աչքերդ սրբէ։

— Մի լա, հարս-խանում ջան,— գուրգուրեց Գեղամը խելօք ու մտածկոտ աչքերով։ — Ախպէրս էդ բանը չպիտի անէր, հըմը... Մի լա...

Ուստա Մկրտիչը թեքուեց դէպի գետին, վերցրեց այնտեղից աղջկան, գրկեց, վերադարձաւ դէպի հոլիկ։ Նստեց պատի տակ դրուած թախտի վրայ, ուշադիր նայեց դեռ քնած երեխային և համբուրեց նրա ճակատը։

— Վեցը թամամա՞ւ։

— Ջմեռը թամամաւ, ախպէ՛ր։

— Մէ խորուրդ եմ էրէ, քո՛ւր,— ասաց ուստան՝ գրկից բաց չթողնելով աղջկան։ — Դուն էլ լաւ լսէ, Գեղա՛մ, հիմի դուն ես տան գլխաւորը։

Կինը նստեց։ Գեղամը չարունակեց պատկառանքով կանգնած մնալ ուստայի առջեւ։

Ուստան մտածեց։ Յետոյ, երբ ուզում էր սկսել, յանկարծ փոխեց մտադրութիւնը, նորից համբուրեց երեխային, յանձնեց մօրը և ասաց.

— Ծաղկի պէս պահէ հարսիս, քո՛ւր...

Կինը շառագունեց, արագ նայեց երեխային, ապա խանդաղատանքով և ամուր-ամուր համբուրեց։ Երեխան արթնացաւ, մազերը յետ տարաւ ճակատից, ժպտաց և փորձեց հասկանալ, թէ ո՛րտեղ է ինքը։

— Գեղա՛մ,— խիստ ձայնով դիմեց ուստան նրան,— աղջկանս մա՜զին դիպնող չեղնի։ Գլուխդ տու,— ես էլ իմ գլուխս կու տամ,— հըմը ծաղիկս թող դալար մնայ...

Գեղամը մեծավարի մտածեց և ապա գլուխն ի նշան հնազանդութեան խոնարհելով, ասաց.

— Թող քու կամքդ ըլլի, ուստա՛ ջան։ Դուն էն տեսակ մենծ պատիւ կ'ընես մեզի, որ էլ մենք ի՞նչ կրնանք ըսէ։

— Քո՞ւր...

Ուստան հարցական նայեց նրան։

— Տէգրոջս խօսքն իմ օրէնքս է, ախպէ՛ր։

— Սրտինդ ըսա, քո՛ւր։ Ուսումն էլ է մեր օրէնքը, հըմը մեր սրտին որ հարցնե՞ս...

— Խօսք չկայ բերանս, ախպ՛ր, որ սրտիս ուրախութիւնը ըսեմ։ Դուն իմ որբիս հէր դառնալ կ'ուզես, դուն իմ անբախտիս բախտ տալ կ'ուզես, դուն իմ Մանանիս...

Եւ չկարողանալով զսպել ո՛չ ուրախութիւնը, ո՛չ լացը, նա նորից համբուրեց երեխային։ Երեխան, լսելով իր անունը, նոյնպէս ժպտաց և մօր գրկից վար ցատկելով փախաւ։ Ըստ երեւոյթին նա ամաչեց, որ երեք հասակաւոր մարդիկ զբաղուած են իր նման մի փոքրիկ թռչնիկով։

Ուստան պայծառ աչքերով նայեց նրա յետեւից, ապա ժպտաց իր բեխերի մէջ և գրպանից հանելով կէս շիշ օղի, դիմեց Գեղամին.

— Բաժակ բէ։

Բայց և իսկոյն ուրիշ որոշում ընդունեց.

— Կայնի, բաժակ հարկաւոր չէ։ Գնա երկու խիար քաղէ...

Գեղամն արագ գնաց, մտաւ վարունգի մարգը, քաղեց երկու հատ և վերադարձաւ։

— Դանակ էլ բէ։

Երբ Գեղամը մտաւ հոլիկ, ուստայի դէմքը մի վայրկեան խիստ արտայայտութիւն ընդունեց և նա դիմեց Երանոսի կնոջը.

— Քո՛ւր, լաւ գիտնաս, որ մենծ պատիւ կ'ը-

նեմ ձեզի։ Իրան սըպանող մարդու ընտանիքի հետ բարեկամութուն էնելն օրինաւոր բան չէ։ Որ ուրիշներն օրինակ առնին՝ ես եմ մեղաւորը...

Գեղամը դանակը բերեց և տուեց ուստային։ Նոյն րոպէին կինը ճչաց, Գեղամը չփոթուեց և ձեռքը մեկնեց դէպի ուստան.

— Տո՛ւ դանակը... Ուրիշը բերեմ... Չնկատեցի, որ էս էն դանակն է...

Ուստան նրա ձեռքը յետ ծալեց.

— Մի սխալուի, օղո՛ւլ։ Աստած ինքն է քեզի ըսէ, որ էս դանակը բերես։ Էսիկ չար դանակ էր, հըմը իրան չարութունը դարտըկեց։ Հիմի էսոր մէջը մեննակ բարին է մնացէ։ Ըսել է՝ մեզի բախտաւորութուն պիտի բերէ...

Նա կտրուկ շարժումով վարունգը երկու մաս արեց, փորեց միջուկը և դարձրեց բաժակներ։ Վերցըրեց միւս վարունգը, մի բաժակ էլ պատրաստեց նրանից։ Օղին լցրեց դրանց մէջ, մէկն ինքը վերցըրեց, միւսները տուեց կնոջն ու Գեղամին։

— Մեր ուխտի կենացը... Լուս իջնի Երանոսի մեղաւոր հոգու վրայ... Տայ Աստած, որ աշխըրքիս երեսին հէչ մէ մարդըմ մեր ուխտը քանդել չկըրնընայ։ Բարով մենծընան Մանանս ու Գալուստս, իրար հասնին, ուրախ եղնին, բախտաւոր ապրին...

Ուստա Մկրտիչը մի ումպով դատարկեց օղին և վարունգը կերաւ։ Գեղամը նոյնն արաւ։ Կինը խմեց մի քիչ և արցունքներն աչքերից գլորելով մնացած օղին թափեց դանակի վրայ.

— Դուն էլ խմէ, անգո՛ւթ, աղջկադ նշանն է...

4

Ուստա Մկրտիչը կանչեց բարդիների շարքի մոտ խաղ անող Երանոսի փոքր եղբոր Թուշը և գարբասի դռնակից դուրս ելավ դեպի ճանապարհը։ Հազիվ էր ոտքը շեմից դուրս դրել, երբ ցնցվեց և կպավ պատին։

— Վա՛... էս ի՞նչ էր...

Նրա մոտով, առանց նրան նկատելու, արագաքայլ անցավ Թրքուհին։ Ուստային թվաց, թե նա հագել էր իր Հեղնարի կիսակոշիկները։

— Նահլաթ քեզի, սատանայ. խօ հարբած չե՞մ...

Նա ձեռքը շփեց ճակատին։ Լսել էր, որ երբեմն չար ոգին գեղեցիկ թրքուհու կերպարանք է առնում և իր սիրով խելագարեցնում մարդկանց։ Երբեք չէր հավատացել։ Միայն Երանոսի մահից հետո, մի քիչ կասկածել էր, որ նրան հանդիպող կինը նույնպես չար ոգի էր եղել։ Այժմ, այդ նոր դեպքը գալիս էր իրեն համոզելու դրանում։ Չէ՞ որ շատ յաճախ, նույն չար ոգին ջահէլ կանանց մնատուկներից գողանում է նրանց հագուստները և հագնում է... Բայց չէ՞ որ դա հէքիաթ է, առասպել, մնոտի մարդոց ուսմունք...

— Վա՛...,— կրկնեց ուստան։ — Կրունկները, կարուածքը... Թէ՞ աչքերիս խաբինն։ Էս ի՞նչ էր...

Թրքուհին, որ շարունակում էր գնալ նույն արագ քայլերով, անհետացավ ճանապարհի ոլորի յետեւում։ Ուստան սթափուեց, համոզուեց որ դա տեսիլք էր, որը գերբնական ձեւով անհետացաւ։ Սակայն անմիջապէս մտածեց, որ նա պարզապէս կարող էր ծածկուած լինել պատի յետեւում։ Արագ առաջ գնաց՝ ստուգելու համար։ Մի քանի քայլից

յետոյ Թրքուհին նորից երեւաց։ Նա խուլ կերպով չադրայի մէջ փաթաթուած՝ շարունակում էր ճանապարհը։ Այս անգամ ուստային թուաց, թէ նա կեղծում էր նաև իր կնոջ քայլուածքը։ Մտածեց չտապել, մօտենալ նրան և դիտել մօտիկից, բայց յետոյ մտադրութիւնը փոխեց։ Ոգին կարող էր նկատել իրեն և խուսափել։ Ուստի և, փոխանակ մօտենալու, ուստան սկսեց հետեւել հեռուից։ Յաճախ չէ, որ մարդ առիթ է ունենում ոգու հանդիպել։ Արժէ հետեւել և տեսնել, թէ նա ի՛նչ նպատակով է հագել իր կնոջ ոտնամանները...

Յանկարծ ուստա Մկրտիչը յիշեց, որ իր կնոջ այդ կիսակօշիկներից մէկի, — ձախի, — տակը երկու տեղով ճաքել էր և ուստան պատուիրել էր նրան, որ նա այլեւս դէն նետի այդ ոտնամանները։ Նա կռացաւ, նայեց Թրքուհու ոտնահետքերին։ Ձախ ներբանի տափակացրած փոշու վրայ հազիւ նկատելի երեւում էին լայնքից գնացող երկու խազեր.

— Տէր Աստուած.— ասաց ուստան, խաչակնքեց և շափխան աւելի թեքեց դէպի ծոծրակը։ — Ահան աչքովս կը տեսնիմ հրաշքը, հըմը էլի չեմ ա-ւատայ... Զեղնի՞ էս բանը հրաշք չէ...

5

Թուրքական թաղամասի աղբիւրի ութան-կիւնի փոքրիկ շէնքը ծառերի տակ կանգնած՝ ամբողջապէս գտնւում էր նրանց ստուերում։ Այդ նշանակում էր, որ ցերեկը հասել էր իր գագաթնակէտին։ Արեւի լոյսից աշխարհն այնքան պայծառ էր նրա շուրջը, որ նա իր վրայ կախուած ծառերով ու ստուերով՝ թւում էր չափից աւելի մութ ու թարմ։

Ջուրը, որ անձայն ու անշարժ կորագծով իջնում էր խողովակից գուռի մէջ, թւում էր մի արծաթեայ փայլուն կամար, նետուած այս աշխարհից դէպի հողը։ Թէեւ շատ աղջիկներ ու կանայք էին հաւաքուել նրա մօտ, բայց ոչ ոք դեռ ջուր չէր լցնում, իսկ նա, ով լցրել էր՝ դեռ չէր հեռանում։ Բոլորն զբաղուած էին ըստ երեւոյթին ծայր աստիճան հետաքրքիր մի խօսակցութեամբ։

— Սաֆարի երեխէքը... Բանդած քուչի քովը... Հետը թուրքերէն էին խօսէ՛ չէր հասկցէ... Ըսել է՝ փափախը դրել էր խաբելու համար, — լսւում էին միաժամանակ մի քանի խմբերից։

— Փափա՞խ, — հարցրեց մէկը։ — Սե՞ւ փափախ...

— Սեւ փափախ։

— Դաւո՞ւդ...

— Դաւուդ։

— Ուրեմն ես էլ եմ տեսէ՛ էնոր, կնկըտի՛ք։ Գեօզալ, ջահէլ տղայ էր։ Մէ անգամըմ եմ տեսէ։

Մի կին, որ մտածկոտ խաղում էր իր մատանիների հետ, յանկարծ կարմրեց և դիմեց խօսողներից մէկին.

— Դուք է՞ն կ'ըսէք, որ աչքեր ունի՝ ինչըղ որ սեւ եանղուն։

— Էն։

— Տեսել եմ։ Մէ անգամըմ մօտեցաւ՝ ջուր ուզեց։ Երեսս ծածկի՝ փախայ, էլ չիմացայ, թէ ո՛ւր գնաց։

— Ո՞ւր պիտի երթայ։ Ի հարկէ էն լեռի քովը, — ասաց մի աղջիկ՝ խոշոր աչքերը բարկութեամբ ուղղելով դէպի փողոցի մի ծայրը, դէպի Հաբիբայի տան ուղղութիւնը։

— Սէր կ'էնեն, — ատելութեամբ չրթունքները

կծկելով մրմնջաց մի կին։ — Լիբբը կը պագէ ջահէլի աչքերը, ծոցը կ՛առնէ ջահէլին...

Նրա աչքերը յանկարծակի արցունքոտուեցին։ Նա լաց և ծածկուեց չադրայով։

— Ընչի՞ սէր չի էնէ, — դառը ժպտաց մի ուրիշը։ — Հարուստ, քէֆլի... Ի՞նչն է պակաս։ Ըպը տղէ՞ն...

— Տղէն կը մեռնի էնոր հըմար։ Կայ մարդ, որ ջուր կ՛ուզէ, հըմը գիտես, որ քեզի կ՛ուզէ։ Հըմը էնիկ որ ջուր ուզեց՝ մեննակ ծարաւ եղնելու հըմար էր։ Աչքովս տեսայ, թէ ի՛նչըղ քրտնել էր լէն ճակատը, թողոտել էին ալ պռոշներն ու սեւ բեխերը։

— Իհարկէ կը մեռնի էնոր հըմար։ Ըպը խօ չի՞ ծեծէ։ Էդպէս տղէն կը ծեծէ՞... Էդպէս տղէն ճաշն ուշացնելու հըմար խսկեամին կնկայ գլխուն կուտա՞յ... Լիբբը...

Զարմանալի երկար թերթերունքների տակ փայլատակում էին զարմանալի սեւ աչքերը։ Երբ կանայք առելութեամբ շրջում էին իրենց հայեացքներն աջ ու ձախ, նրանց սպիտակուցները փայլփլում էին մերկացրած եաթաղանների պէս։ Նրանց գեղեցիկ այտերը վառւում էին չառագոյն մի հրով, կարծես իրենց վրայ անդրադարձնելով մի մեծ հըրդեհի բոցը։ Նրանց կրծքերը ելնում և իջնում էին կարծես զսպուած հեծկլտոցից։ Իսկ երբ նրանք խօսում էին, թւում էր, թէ նրանց ձայնը դուրս էր գալիս թախիծով ու արցունքով լցուած խոր ջրհորից։ Ովքեր կանգնել էին երեսները ծածկած, ձեռքներից մէկով բռնել էին ջրամանները, միւսով՝ կրծքները, իսկ երեսի վրայ քաշուած չադրայի երիզը պահել էին ատամների արանքում։ Պսպղում էին կուրացնող սպիտակ ատամները, որոնք չադրայի

երիզի հետ միասին կծում, արիւնոտելու չափ սեղմում էին նաև իրենց վարդագոյն շրթունքը։ Տարօրինակ էր թւում, որ նրանց կիսաշրջանի մէջ ջուրը հոսում էր նոյն լռութեամբ ու անշարժութեամբ, — կարծես չէր հոսում, — և աղբիւրի ճակատին՝ երեք հին, բայց կենդանի լեզուներով գըրուած ոսկէ Մկրտչի անունը թւում էր նոյնքան խաղաղ ու յաւիտենական...

Մոլլայի մեծ կինը, որն ի հարկէ երբեք ինքը չէր գալիս ջրի, կանգնել էր տանից ջրամանի և լուռ լսում էր խօսակցութիւնը՝ մերթ ընդ մերթ գլխի դրական շարժումներով հաւանութիւն տալով կանանց ասածներին։ Սակայն նա ուշադիր կերպով չէր լսում նրանց և շարունակ նայում էր դէպի փողոցի կողմը։ Իսկ երբ այնտեղ երևաց Հեղնարը և արագ անցաւ, մոլլայի մեծ կինն ակնարկեց աղբիւրի մօտ եղողներին՝ ծպտուն չհանել և շտապեց նրա յետևից։ Աղբիւրի մօտ բոլորը նայեցին իրար։

— Աչեա ի՞նչ են մտածէ աղամարդիկ, — շշնջաց մէկը։

— Կը սըպանեն, — ենթադրեց միւսը։

— Թող սըպանեն։ — Մի զոյգ աչքեր տենդոտ կերպով բոցավառուեցին։ — Չենք ուզէ էնոր՝ մեր թաղի մէջ։ Էնիկ շարիաթին հակառակ կ'ապրի։ Ընչի՞ պիտի մենակ էնիկ շարիաթին հակառակ ապրի...

6

Հարիրայի տան փողոցի անկիւնում մոլլայի մեծ կինը հասաւ Հեղնարին։ Կտրեց նրա առաջը, երկու ձեռներով արագ բաց արեց նրա երեսը։

— Բիաբո՛ւա...

Հեղնարը գունատուեց։

— Սիրակա՞ն ունիս, քա՛ծ։

— Ունիմ, բաջի՛. որ քեղնէն պահեմ, Ալլահից ի՞նչըղ պահեմ,— շշնջաց Հեղնարը՝ տեսնելով, որ անհնար է թաքցնելը։

— Ունի՞ս, հա՞...

Թրքուհին կատաղած սեղմեց բռունցքներն ու ատամները, կարմրեց և, կարծես ներսից ստացած մի հարուածից, հրուեց դէպի ուստայի կինը։

— Հա՞յ է։

— Հայ է, բաջի՛։

Հեղնարը բռնեց սիրտը, որ չափազանց անհանգիստ և անկանոն թպրտում էր։

— Ըսել է սուտ չէ՞, հա՞, անառա՛կ... Լա՛ւ։

Եւ արագ յետ շրջուելով՝ բղաւեց.

— Հէ՜յ, աղջիկնե՛ր, կնկտի՛ք, էստեղ եկէք, մէ-մէ քար բերէք հետներդ, շուն կայ սատկեցնելու, շո՛ւտ...

— Բաջի՛,— սարսափից նուաղած ձայնով թոյլ ճչաց Հեղնարը և ձեռքը դրեց նրա բերանին.— բաջի՛, սո՛ւս կեցի, ոտքերդ պագեմ, ես հայ եմ...

— Ի՞նչ...

Մոլլայի մեծ կինը ետ-ետ գնաց և ձեռքերը ետեւը տանելով, չռուած մատներով պատը շօշափեց՝ չընկնելու համար։

— Հա՞յ ես...

Բարեբախտաբար աղբիւրը հեռու էր և ոչ ոք չէր լսել նրա կանչը, բայց Հեղնարն այնպէս էր գունատուել, որ թւում էր, թէ պիտի ուշաթափուի։ Մոլլայի կինը, որ սառած աչքերով դեռ անակընթարթ նայում էր նրան, սկսեց շրթունքները շարժել։ Ըստ երեւոյթին նա խօսում էր, բայց ոչինչ

չէր լսում։ Այդպէս անցաւ մի քանի վայրկեան, մինչեւ որ նրա ձայնը դարձաւ լսելի։

— Հա՞յ... Ո՛վ մարգարէ... Ի՞նչըղ չէինք նկատէ։ Հաաաաաա որ հայ... Շէյթանը քեզի հետ... Թուրքի անունով անատակութի՞ւն կ'էնես։ Քեզի ակռէքով կը գզենք, ակռէքով...

Եւ դանդաղ պոկուելով պատից, քայլեց յետ, դէպի իրենց տուն կամ ղայֆախանա, ինքն էլ չգիտենալով, թէ յատկապէս ո՛ւր։ Հեղնարը չշմածի նման, սառած աչքերով նայեց նրա յետեւից եւ իր առաջին մտածումը եղաւ փախչել ու այլեւս չվերադառնալ։ Նոյն վայրկեանին մեծ սոսկումով յիշեց, որ քիչ յետոյ, գուցէ հենց հիմա, գալու էր իր սիրեկանը եւ ընկնելու էր գազազած մարդկանց ձեռքը։ Պէտք էր ուրեմն շտապել, ճանապարհին հանդիպել նրան եւ յետ դարձնել։

Նա նետուեց դէպի ձախ կողմի աւերակ փողոցը։ Ինչպէս միշտ, այնտեղ ոչ ոք չկար, բացի Սաֆարի երեխաներից, որ պատի տակ նստած խաղ էին անում։ Տեսնելով Հեղնարին, նրանցից մէկն անփոյթ վեր կացաւ, դանդաղ գնաց մի քիչ տեղ, ապա վազեց։ Երեխաների աչքերի վառ թաքցրած արտայայտութիւնից Հեղնարը հասկացաւ, որ նրանք իրեն էին պահակում եւ այն մէկն անշուշտ գնաց մեծերին հաղորդելու իր փախուստի մասին։ Նրա ծնկները ծալուեցին, նա իրեն զգաց անելանելի թակարդի մէջ եւ ենթարկուելով անխուսափելիին՝ վերադարձաւ դէպի Հաբիբայի տունը, մտաւ ներս եւ դարբասը կամացուկ ծածկեց... Թւում էր, թէ սպասուող խայտառակութիւնից նա դարձել էր կիսախելագար։

7

Հաջի Հեղնարը ծածկել էր դարբասը, երբ երևաց ուստա Մկրտիչը, որն շտապ մտավ փողոց և շուրջը նայեց։

— Բաջի՛...

Մոլլայի մեծ կինը յետ նայեց, ապա կանգ առավ։ Ուստան, քրտնած ու փոշոտ, մոտեցավ նրան։

— Բարև, բաջի՛։

— Բարև, ուստա Մկրտիչ։

— Մէ թուրքիմ կնիկ չանցա՞վ էստեղով։

Թրքուհին մի վայրկյան ձայն չհանեց, ապա չադրայի անթափանց քողի տակ ժպիտ ձևացնելով՝ հարցրեց.

— Թուրքի կնիկը քու ինչո՞ւդ է հարկավոր։

Ուստան կարծես նոր միայն սթափվելով իր շտապմունքից և շփոթությունից՝ զգաց տված հարցի տարօրինակությունը։

— Հարկավոր է, բաջի՛, — փորձեց պնդել նա։

— Լավ, ինչո՞ւդ է հարկավոր, — կրկնեց թրքուհին՝ թեթևակի բաց անելով երեսը։ — Դուն՝ հայ, էնիկ՝ թուրք, դուն՝ կնկայ։ երեխի տէր, էնիկ...

— Ա՛յ բաջի, — նորից ժպտաց ուստա Մկրտիչը, արդէն տիրապետելով ինքն իրեն, — հայի ու թուրքի մէջ ախպօր ու քուրոջ գործ չի՞ պատահի։

— Կը պատահի։

— Ըշտը մէ էգպէս գործովըմ կը հարցնեմ։ Չտեսա՞ր մէ թուրքիմ կնկայ, կանանչ ոտնամաններով։

Ուստան ծայր աստիճան անհանգիստ՝ ձեռքերը տարավ գոտկի յետևը, ապա հանեց, բթամատով

բեխերը շօշափեց և քարացաւ սպառողական դիրքով։

— Մտաւ իրան տունը, էս դուռն է։ Ինքը մեննակ կ'ապրի։ Դուն մեննակ օղլու-շաղի քովն ի՞նչըղ երթաս, ուստա՛...

Բանդուած փողոցի կողմից երևաց ոսկերիչ Վաղինակի տղայ Վարոսը։ Տեսնելով ուստա Մկըրտչին, նա կայծակի արագութեամբ յետ նետուեց և անհետացաւ։ Ո՛չ ուստան, ո՛չ Թրքուհին, չտեսան նրան։ Նրան տեսան միայն Սաֆարի երեխաները և նորից, այս անգամ բոլորը միասին, վազ տուեցին մեծերին յայտնելու հայի տղայի մասին։

— Տէ՛, որ մեննակ կ'ապրի՝ դուն ինքդ էլ արի հետս, բաջի՛, — առաջարկեց ուստան։ — Դուն էլ իմ քուրս ես...

Նրանք մօտեցան դրանը։

— Ուստա՛, էնիկ հայ է, — յայտնեց Թրքուհին։

— Հա՞յ...

Փոխանակ պատասխանելու, մոլլայի մեծ կինը յանկարծակի փոխուեց, արիւնը խփեց նրա երեսին և նա սպառնալի շշնջաց.

— Սրի աչքովդ տես, ախպէր։ Ինքն անառակութուն կ'էնէ, մեր անունը կը խայտառակէ։ Ատամներով կը գզենք...

Ուստան արագ քայլերով մտաւ ներս։

8

Տասը տարի անխնամ մնացած պարտէզի վայրի մենատիրութիւնը տեղի էր տուել պայծառ զուարթութեան։ Այլևս սաղարթները մի ընդհանուր ծածկոյթով չէին ստուերել ու մթագնել հայաթը և մեռած տերևները չէին փռուել գետնի վրայ տասը

հաստ շերտերով։ Վարոսը կարել էր բաւական թւով ծառեր, կտրատել էր հնացածների քմահաճ կերպով աճած բազմաթիւ ճիւղերը, մաքրել էր մայթերն ու մարգերը, ցանել էր բազմագոյն ծաղիկներ՝ բուրումնաւէտ ու քնքուշ։ Այժմ պարտէզն իրօք որ նման էր պայծառ պարտէզի և ոչ թէ խաւար անտառի։ Արեւն առատ գոգերով թափւել էր ծառերի միջեւ, գետնի վրայ։ Այժմ նա էր այնտեղ տիրապետողը և ոչ թէ ստուերը, որն առանձին պատառների բաժանուած՝ կծկուել էր առանձին ծառերի տակ։ Ստուերները, լինելով քիչ և արեւի լայն երիզներով շրջանակուած, այժմ թւում էին աւելի մուգ, աւելի զով և աւելի հաճելի։ Ամենուր, որտեղ արեւ էր թափւել, մեղմաբոյր մարգերով ցանուած էին բազմագոյն ու բազմատեսակ ծաղիկներ։ Մարգերի մէջտեղից անցնում էին կարմիր աղիւսափոշու շաւիղներ։ Աւազանի շատրուանը խփում էր աւելի բարձր և նրա կաթիլները նստում էին տերեւների ու ծաղիկների վրայ՝ մեծերը մարգարտի պէս, իսկ փոքրերն՝ ադամանդի փոշու։

Տեսնելով պարտէզի ողջ քնքշութիւնը, ուստա Մկրտիչը մի վայրկեան քարացած կանգ առաւ, կարծես վախենալով որեւէ կոպիտ շարժումով վիրաւորել այն։ Ներքին դարպասի մօտից մինչեւ դուռը նա գնաց կամացուկ, համարեա ոտների ծայրերի վրայ, քսուելով պատին և չվստահանալով նեղ մայթերից ոտքը դնել ցած, ուր բուսել էին այնքան մանրիկ և անմեղ խոտեր։

Մտնելով միջանցք, նա նախ բաց արեց երեք սպիտակ լուսամուտներ ունեցող սենեակի դուռը։ Սենեակի խորքի մասը, որի յատակն առջեւի մասից աւելի բարձր էր և մէջտեղում ունէր մի քանի

տախտակէ աստիճաններ, ամբողջապէս ծածկուած էր մանրանկարուած ծանր վարագոյրով։ Ուստան վարագոյրը ձեռքով յետ տարաւ և նայեց ներս։ Ինչպէս սենեակի առջեւամասում, այնպէս և այնտեղ, յատակի վրայ փռուած էին գորգեր։ Ոչ ոք չկար։

Ուստան եղաւ միջանցք։ Նշանակում է՝ չար ոգին, Թրքուհին, կամ, — Տէր Աստուած, — իր կին Հեղնարը այնտեղ էր, միւս սենեակում...

Ուստայի սիրտը դողաց, բայց վարանող թուլութիւնը տեւեց միայն մի վայրկեան։ Նա վճռական հրեց դուռը և մտաւ ներս...

Հեղնարը, գունատուած, նուաղած, կիսարաց շրթունքներով, ծունկ էր չոքել և աղօթք էր անում՝ ըստ երեւոյթին իր սիրած տղայի անվտանգութեան համար։

Լսելով դրան ձայնը, նա նայեց այն կողմ և ցնցուեց։ Ըստ երեւոյթին նա չհաւատաց իր աչքերին։ Աւելի շուտ՝ վախեցաւ իր վրդովուած վիճակից և տենդոտ ուղեղից, քան դրան մօտ կանգնած կերպարանքից։

— Հեղնա՞ր ..., — շշնջաց ուստա Մկրտիչը։

Կայծակի արագութեամբ Հեղնարի դէմքն անասելի սպիտակեց. թուաց, թէ այդ նրա աչքերն էին, որ անասելի սեւացան։ Նա ձեռքը տարաւ դէպի կուրծքը, զգաց նրա տակ ուժգին և անկանոն թպրտացող սիրտը և մինչեւ անգամ չկարողացաւ ճչալ։ Նա ծկլթաց՝ ինչպէս վճիտ ջուրը բոստանների արխում՝ և լռեց։ Սիրտը յանկարծակի դադարեց թպրտալուց։

Ամէն ինչ վերջացաւ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1

Նորից փակուեցին Հաբիբայի ծանր ու անհիւրընկալ դարբասները։ Թուրքական թաղամասում ով դեռ չէր հաւատում նախապաշարմունքների, Հեղնարի մահից յետոյ համոզուեց, որ անհետացած պառաւի տան վրայ անէծք կար ծանրացած։ Հեղնարի մահից անմիջապէս յետոյ, երբ մոլլայի մեծ կնոջ միջոցով լուրը տարածուեց ամբողջ թաղամասում, այնտեղ գտնուող բոլոր բնակիչները բահ ու քլունգներով զինուած, անասելի գոռոցներով, հաւաքուեցին Հաբիբայի տան առջեւ՝ հիմնայատակ կործանելու այն։ Ու մինչդեռ ուստա Մկրտչի դժբախտութեան լուրը սլացաւ քաղաք՝ կայծակի արագութեամբ և ուժգնութեամբ տարածուելու այնտեղ, մոլլան, Իբրահիմը, Սաֆարը, հաջի Բիարիմը և բոլոր միւս տղամարդիկ սկսեցին քլունգների կատաղի հարուածներ տեղալ չէնքի աղիւսէ պատի վրայ և չէչոտել նրա հարթ մակերեսը։ Թւում էր, թէ այդ հարուածների ձայներն անգամ հնչում էին ինչ որ անսովոր մռայլութեամբ։ Աղիւսներից բարձրացաւ կարմիր փոշին և զգալիօրէն մշուշեց հաւաքուած բազմութեանը՝ իր փայլուն գործիքների հետ։ Չգիտես ինչո՞ւ՝ կանայք սկսեցին վայնասուն բարձրացնել և իրենց մազերը պոկոտել, իսկ երե-

խաներին այդ ամենից ապշած՝ գոռալով լաց եղան։ Տղամարդիկ, որ հարուածները տեղում էին աւելի ու աւելի մոլեգնած, կարծես ոչ թէ քանդում էին պատը, այլ գանակոծում, ջարդ ու փշուր անում, այն գտնելով իբրեւ ամէն ինչի մեղաւորը։

Ընդհանուր իրարանցման մէջ, յանկարծ բացուեց Հաբիբայի տան դարբասը և շեմքի վրայ երեւաց ուստա Մկրտիչը՝ բարձրահասակ և մտախոհ։ Շափխան դէպի ծոծրակը թեքած, ճակատի վրայ քրտինքի մարգարիտներ, նա մեղմ ու հանդարտ աչք յածեց շուրջը։

— Էս ի՞նչ գառնագոչում է, — հարցրեց Թուրքերէն. — նեսը մեռած մարդ կայ...

Ու նորից ներս մտնելով՝ ծածկեց ծանրանիստ փեղկերը։

Միանգամից տիրեց այնպիսի լռութիւն, որ թուաց, թէ լսելի դարձաւ կարմիր փոշու ձայնը, որն օդից նստում էր մարդկանց գլխներին, ուսերի վրայ և գետնին։ Բահերն ու քլունգները մարդկանց ձեռքերում դարձան աւելորդ և մարդիկ նայեցին միմեանց՝ չգիտենալով ինչ անել։ Բոլորը կարծես նոր վերյիշեցին, որ այնտեղ, տան ներսում, յաւիտենական քնով քնել էր մի կին, որին խաղաղութիւն էր հարկաւոր՝ ինչպէս իւրաքանչիւր քնած մարդու։ Նոյն րոպէին դարբասը նորից բացուեց և ուստան դուրս ելնելով մօտեցաւ մոլլային.

— Միրզա՛լի, նես արի, դո՞ւն ընչի ես կայնէ. Հաջի Բեարի՞մ, Սաֆա՞ր, ձեզի հետ եմ...

Թաղամասի պատկառելի ծերունիները մոլլայի հետ միասին մտան շէնք։ Ուստան դեռ դուռը չէր ծածկել, երբ անկեան յետեւից լսուեց ամբակների ձայն և մի կառք արագ ընթացքով մտաւ փողոց։

Հաւաքուածները շուռ եկան և տեսան։ Գլխաշալը վար գցած, սպիտակ մազերն արձակած, իր չորուած մատներով կարծես մազերը սանրելով, գալիս էր ուստա Մկրտչի մայրը։ Նա շրթունքն ամուր սեղմել էր ատամների տակ և նուաղկոտ ձայնով հծծում էր,— ո՜ւմմ... ո՜ւմմ...

Ուստան նետուեց ընդ առաջ։ Օգնելով մօրը՝ վար իջնել կառքից, նա միջոց գտաւ շշնջալու.

— Ջուր կ'ողբաս, մէ՛ր. էնիկ քու ողբից չամէ...

Մայրն ապշութիւնից չռուած աչքերով նայեց որդուն։

— Երթանք՝ նեսը կ'ըսեմ։

Եւ նոյն րոպէին նկատելով մոլլայի մեծ կնոջը, կանչեց.

— Արի՛, քուր, դուն էլ արի։

Ուստայի մայրը հարցախնդիր հայեացքով նայեց մոլլայի կնոջը. տեսնելով որ նա եւս տեղեակ էր պատահածին, բարեւեց ու երեքով մտան ներս։

Եւ անմիջապէս դրանից յետոյ սկսուեց այդ օրուայ մեծագոյն տագնապը։ Միանգամից լսուեցին բազմաթիւ կառքերի ձայներ, վազող մարդկանց ոտնաձայներ, և անմիջապէս փողոց լցուեցին մեծ թւով մարդիկ։ Նրանք արագ մօտեցան հաւաքուածներին, շփոթուած հարցեր տուեցին և քիչ յետոյ փոքրիկ փողոցը լեփլեցուեց կառքերով։ Կառապանները նոյնպէս վար ցատկեցին իրենց նստատեղից և խառնուեցին ամբոխին։ Հաբիբայի տան փողոցը լցուելուց անմիջապէս յետոյ, շնչասպառ մարդկանց և փոշոտուած ձիերի խուռներամը լցուեց նաև շրջակայ փողոցները։ Լսուեցին աղմուկներ, մարդիկ պահանջում էին կառապաններից յետ քշել կառքերը և թոյլ տալ իրենց՝ մօտենալ տանը, բայց

կառապաններն առաւել եւս ցանկանում էին մօտենալ և իմանալ, թէ ի՛նչ էր պատահել ուստա Մկըրտչին։ Թուրքական թաղամասում բնակուող խըրաքանչիւր մարդ շրջապատուեց տասնեակ ուրիշներով, որոնք անընդհատ տեղում էին հազարաւոր հարցեր։ Շատ բան յայտնի չէր Թուրքերին, բայց ամենակարեւորը յայտնի էր.— Հեղնարը մի հայ սիրեկան էր ունեցել, որի հետ հանդիպելիս էր եղել Հաբիբայի տանը։ Ուստան բռնացրել էր Հեղնարին և Հեղնարի սիրտը ծակել էր...

Իսկ թէ ի՞նչ կերպ էր ուստան բացել դաւաճանութիւնը, իսկ ո՞վ էր կնոջ սիրեկանը, ոչ ոք չգիտէր։ Միայն մի Թուրք,— մսագործ Կուլին,— պատմում էր թէ ի՛նչպէս մի ժամ առաջ Սաֆարի մի երեխան վազ էր տուել և հաղորդել իրեն՝ Հեղնարի փախչելու մասին, ապա միւսներն էին եկել՝ յայտնելու հայի գալու մասին, բայց մինչեւ իրենց վրայ հասնելը, հայի տղան արդէն փախել էր, իսկ Հեղնարը՝ հանգչել։

Ազդեցիկ մարդիկ, թէ՛ հայերից, թէ՛ Թուրքերից և թէ յոյներից, վերջապէս կարողացան մօտենալ դարբասին. մօտեցան նաեւ ուստա Մկրտչի ընկերները, բարեկամները, Հեղնարի այլայլուած ու շփոթուած ազգականները։ Երբ մարդկանցից մէկը դարբասը հրեց, դուրս եկաւ, որ այն փակ էր։ Մտածելով մի վայրկեան, մարդը բռնեց թակը և խփեց։ Այն հնչիւնները, որ դուրս եկան այնտեղից, մի սառը ցնցում պատճառեցին բոլորին։ Մահուան ու շփոթի այդ պարագաներում նրանք հնչեցին աւելի մռայլ և թուացին թաղման զօղանջներ։ Թէեւ երկար ժամանակ ներսից պատասխան չեղաւ, բայց ոչ ոք վճռեց կրկին անգամ թակը ձեռք վերցնել։

Քիչ յետոյ դարբասը բացուեց և դուրս եկաւ ուստայի մայրը։ Նա միանգամայն հանգիստ էր, սովորականի նման գլխաշալը գլխին գցած, մազերը դրա տակ թաքցրած, բայց նրա շրթունքներն ամուր կերպով սեղմուած էին իրար և դէմքը սովորականից մի քիչ աւելի խիստ էր։ Նա նայեց հաւաքուածների լուռ ամբոխին և ասաց.

— Յետ դարձէք, օղո՛ւլ, ձեր տներն էլ են ափսոս, ձիաններուն էլ...

Լուսթինը, որ կարծես հոսում էր, քարացաւ։ Ուստայի մայրը հաստատ քայլերով մտաւ ներս և նորից դուռը փակեց։

2

Հեղնարը պառկել էր նոյն սենեակում, յատակի գորգի վրայ։ Նրա վրայ գցել էին պատից պոկած մի գորգ, որը ծածկել էր նրան ամբողջովին, բաց թողնելով միայն կանաչ կիսակօշիկներն ու սեւ մազերով շրջանակուած գլուխը։ Նրա դէմքը գունատ էր, համարեա սպիտակ, և թւում էր թէ նա քնած է։

Նրա կողքերին ծալապատիկ նստել էին մոլլան, ուստա Մկրտիչը, հաջի Քեարիմը, Սաֆարը, ուստայի մայրն ու մոլլայի մեծ կինը։ Իբրահիմը կանգնել էր դրան մօտ՝ շուար, ձեռները կողքերն ի վար կախ գցած և մտածում էր։ Լուսամուտի բազմարդէտ ապակիներից բազմագոյն կիսախաւարն ընկել էր հաւաքուածների անձայն, անշարժ կերպարանքների վրայ։ Այն, որ կենդանի մարդիկ նստել էին մեռածի նոյնպիսի քարացած դիրքով և ոչինչ չէին անում կամ ասում, թւում էր բնական ու հասկանալի։ Ոչ ոք չէր շտապում, որովհետեւ ոչ ոք ոչնչի չէր պատրաստուում և ոչնչի չէր սպասում։ Ցայտնի

չէր՝ դրսում աղմկո՞ւմ էին թէ լռել էին, որովհետև արտաքին աշխարհից ոչ մի ձայն ներս չէր թափանցում։

— Մեղքը... մերն է...,— լռութեան նման հանդարտ՝ յանկարծ հնչեց մոլլայի ձայնը.— Հաբիբէի տունը մենք պիտի չուտուց քանդած եղնէինք...

— Կը քանդենք,— փակ ատամների արանքից մռմռաց հաջին։ — Բաջուս գիւղը տանելուն պէս՝ հիմնայատակ կ՚էնենք...

Խօսքերից անմիջապէս յետոյ վրայ հասած լռութեան մէջ՝ ուստան վեր բարձրացրեց գլուխը և նայեց նստածներին.

— Խորուրդմ էրի,— ասաց նա խաղաղաձայն.— կ՚ուզեմ էս մեղաւոր կնկան թաղել իրան մեղքի տան մէջը...

Եւ նորից գլուխը խոնարհեց։

Մոլլան ու հաջին նայեցին իրար։

— Էս տունը քանդոցի տակ է,— ասաց մոլլայի մեծ կինը՝ առանց գլուխը վեր բարձրացնելու, որովհետև նրա աչքերի մէջ փայլատակում էին չափից աւելի բորբոքուած կրակներ և նրան թւում էր, թէ չադրայի տակից անգամ նրանք կը հանեն ուստային և կը վշտացնեն։

Խուլ, կարծես յաւիտենականութեան միջից, լսուեց դարբասի թակոցը։

Իբրահիմը ելաւ գնաց։ Քիչ յետոյ ներս մտաւ աւագ եկեղեցու աւագ քահանան՝ իր տիրացուի հետ, որի թեւի տակ շուրջառ կար և աղօթագիրք։ Բոլորը ոտքի կանգնեցին։ Քահանան արագ մօտեցաւ ուստային և նրա ձեռքը սեղմեց։ Երբ դրանից յետոյ մօտեցաւ ուստայի մօրը, նա համբուրեց քահանայի աջը և ասաց.

— Գնա, հա՛յր սուրբ, խաչդ մի պղծէ...

Կարծես սառը ջուր սրսկեցին բոլորի վրայ։

— Մեղաւորի հոգին... — փորձեց հակաճառել քահանան։

— Մեղաւորի հոգին գնաց ուր որ իրան տեղն էր, — ընդհատեց ուստայի մայրը։

Քահանան և տիրացուն նայեցին իրար և խաղաղութիւն մաղթելով դուրս եկան։

Երբ Իբրահիմը դարբասը փակելուց յետոյ մտաւ ներս, բոլորը նստած էին առաջուայ դիրքով՝ լուռ և անշարժ։

— Մենք ուստի խօսքը ետ դարձնել չենք կրնայ, — շարունակեց հաջին ընդհատուած խօսակցութիւնը։ — Ուստի նպատակը ճշմարիտ է. թող մեղաւորը թաղուի իրան մեղքի տան մէջը...

— Տունը քանդոցի տակ է, — կրկնեց մոլլայի կինը։ — Թէ ախպէրը ողջ է, թող թաղէ, հըմը տունը սաղ չպիտի մնայ։

— Ի՞նչ կ՚ըսես, ուստա՛, — հարցրեց մոլլան։

Բոլորը նայեցին ուստա Մկրտչին։ Մտածելով բաւական երկար, նա յայտնեց.

— Տունն ընձի հարկաւոր չէ։ Դուք էլ որ չքանդէիք, ես ինքս պիտի ձեզնէն խնդրէի էդ բանը։ Մենակ թէ ընձի մէ քառսուն օր ժամանակ տուէք՝ ետև քանդենք։

— Քառսուն օ՞ր, — չհասկացաւ մոլլան։

— Մինչևի քար քաշիմ գերեզմընի վրայ, — բացատրեց ուստան։

Մոլլան, հաջի Քեարիմը, Սաֆարը, Իբրահիմը, մոլլայի մեծ կինը համաձայնութիւն տուեցին թէ՛ իրենց կողմից և թէ թաղամասի բոլոր միւս բնակիչների։

Եկաւ քրէական ու բժշկական քննութիւնը և այդ դէպքն արձանագրեց իբրև անյայտ պատճառներից դրդուած յանկարծամահութիւն։

3

Հեղնարին թաղեցին աւազանի տակ։ Ընդհատեցին շատրուանը, յատակից վերցրին մի քանի սալաքար, խորը փորեցին տակի հողը և դագաղը դրեցին այնտեղ։ Յետոյ նոյնութեամբ սարքեցին ամէն ինչ և շատրուանի վճիտ ու մաքուր ջուրը նորից բաց թողեցին։ Երբ երեկոյեան դէմ ամէն ինչ վերջացաւ, բոլորը հրաժեշտ տուեցին ուստա Մկրտչին ու դուրս եկան։ Մայրը մի րոպէ փորձեց որդուն յետ պահել մնալ տան մէջ քառասուն օր մենակ մնալու վտանգաւոր որոշումից, բայց ուստան ի պատասխան՝ միայն համբուրեց նրա ձեռքը և խնդրեց իր ընկերներից ոեւէ մէկի տղայի ձեռքով ամէն օր մի քիչ ուտելիք ուղարկել իրեն։ Դամբանաքար պատրաստելու անհրաժեշտ գործիքները նա խնդրեց ուղարկել հենց նոյն օրը։

Երբ քաղաքում իմացան ուստա Մկրտչի որոշման մասին, բոլորն անխտիր եկան այն եզրակացութեան, որ դամբանաքար պատրաստելն առանձին մնալու պատրուակ էր, որովհետև ուստան ամաչում էր նայել մարդկանց երեսին, քանի դեռ թարմ էր ընտանեկան չտեսնուած ու չլսուած խայտառակութեան այդ սև բիծը։ Սակայն ո՞վ մտքով կ՚անցնէր չարախնդալ ուստայի դժբախտութեան վրայ։ Բոլորին պաշարել էր այնպիսի մի սոսկում, ինչպիսին լինում է սրբապղծութեան ժամանակ։ Ի՞նչպէս էր համարձակուել Հեղնարը, այդ անառակ կի-

նը, արտասուրել պայծառ ուստայի անկողինը…
Եւ ո՞վ էր եղել արդեօք այն իժի ծնունդը, որ գայթակղեցրել էր այնքան տարիների անարատ կնոջը…

Թաղման հենց հետեւեալ օրը, ուստայի ընկերները վերցրին Սաֆարի երեխաներին և սկսեցին շրջել շուկաները, արհեստաւորների և առեւտրականների խանութները, չայխանաները, ղայֆախանաները, մեյխանաները, որպէսզի գտնեն տղային։ Նրանք իրենց գրպաններում ունէին այդ առթիւ խնամքով սրած դանակներ և պատրաստ էին հենց բռնած տեղում դանակահարել նրան։ Բայց նա չկար։ Ո՞վ գիտէ, գուցէ և կար, գուցէ և Սաֆարի երեխաները տեսնում էին նրան, բայց չէին ճանաչում, որովհետեւ նրանք յիշում էին երիտասարդի միայն փափախը։ Իսկ ամբողջ քաղաքում չէր եղել և չկար ոչ մի հայ կամ յոյն, որ փափախ ծածկէր։ Ըստ երեւոյթին՝ տղան իր գլխի չափխան փափախով փոխարինում էր միայն Թուրքական Թաղամաս գնալիս, բոստանների մէջտեղով անցնող անմարդ ուղիներից մէկում, որտեղ և, անկասկած, Հեղնարն էր իր չադրան ծածկում ու վար առնում։

Ճիշդ է, երիտասարդին տեսել էին նաև Թըրքուհիներից ոմանք, բայց անցողակի շտապ, չադրայի անվստահօրէն բացուած ճեղքից։ Նրանք իհարկէ չէին կարող յիշել նրա դէմքը, և եթէ յիշէին էլ, ոչինչ չէին կարող անել։ Նրանք, իբրեւ կին, զըրկուած էին տղամարդու նայելու իրաւունքից և այժմ ո՛չ միայն չէին կարող փնտռել նրան կամ գտնել, այլեւ խոստովանել, որ ճանաչում էին այդ տղամարդուն, հային և անառակին։ Այդ եռակի յանցանքի համար կը շողար սրած պողպատի մի կտոր և աշխարհը կը պակասէր եւս մի կնոջով։

Ի զուր փնտռումներից յուսահատուած, բոլորն իրենց յոյսը դրել էին Աստծու վրայ, որպէս զի նա ինքն իր շանթով տեղնուտեղը ոչնչացնէր մեղաւորին և թոյլ չտար նրան՝ անպատիժ մնալ և ծառայել որպէս գայթակղութիւն իր նման ուրիշների համար։ Հարկաւոր էր մի ցասում, մի վրէժխնդրութիւն. բոլորը սոսկահար սպասում էին դրան, բայց միեւնոյն ժամանակ իրենց հոգու հեռաւոր խորքում կասկածում էին, թէ գոյութիւն չունէր ոչ մի հրաշք, թէ չպիտի գար ոչ մի հրաշք՝ ընտանիքի սրբութիւնը նորից հաստատող…

4

Ոսկերիչ Վաղինակի տղան, Վարոսը, քանդեց օձիքի կոճակները և շարունակեց քայլել։ Մի անտանելի տօթ այրում էր նրան և նա չէր կարողանում որոշել՝ դրսո՞ւմն էր այդ տօթը թէ իր ներսում։ Շափխայի տակից նրա ճակատի վրայ թափուած սեւ մազերը փոշեկալուել էին և գորշ էին թւում։ Նա վաղ առաւօտուանից դուրս էր եկել շրջելու։ Նրա գեղեցիկ աչքերը յոգնել էին ու կորցրել իրենց յանդուգն և կանանց շփոթեցնող արտայայտութիւնը։ Սակայն նա մտածկոտ չէր, այլ ցըրուած։ Որոնող հայեացքով անդադար շուրջն էր նայում, բայց ըստ երեւոյթին ոչինչ չէր տեսնում։ Միայն մի անգամ կանգ առաւ, կարծես սթափուեց, փորձեց որոշել իր որտեղ լինելը։ Նա գտնւում էր քաղաքի արեւմտեան մասում, հարաւից հիւսիս ձգուող բնակարանային փողոցներից մէկում։ Իր երկու կողմում Գիւմրու սովորական միյարկանի տներն էին սեւ ու նարնջագոյն տուֆաքարերից։

կամարակապ դարբասներով, իսկ դիմացը, դէպի հիւսիս, ուր փողոցն աննկատելիօրէն բարձրանում էր և հեռւում վերջանում, երեւում էր լայնարձակ դաշտը։ Չնայած Կիրակի օրուան, փողոցը նոյնքան լուռ էր ու խաղաղ, որքան ամէն օր։ Մի վայրկեան այդ անմարդութիւնը հանգստացրեց Վարոսին և նա յոգնած ժպտաց։

Ի՞նչ անել՝ փոխանակ այսպէս մոլորուած կանգնելու։ Ահա Թաթոս հօրեղբօր տունն իր աջ կողմում։ Չմտնե՞լ արդեօք, խօսել հօրեղբօր կնոջ հետ և գուցէ մի բան պատմել նրան, որ դեռ ես չի պատմել ոչ ոքի... Գուցէ մտնել Փալանջոնց մօ՞տ։ Ահա և նրանց տունն իր ձախ կողմում։ Եթէ Վարոսը մտնի այնտեղ, Փալանջոնց ամբողջ ընտանիքը դուրս կը վազի նրան դիմաւորելու։ Գոհարը կ'ամաչի, կը ժպտայ, բայց հայեացքը չի խոնարհի և խոստացող կերպով աչքով կ'անի։ Ընտանիքն ուզում է, որ Վարոսն իրենց փեսան դառնայ, իսկ Գոհարը սիրում է նրան։

Կամ գուցէ մտնել ա՞յս տունը։ Վարոսը չի յիշում կամ չգիտէ, թէ ո՛ւմ տունն է դա, բայց կարող է մտնել և մի թաս ջուր խնդրել իր տօթ հոգու համար...

Իսկ ինչո՞ւ խնդրել։ Ո՞վ պիտի բերի ջուրը։ Միթէ Հեղնա՞րը։ Ուրիշ ո՞վ կ'արժենայ նրա մի մազին։

Վարոսը յուսահատ կերպով ձեռքը տարաւ դէպի վիզը՝ օձիքը քանդելու համար։ Բայց այն արդէն քանդած էր մինչեւ վերջին կոճակը։ Ուրեմն էլ ինչո՞ւ էր տօթ։ Չէ՞ որ դեռ լրիւ կէսօր էլ չէր։ Նա շօշափեց վիզը, յետոյ կուրծքը և ձեռքը ծոցը տարաւ։ Չխմե՞լ արդեօք։ Չգնա՞լ արդեօք այդպէս

խմած, ձեռքն այդպէս ծոցը դրած և հասնելով իր սիրոյ ու մեղքի դրանը՝ դառնօրէն լաց լինել նրա շեմքի վրայ...

Նա ծանր հառաչեց և շարունակեց քայլել։ Նրա երկու կողմում, լուռ ու միայարկ՝ կանգնած էին տները։ Կտուրներից հորիզոնական դիրքով դէպի փողոց էին երկարուել մուգ կարմիր ներկուած թիթեղէ ջրհորդանները, որոնց գլուխները մի արմուկով վար էին թեքուած դէպի փողոց։ Նրանք իրենց վրայ աքլորների նման ատամնաւոր կատարներ ունէին, իսկ բերանների երկու կողքերին՝ ատամնաւոր ճեղքեր, որոնք նրանց նմանեցնում էին շան գլխի։ Այդ շան գլուխները կարծես ծիծաղում էին Վարոսի վրայ իրենց կիսաբաց բերաններով և թիթեղէ ատամներով ծաղրում էին նրան։

Վարոսը կանգ առաւ։ Աւելի շուտ անգիտակցաբար, քան գիտակցօրէն, նա բաց արեց մօտակայ դարբասը և մտաւ հայաթ։ Մօտեցաւ տան դրանը՝ ջուր խնդրելու համար։ Թէ՛ դուռը, թէ՛ նրա կողքի երկու լուսամուտները բաց էին, բայց ներսում ոչ ոք չկար։ Ըստ երեւոյթին, բնակիչները գտնւում էին փողոցի կողմի սենեակներում։ Հայաթում, արեւի պայծառ լոյսի տակ, գունաթափուած փուխր հողի մէջ քուջուջ էին անում հաւերը։ Ոչ մի ծառ ի հարկէ չկար, իսկ կենտրոնում գտնւում էր ջրհորը։

Վարոսը մօտեցաւ դրանը։ Որպէս զի հաւերը չմտնէին տուն, դրան վրայ՝ մարդու կէս բարձրութեամբ կախուած էր կարմիր ճաղերով մի դռնակ։ Վարոսը ձեռքը դրեց դռնակին և նայեց ներս։

— Մայրի՛կ, — ձայն տուեց նա։

Ոչ ոք դուրս չեկաւ։

Վարոսը յետ դարձաւ և գնաց դէպի ջրհոր։

Դոյլը, որ երկար պարանով կապուած էր ճախարա-
կից, թողեց ջրհորի մէջ, ապա վեր քաշեց։ Ճախա-
րակի ճռնչոցի վրայ մի հասակաւոր մարդ դուրս
եկաւ հայաթ։ Վարոսը գլխով բարեւեց նրան և
դոյլը մօտեցրեց շրթունքներին։ Ջրից բուրեց հորի
թարմութիւնը։ Ջրի մէջ երեւաց իր յոգնած կեր-
պարանքը. նա նայեց իր խամրած աչքերին և առանց
մի կաթիլ խմելու՝ դոյլը վար դրեց։ Նրա կողքին
կանգնած էր տանտէրը։

— Ընչի՞ չխմեցիր, ախպօ՛ր մանչ։

— Ծարաւ չեմ, հօրեղբա՛յր։

— Ըպը մեր հայաթն ի՞նչ գործ ունէիր, — կաս-
կածանքով ժպտաց տանտէրը։

— Գող չեմ, հօրեղբա՛յր։ Ես ոսկերիչ Վաղի-
նակի տղէն եմ։

— Ոսկերիչ Վաղինակի տղէ՞ն...

Տանտէրը մտերմութեամբ բռնեց նրա թեւից։

— Նես արի, ախպօր մանչ։ Ռախին ջրից լաւ է։

— Չէ, շնորհակալ եմ, — հրաժարուեց Վարոսը.
— Ջուրն որ չմարեց, ռախին ալ չի մարէ։

Նա գնաց, իսկ տանտէրը տարակուսանքով մի
վայրկեան նրա յետեւից նայելուց յետոյ՝ մտաւ ներս։
Երբ Վարոսը ելաւ փողոց և ճանապարհը շարունա-
կելու համար անցաւ տան պատի տակով, տեսաւ
լուսամուտներից մէկի յետեւում նստած մի ջահէլ
ու գեղեցիկ աղջկայ։ Մտածեց, որ տանտէրը կարող
էր կարծել, թէ ինքը սիրահարուած էր աղջկայ վրայ
և տխուր ժպտաց։

Քիչ յետոյ սկսուեց դաշտը։ Բաւական երկար
տարածութեան վրայ նա դեռ հնարաւորութիւն չու-
նէր ընդարձակուելու։ Ձախ կողմում ռազմամը-
թերքների պահեստներն էին և նրանց յետեւում,

բլրաշարքի վրայ՝ երկարաձիգ բերդը։ Պահեստների և բերդի արանքում Զերքէզի Ձոր կոչուող զբօսանքի ծորակն էր, որ չէր երևում։ Աջ կողմում ռանչպարների մահլան էր և նրա յետևում, հարթ տարածութեան վրայ, քաղաքի ամենահռչակաւոր զբօսավայրը՝ Ջիթողցոնց Ձաբորը։ Ռանչպարների մահլայի և Ձաբորի միջև Ձորի Բողազն էր, որ նոյնպէս չէր երևում։ Այնուհետև, ուր վերջանում էին բերդը, պահեստները, մահլան, Ձաբորը, տարօրինակ կերպով վերջանում էին նաև ձորերը։ Նրանք երկուսն էլ կտրուկ կերպով ընդհատուում էին դիք ու բարձր պատով, իսկ դաշտով հոսող երկու փոքրիկ ջրերը ջրվէժներով թափուում էին նրանց կոկորդն ի վար։ Այդտեղից այն կողմ, դաշտն այլևս ոչնչով սահմանափակուած չէր՝ մինչև հեռու լեռները։ Վարոսն ազատ ու խորը շունչ քաշեց։ Առաջին պահ նրան այնպէս թուաց, թէ այդ տեսարանի լայնարձակութիւնը խաղաղութիւն կը տայ իրեն։ Նոյնիսկ թուաց, թէ դաշտի մաքուր հովը շոյեց իր այրուող երեսը։ Նա քայլեց շոսէով, գուցէ մինչև դիմացի լեռները և նրանց լանջափոսերում ծուարած գիւղերի անդորրը։ Սակայն դեռ հազիւ հարիւր քայլ արած՝ նա զգաց, թէ ինչպէս մի չհանգչող բոց լափում էր իր կուրծքը, և իր ոտքերը դժկամութեամբ են առաջանում։

Նա բնազդաբար կանգ առաւ և դժկամութեամբ նայեց յետ։ Ափսէաձև ոչ խորը փոսի մէջ փռուած էր ընդարձակ քաղաքը՝ ցածլիկ բլուրների վրայ ելնող իջնող փողոցներով։ Նրա ընդհանուր գորշ պանորամայի միջից, այստեղ ու այնտեղ, վերև էին խոյացել սևաքար ու կարմրաքար եկեղեցիների սրածայր գմբէթները՝ արևի տակ պայծառ ու հա-

ւասար փայլող խաչերով։ Իսկ հեռո՜ւ, հեռո՛ւ, հարաւ-արեւելեան ծայրում երեւում էր Թուրքական Թաղամասն Ալագեազի անմարմին կապոյտի ֆոնի վրայ։

— Օ՜օ՜օ՜ֆ,— մռնչաց Վարոսը ոչ իր հասակի ձայնով և չուռ գալով արագ քայլեց դէպի ինքն էլ չգիտէր ո՛ւր, յամենայն դէպս աւելի հեռու քաղաքից, աւելի հեռու՝ առանց այդ էլ հազիւ երեւացող Թուրքական Թաղամասից...

Գնալով բաւական տարածութիւն, նա նորից կանգ առաւ։ Ոչ։ Այդպէս չի լինի։ Պէտք է մի բան մտածել, պէտք է մի բան անել...

Նա թեքուեց դէպի ռանչպարների թաղամասը։ Մտաւ մի փողոց և գնաց։ Որքան գնաց, այնքան աւելի արագացրեց քայլերը, ըստ երեւոյթին աւելի ամրապնդուելով մտքում ընդունած մի որոշման մէջ։ Նրա կողքերով անցան լեռ-քարէ տներ՝ կտուրների վրայ դիզուած հոտաւէտ խոտի դէզերով, կալերի գոտկաչափ բարձրութեամբ պատեր՝ իրենց կենտրոնում փռուած և կիրակի օրուայ պատճառով կիսակալսել թողած վառ դեղին ցորենով. անցան գիւղական դռներ, լուսամուտներ, փոքրիկ բացատներում արածող հատուկենտ ուլեր և բխոված ձիեր, որ գլուխներն էին թափահարում։

Եւ յանկարծ, բոլորովին անսպասելի կերպով, մահլան ընդհատուեց. կարծես գետինը միանգամից ճեղքուեց և Վարոսն անմիջապէս իր ոտքերի տակ, ցածրում, տեսաւ Ջրի Բողազը։ Նա արագ քայլեց դէպի ձորը կախուած ահագին ժայռը և կանգնելով նրա պռունգին՝ նայեց ներքեւ։ Իր ոտքերի տակ կտուրներ էին, հայաթներ, փողոցներ, բարդիներ։ Ամենաներքեւում, հալուած՝ բայց սառն արծաթի

նման հոսում էր ջուրը, իսկ միւս ափի վրայ նորից գտնւում էր այն, ինչից Վարոսը փախչում էր…

Ուստա Մկրտչի տունն ուղիղ դիմացն էր։ Լուսամուտները փակ էին, դուռը փակ էր, փակ էր նոյնիսկ ջրհորի բերանը։ Տան առջեւի հարթ, բաց հայաթում, որը ցանկապատի փոխարէն շրջանակուած էր բարդիներով, նոյնպէս ոչ ոք չկար։ Միայն շատ ուշադիր նայելուց յետոյ էր, որ Վարոսը նկատեց ծառերից մէկի ստուերում նստած ուստա Մկրտչի մօրը, որ գրկել էր փոքրիկ Գալուստին և անշարժացել։

Վարոսի կոպերը փակուեցին, նա օրօրուեց ժայռի պռունգի վրայ։ Էլ ինչո՞ւ ապրել Հեղնարից յետոյ։ Միթէ իր կեանքն այլեւս կարո՞ղ է բանի պէտք լինել։ Միթէ արժէ՞ ափսոսալ, եթէ այդ անպէտք մարմինն ընկնի այդտեղից և ջախջախուի…

Սակայն ցած նետուելու վճռական շարժմանը կանխեց մի սոսկալի միտք, որը չանթահարեց նրան։ Չէ՞ որ եթէ ինքն ընկնի այդտեղից և ջախջախուի, իր հետ պիտի մեռնի նաև իր մաքուր, իր անկեղծ, իր բարձր սէրը Հեղնարի հանդէպ։ Էլ ո՞վ պիտի սիրի Հեղնարին՝ իրենից յետոյ։ Ի՞նչ յուշարձան պիտի մնայ սիրելի կնոջ գերեզմանի վրայ. միթէ այն քա՞րը, որ պատրաստում է ուստա Մկրտիչը՝ Հաբիբայի գարբասի յետեւում փակուած։ Բայց քարը չիրիմ չէ Հեղնարի համար, այլ վիրաւորանք է և անէծք։ Հեղնարի հողաթմբի վրայ պիտի մնայ մի կենդանի սիրտ, անսահման սիրով և անվերջ այրուող։

Բայց ո՞ւմ սիրտը, եթէ նա ինքն իրեն ցած նետի…

Նա ի հարկէ չի մեռնի, նա կ'ապրի Հեղնարի սէրն անմեռ պահելու համար, նա կ'ապրի որպէս վկայ մարդկային անարդարութեան, որն իրեն զըրկեց իր սիրած կնոջից։

Յանկարծ Վարոսի հանգած աչքերը փայլատակեցին և նա սպառնական հայեացքով նայեց դէպի քաղաք։ Մէկն այնտեղ մեղաւոր է իր սիրած կնոջ մահուան մէջ։ Բայց ո՞վ յատկապէս։ Երբ Վարոսը գտնի մեղաւորին, կը սպաննի առանց տատանուելու կամ խղճահարուելու։ Սակայն նրա թեւերը հենց այն է կապում, որ նա չի կարող գտնել նրան։ Ո՞վ է նա։ Ուստա Մկրտի՞չը։ Բայց նա ոչ միայն չի սպաննել Հեղնարին, այլեւ այժմ չիրմաքար է պատրաստում նրա համար։ Գուցէ ինքն ու Հեղնա՞րն են մեղաւոր, ինչպէս ասում է ամբողջ Գիւմրին։ Իսկ ինչո՞ւ ինքն ու Հեղնարը։ Սիրելո՞ւ համար։ Ո՞վ ասաց, թէ սէրը մեղք է։ Ո՞վ գրեց այդ օրէնքը։

Աւելի լաւ չէ՞ թողնել այդ բոլոր մտքերը, հեռանալ Գիւմրիից, մոռանալ ամբողջ անցածը և ընկնել այնպիսի մի աշխարհ, որտեղ, ո՛վ գիտէ, ընտանիքի պատիւն էլ է մաքուր, սէրն էլ է սուրբ...

Վարոսը ցնցուեց։ Հեռանալու միտքը յանկարծակի լոյսով լուսաց նրա սրտի խաւարը։ Իրօք որ թողնել, գնալ, կորչել։ Քաղաքում ամէն ինչ Հեղնարին է յիշեցնում, իսկ դա սարսափելի ծանր է, քանի որ Հեղնարն այլեւս չկայ և երբեք չէ լինելու։ Ահա նա յիշում է իրենց փողոցը, որտեղով անցնում էր ուստայի կինը։ Իրենց խանութի մօտով անցնելիս, երբ թէ անփութօրէն, երբ թէ պատահաբար, նա նայում էր ներս՝ մի ակնարկով իրեն հասկացընելու համար, որ գնում է թուրքական թաղամաս և ոչ թէ մի այլ տեղ, որի պատրուակով դուրս էր

եկել անից։ Ահա նա յիշում է այն ղայֆախանան, որտեղ աւելի յաճախակի էր հարկ լինում նստել և սպասել իր սիրուհու անցնելուն, քանի որ իրենց խանութում մնալը դառնում էր հետզհետէ աւելի անտանելի, որովհետեւ մայրը տրտնջում էր իր մսխելու վրայ և խնդրում էր գոնէ ասել, թէ ո՛ւր է գնում այդքան փողը։ Եւ ահա յիշում է այն խաղաղ, մենաւոր բնակարանը, ուր իրենց սէրն էր ծաղկում։ Ինքը շրթունքները հպում էր սիրած կնոջ ձիւնային սպիտակ պարանոցին և երեխայի պէս զարմանում, թէ ի՞նչպէս կարող էր այդպիսի սպիտակութիւնն ունենալ այդքան ջերմութիւն... Յետոյ խօսում էին միասին անցկացրած քաղցր օրերի մասին և յիշում էին միմեանց հետ ծանօթանալը, որն ամենաքաղցրն էր բոլոր օրերից։ Այդ մասին խօսում էին միշտ, ամէն հանդիպման ժամանակ, վախենալով որ շարուող օրերի ընդարձակուող տարածութեան յետեւում աչքից կը կորցնեն յուշերի անուշներից այդ անուշը։

... Ձորի Բողաղում գարուն էր։ Հալչում էր ձմեռուայ ձիւնը և արեւն արդէն հաճելի տաքացընում էր մարդկանց մէջքերը։ Ամէն ինչ թաց էր։ Ձորի լանջերն ի վար հոսում էին ջրի մանրիկ շերտեր։ Նրանց իւրաքանչիւր երիզը հոսում էր հիւսելով։ Հիւսուելուց՝ ջուրը կլկլում էր տարբեր հնչիւններով և անընդհատ փայլփլում։ Ձորով հոսող Գիւմրի-չայը սառն էր ու վճիտ։ Հողը խոնաւ էր ու փափուկ, նրանից գոլորշի էր բարձրանում, բայց տեղ-տեղ գոլորշին արդէն սպառւում էր և գետինը գունաթափւում։ Գալիս էր թարմ ու հաճելի խոնաւութեան հոտը։ Երկինքը կապոյտ էր՝ զարմանալի յստակ և զարմանալի համահաւասար մի կապոյ-

տով։ Ամբողջ ձմեռուայ ընթացքում արեւի վրայ քաշուած փառը միանգամից վերացել էր և մարդիկ նորից ամէն առարկայ տեսնում էին պայծառ կերպով։ Բոլոր դարբասները; դռները, լուսամուտները բաց էին։

Տները դատարկուել էին. թէ՛ մարդիկ, թէ՛ իրերը գտնւում էին դրսում։ Պատերի տակ դրուած քարերի վրայ, արդէն բոլորովին չորացած կտուրների վրայ, արեւի երես էին հանուած գոյնզգոյն ներքնակներ, գոյնզգոյն վերմակներ, տաք երանգի գորգեր, կարպետներ, ջեջիմներ, ձիւնային սպիտակութեամբ բարձեր։ Պատերից մինչեւ ծառերը կապուած պարաններին կամ դուրս հանուած աթոռների վրայ փռուած էին վերարկուներ, սնտուկ դնելու կամ արդէն սնտուկից հանած հագուստներ։

Վարսը նստել էր իրենց տան պատի տակ, ինչպէս ամէն գարնան, և նայում էր։ Նա իր մի ձեռքը դրել էր իրենց սպիտակ շան վրայ, որի բուրդը հաճելիօրէն տաքացել էր ու փափուկ էր։ Այդ տաքութեան մէջ ոչինչ չկար վառարանից, վառուող ու ճարճատուող ցախերից, անզօր բոցից։ Այդ տաքութիւնը գարունն ինքն էր, և Վարսն իր մատների տակ կարծես արեւն էր զգում։ Նա նայում էր դէպի երկնքի անսահման կապոյտը, որտեղով ուրախ կռանչով իրենց հայրենիքն էին վերադառնում կռունկները։ Կապոյտ անսահմանութիւնից լսւում էր նրանց հրաշալի, լաւագուշակ կռանչը։ Ներքեւում, ինչ որ տեղում, երեխաներն աղմկում էին կռունկների մասին, ինչ որ մօտիկ տան արեւկող պատի տակից լսւում էր, թէ ի՛նչպէս մի ծերունի, կռունկների իւրաքանչիւր կռանչին ի պատասխան, մրմնջում էր. «Ջան, ջան, ջան»...

Վարոսի միւս կողմում, պարանի վրայ, երկտակ փռուած էին գորգերը։ Նրանք տաք պատի նման վարագուրել էին այդ կողմի տեսարանը։ Իրենց տան դուռը գորգերի այն կողմն էր։ Այն կողմն էր նաև գորգերի վար նետած սուսերը։ Իսկ Վարոսի կողմում, գորգերի մութ խայտաբղետութիւնը վառւում էր արևի տակ իր խորը, փափուկ ջերմութեամբ։

Յանկարծ Վարոսը ցանկութիւն զգաց. ինչպէս իր վաղ մանկութեան գարուններին, մանել երկտակ փռուած գորգերի արանքը, երկու ականջների վրայ զգալ գորգի տաք հպումը, քայլել այդ նեղ խաւարում, անվերջ քայլել, մինչև որ յանկարծակիօրէն ընդհատուէին գորգերը, յանկարծակիօրէն իր աչքերը շլանային անսպասելի արևից, իսկ ականջները ազատուելով գորգի հպումից, միանգամից լսէին գարնան բոլոր ձայները.— հազարաւոր մանր ջրերի մեղմիկ քչքչոցը, թարմ օդի չնկչնկոցը, երեխաների բացագանչութիւնները, ուրախութիւնից գլուխ անող երկու շնիկների մռմռոցը, դրկիցի հասած աղջկայ զուարթ ծիծաղը… Վարոսը նոյնիսկ վեր ցատկեց տեղից, բայց իր հասակից չփոթուած՝ նորից նստեց. ինքն այլևս չէր տեղաւորուի պարանի տակ, իսկ իր քայլերի համար՝ այդ մի քանի գորգերի տակ և մութ միջանցքն այլևս անվերջանալի չէր թւում… Քիչ յետոյ Վարոսը վեր կացաւ, իջաւ դէպի ձոր, անցաւ ձորալանջի տների առջևւով՝ գարնան բացուելուց հիացած։ Նա առանց պատճառի ժպտում էր։ Նայում էր պատերի տակ արևկող անող, բայց ոչ թմրող, այլ կայտառ շներին և ոչինչ չէր մտածում։ Նա իրեն զգում էր անհաւատալի կերպով թեթև։ Ոչ մի հագուստ չէր զգում

իր վրայ. Թւում էր, թէ ինքը մեռել է։ Նա բոլորովին չէր աշխատում ոտքերը շարժել. Նրանք փոխւում էին իրենք իրենց։ Նրա կուրծքը կարծես բոլորովին դադարել էր ելեւէջներ անելուց, և օդն ինքնիրեն էր ներս ու դուրս անում նրա ռունգերով։ Իր թեթեւութիւնի՞ց էր թէ հողի փափկութիւնից, նա իր ոտքերի տակ գետինը չէր զգում։

Նոյն րոպէին, երբ նա անցնում էր ուստա Մկրտչի տան առջեւով, դուռը բացուեց և Հեղնարը մի ներքնակ գրկած դուրս եկաւ այնտեղից։ Ներքնակի յետեւում նրա դէմքը չէր երեւում։ Բայց երբ նա ներքնակը փռեց պատի տակ դրուած քարերի վրայ. Վարոսը կանգ առաւ ապշած ու հիացած և չկարողացաւ նոյնիսկ քողարկել իր հետաքրքրութիւնը։ Ո՞վ էր այդ գեղեցկուհին։ Միթէ ուստա Մկրտչի կի՞նը... Բայց ի՞նչպէս էր եղել, որ Վարոսը մինչ այդ չէր նկատել նրան։ Միթէ կարո՞ղ էր պատահել, որ նա նրան երբեւէ տեսած չլինէր։ Անհնար էր։ Աւելի շուտ՝ կոյր էր եղել Վարոսը, դեռ կին չտեսած տղայի կուրութեամբ։

Կինը նկատեց նրան, ժպտաց և հարցրեց.

— Ի՞նչ կ'ուզես, Վարո՛ս...

Դուն ընձի գիտե՞ս, — զարմացաւ Վարոսը։

— Ոսկերիչ Վաղինակի երեխէն չե՞ս։

Կարծես մէկն ապտակեց Վարոսին և յետոյ քըրքըջաց։ Նա մահացու կերպով վիրաւորուեց և կռուի հրաւիրող յանդգնութեամբ պատասխանեց.

— Վաղինակինն եմ, հըմը երեխայ չեմ։ Ծոցս կ'առնեմ՝ կը տեսնիս...

Վարոսի խօսքերի՞ց էր թէ աչքերի սանձարձակ արտայայտութիւնից, կինը կարմրեց, չփոթուած ժպտաց, շրթունքը կծեց և արագ մտաւ ներս։ Վարոսը հեռացաւ։

Նոյն օրը, կէսօրից յետոյ, երբ դեռ արև կար, Հեղնարը մտաւ նրանց խանութը։ Ներսում մենակ Վարոսն էր։ Նա նկատեց, որ կինը հագել էր դրսի զգեստներ և նրան թուաց, թէ աւելի բնական կը լինէր, եթէ նա գար տնային հագուստով, քանի որ ուստայի տունը մօտիկ էր։

Վարոսն արագ վեր կացաւ և մօտեցաւ նրան։ Հեղնարը գիտէր, որ Վարոսն առևտրով չի զբաղ-ւում, ուստի և, նայելով շուրջը, հարցրեց.

— Ո՞ւր է մէրդ։

Վարոսին թուաց, թէ Հեղնարը պատրուակով էր եկել։ Ժպտաց, բռնեց ձեռքը և ամուր, չափա-զանց ամուր սեղմելով՝ նայեց աչքերին ու աչքով արեց։

— Ի՞նչ կ'ուզես, սալախանա՛յ, — շնչասպառ շշնջաց Հեղնարը։

— Վարդ կ'ուզեմ գարնանս հըմար...

Յանկարծ Հեղնարը նայեց տղային չափազանց քնքուշ և բնազդական շարժումով ձգուեց դէպի նա՝ այնպէս, որ կարծես գրկել էր ուզում։ Բայց յետոյ յետ նետուեց սարսափած ու գնաց դէպի դուռը։

— Էգուց էս ժամանակ արի Թուրքի Թաղի ճամբու վրայ, աղի՛ղ, — շշնջաց Վարոսը։ — Ես լաւ բան եմ մտածէ...

...Ամէն օր, ամէն օր Վարոսը պիտի յիշի այս ամէնը։ Ո՛չ, անհնար է այլևս Գիւմրիում մնալ...

Նա ծանր շունչ առաւ։ Նրա աչքերն արցունքով լցուեցին, բայց նա ամաչեց ինքն իրենից, շափխան քաշեց յօնքերի վրայ, ապա դարձեալ յետ թեքեց և դառնութեամբ նայեց դէպի քաղաք, որն արգելում էր տղամարդուն՝ լաց լինել նոյնիսկ այն ժամանակ, երբ նրանից հեռացել էր նրա աղիղ Հեղնարը...

Գնալ էր հարկաւոր, հեռանալ...

Եւ յանկարծ Վարոսը նորից յիշեց այն, որ շարունակ կանգնած էր նրա ուղեղում այդ վերջին օրերը։ Յիշեց, որ այնտեղ, իր սիրոյ տանը, աղբիւրների հռչակաւոր վարպետը շիրմաքար էր տաշում Հեղնարի համար։ Հարկաւոր էր սպասել, տեսնել թէ ի՞նչ էր լինելու այն քարը և ի՞նչ էր լինելու այն գիրը, որի տակ հող էր դառնալու իր սիրած կնոջ մարմինը։ Նա կը գնայ գիշերով, որպէս զի մարդիկ իրեն չտեսնեն և որպէս զի նա կարողանայ շիրմաքարի վրայ դրոշմել հրաժեշտի իր համբոյրը, որը նա, աշխարհի կամքով, անկարող էր դրոշմել դագաղում պառկած Հեղնարի ճակատին... Իսկ այնուհետեւ, իր այդ վերջին պարտքը կատարած, նա դուրս կը գայ Գիւմրուց և ոտք կը կոխի անյայտ և անիմանալի ճանապարհների վրայ...

Վարոսը դանդաղաքայլ իջաւ ձոր՝ տուն գնալու մտադրութեամբ։ Որքան իջաւ, այնքան աւելի ձորը շրջապատեց նրան և վերեւում փռուած աշխարհը դադարեց նրա համար գոյութիւն ունենալուց։ Քիչ յետոյ նա տեսաւ, որ ինքն արդէն ձորի ներքեւումն է, ուղղակի ջրափին։ Օրօրուելով ջրի մէջ շարուած ողորկ, կլոր քարերի վրայ՝ նա առուակն անցաւ։ Կանգ առաւ, նայեց շուրջը։ Եւ առաջին անգամ իր կեանքում, ձորը կարծես բռնեց նրա կոկորդից։ Նա շնչահեղձի նման սկսեց արագ արագ շնչել, նրա կուրծքը մի ծանր ճնշումով սեղմուեց և այդպէս մնաց։ Տագնապած՝ Վարոսն սկսեց շտապ բարձրանալ ձորն ի վեր, բայց ո՛չ թէ տուն գնալու համար, այլ դուրս գալու դաշտ, ազատուելու՝ անհասկանալիօրէն վրայ հասած խեղդուկից։

Այդ լանջով, իրենց տան մօտով, նա բարձրա-

ցաւ դաշտ։ Այնտեղ այլեւս արձակ տարածութիւնն էր, իսկ աւելի հեռուում՝ Ձիթողցոնց Ձորը կոչուող զբօսավայրը։ Գուցէ գնալ այնտե՞ղ, նստել ծառերի տակ, հանգստանալ, խաղաղուել...

Եւ Վարոսն սկսեց քայլել, աչքերը չկտրելով դիմացի պատկերից։ Դաշտը նրան թուաց անսահման կերպով մեծ և նա սկսեց քայլերն արագացնել՝ շուտ հասնելու համար։ Քայլելիս, երկար ժամանակ նա խորասուզուած էր հաճելի մոռացութեան մէջ՝ չմտածելով ոչնչի մասին։ Ուստի և զբօսավայրից եկող նուագի և խօսակցութիւնների ձայները նա լսեց յանկարծակի, այն րոպէին, երբ նա համարեա արդէն դուրս էր գալիս դաշտից։ Ի՞նչ... Նորի՞ց մարդիկ։ Նորի՞ց նա չի կարող մենակ մնալ... Յոգնած ու յուսահատ շուռ գալով, Վարոսը վերադարձաւ յետ։

Արեւն իջաւ հեռաւոր կապոյտ սարերի ուսին։ Վարոսի վրայ ընկաւ այնպիսի մի լոյս, որ կարծես կարօտ լինէր կամ թախիծ։ Դաշտը յանկարծակի փռուեց հորիզոնական ճառագայթների տակ և դարձաւ անծանօթ։ Ուշացածի շտապ սլացքով մօտեցաւ, անցաւ, գնաց քամին, որ կարծես թափառական երգասաց լինէր՝ արեւի մահը եղերգող։

Արահետը, որ անցնում էր վերջալոյսից խամրած դեղին հասկերի տաք ծովի միջով, աւելի էր ստուերում Վարոսի տխրութիւնը. արահետը նեղ էր մի մարդու համար, մի մենակ մարդու, առանց ուղեկիցների, առանց հետեւորդների։ Շուրջը զարմանալիօրէն խաղաղ էր և ամայի, իսկ ինքը, Վարոսը, կարծես քայլում էր այդտեղով, որպէս զի աւելի խաղաղ լինէր խաղաղութիւնը, աւելի ամայի՝ ամայութիւնը, և այդ բազմապատկուած անդոր-

բի միակ վկան լինէր դարձել ինքը։

Արահետի երկու կողմերում, մերթ-մերթ հանդիպում էին արտի համահաւասար մակերեսից վերեւբարձրացած միայնակ հասկեր։ Արեւն ընկել էր նրանց կաութին, որը շլացուցիչ պայծառ՝ վառւում էր չրջապատի խամրած դեղնութեան վրայ։ Երբեմն այդ հասկը լինում էր շատ մօտ, անմիջապէս Վարոսի կողքին. իսկ երբեմն հեռու, շատ հեռու, ընդ որում անկարելի էր լինում որոշել նրա ճիշդ տարածութիւնը։ Երբեմն ամենահեռու թուացող մի փայլուն հասկ յանկարծ դուրս էր գալիս չափազանց մօտ։ Վրայ էր հասնում այն ժամը, երբ մարդու աչքերը շաղւում են դեռ չմեռած լոյսի և դեռ չծնուած խաւարի խառնուրդից...

Վարոսը նայում էր հասկերի միջեւ գալարուող աննկատելի արահետին և ցրուած մտածում։ Իր ճակատի վրայ նա զգում էր հանգչող արեւի վերջին լոյսը, բայց կարծես չէր համարձակւում նայել նրան։ Հասկերը, որոնց կպչում էր նա քայլելիս, անվստահ խշշում էին արդէն լիքն ու հասուն։ Արտը թւում էր յաւիտենութեան պէս անափ, և Վարոսն արդէն մոռացել էր, թէ ինքը ե՛րբ էր մտել այդտեղ։ Թւում էր, թէ նա այդ արձակ դաշտով քայլում է։ վաղ մանկութիւնից սկսած ու դեռ պիտի քայլէր այդքան։ Եւ նա գոհ էր այդ զգացումից, որովհետեւ շրջապատի խաղաղ միօրինակութիւնը հանգստացնող կերպով կլանել էր նրան։ Իսկ երբ արտն աննկատելիօրէն վերջացաւ և տեղի տուեց բաւական տեղ ձգուող պնդացած, քարքարոտ հողին, Վարոսը՝ անդորրութեամբ պարուրուած՝ չնկատեց այդ։ Միայն նրա քայլերը, երեւի արահետից դուրս գալու հետեւանքով, անզգալաբար արագացան։ Նրա

ոտքերի տակով, իրար յաջորդելով, սկսեցին անցնել մերթ գորշ հողը՝ իր վրայ տափակացած արդէն դեղին կանաչով, մերթ հողի տակից դուրս պրծած մի քարաժայռ՝ ողորկ և տեղ-տեղ կարծես ժանգոտ։ Արագաքայլ անցնելով՝ Վարոսը չէր նկատում, թէ ինչպէս հողի ու քարի փոփոխութեան համեմատ ջերմանում էին իր ներբանները,— մերթ տաք, մերթ աւելի տաք։

Յանկարծ Վարոսը կտրուկ կանգ առաւ։ Իր ոտքերի տակ, շրջապատի վերջալոյսի մէջ, երկարաւուն գիշերով ձգուել էր Ջորի Բողազը։

Այնտեղ արդէն վառւում էին մանրիկ կրակները՝ սեւ մթութեան մէջ ոչինչ չլուսաւորելով։ Տեղ-տեղ նրանք ձգւում էին շարքերով, ենթադրել տալով որ այդտեղ փողոց է գնում. տեղ-տեղ խըռնուած էին անկանոն,—վերեւ, ներքեւ, առատ, հատ ու կենտ։ Թւում էր, թէ նրանք մանրիկ կայծեր են՝ դատարկ մթութեան մէջ քարացած։ Սակայն այդ կրակների միջեւ, տեղ-տեղ վառւում էր գազի որեւէ մեծ լապտեր, որը մի կլոր, մեծ սկաւառակով լուսաւորում էր փողոցի մի հատուած, յայտնաբերում էր խաւարում կորած որեւէ ծառի կէսը, փայլում էր արդէն քնած որեւէ տան մութ ապակիների վրայ, կամ ընկնում լուսամուտների փակ փեղկերին և միանում նրա ճեղքերից երեւացող լոյսի երիզների հետ։

Այդ տեսարանները երեւում էին դիմացի լանջի վրայ, ցած ու ցրիւ, սակաւ հատուածներով, որոնք տարտղնուել էին մանրիկ կրակներով պլպլացող խաւար տարածութեան վրայ։ Իսկ այն լանջի վրայ, որի բարձրում Վարոսն էր կանգնած և որի տների միջեւ գտնւում էր նաեւ իրենը, նա ոչինչ չէր

տեսնում։ Դռներն իրենց վերեւի նաւթի լամպերով, պատուհանները՝ փայլող ապակիներով, փեղկերը՝ լոյսերի երիզներով, չէին կարող երեւալ։ Միայն մի քանի տեղերում փայլում էին գազի լապտերները սիւների բարձրից և նրանց լոյսերի տակ աղօտ երեւում էին տափակ կտուրների սպիտակաւուն քառանկիւնիներ, փողոցների սպիտակաւուն երիզներ, ապա նորից կտուրներ ու փողոցներ։ Նրանց միջեւ, աւելի մեծ, մութ քառանկիւնիներով երեւում էին հայաթները։

Ձորի Բողազն էր ձգուած այնտեղ՝ ձորի քարքարոտ և անմարդ սկզբից մինչեւ լուսապայծառ ու լայնատարած քաղաքը։ Կարծես լոյսերի ու մթութեան խառը մի գետ՝ նա լայն ու խոր հոսում էր դէպի քաղաք, փռուելով այնտեղ և բաժանուելով բազմաթիւ փողոցների։

5

Գիւմրու հիւսիսում, ուր քաղաքի վերջին տները բարձրանում էին դէպի լայնարձակ դաշտը, քաղաքի անմիջապէս պռունգին, գտնւում էր Ջիթողցոնց Զաքար կոչուող զբօսավայրը։ Աղաղ, գեղեցիկ մի ծառաստան էր այն, գիւթիչ, հիանալի մի վարդարան, ուր ծառերն ստուերախիտ լինելու չափ շատ չէին և վարդերը՝ պերճաշուք լինելու չափ առատ։ Ընդհակառակն, արեւոտ ու զուարթ մի այգի էր այն. որի՝ այս ու այն կողմում, առանձին-առանձին կանգնած էին նօսրատերեւ ծառեր, որոնց տակ արեւի ու ստուերի պուտերը թափւում էին ոսկու և արծաթի խառը անձրեւի պէս։ Տեղ-տեղ, երկու-առանձին ծառերի արանքում, կանգնած էին վայրի թփերի խիտ շարքերը, իսկ տեղ-տեղ նրանք կանգ-

նած էին առանձին-առանձին։ Մի փոքրիկ, հրաշալի չէնք կար թփերով շրջապատուած, մի մեծ, քառակուսի աւազան կար, որ շատրուանի փոխարէն ունէր աղբիւրի խողովակ։ Այգու մի կողմում, սեւաքար, ութանկիւնի, գմբէթաւոր մի ցամաք աղբիւր կար, որի հարաւային պատի տակ չոր, գորշ հողափոշի կար՝ միշտ արեւից տաքացած, իսկ հիւսիսային պատի վրայ՝ ամենամանր կանաչ մամուռ, ստուերից ու խոնաւութիւնից սնուած։ Այգու մի այլ կողմում, ուղղակի գետնի վրայ, անպատուանդան, մի սեւամարմար, քառանկիւնի շիրմաքար կար, որի կողքին կանգնած մեծ ուռենին նրա վրայ կախել էր իր ստուերը՝ կիսով չափ ծածկելով այն և իր ճիւղերն արտացոլելով նրա սեւ հայելու մէջ, մինչդեռ միւս կէսի վրայ տիրապետում էր ջեռ արեւը։ Խաղաղութեան վայր էր այդ այգին, ուր երբեմն խշշում էին այս ու այն կողմում կանգնած առանձին ծառերը և արեւոտ կէսօրի հաճելի տաք օդի միջով անվերադարձ անցնում էր պատահական հովը։

Քաղաքը ներկայ էր այգու շուրջը։ Այգու ձախ կողմում, դաշտի բաւական ընդարձակ տարածութեամբ անջատուած, երեւում էր ռանչպարների թաղամասը։ Այդ թաղամասի և այգու միջեւ, դաշտի մէջտեղով, կարծես լերկ սահմանագիծ, անցնում էր Զարի Բողալը, որը թէեւ բոլորովին չէր երեւում, սակայն որի ներկայութիւնն զգում էին բոլորը։ Այգու աջ կողմում, դաշտի աւելի ընդարձակ տարածութիւնից յետոյ, երեւում էր կայարանը՝ կանաչ ծառերի ու գորշ շէնքերի երկար շղթայով ձգուած։ Այգու վերեւում, դաշտն իր դեղին արտերով տարածւում էր հեռու՝ մինչեւ կանաչին

տուող ցածրիկ լեռնաշղթան։ Ներքեւում, երկու քայլի վրայ, քաղաքն էր։ Շուշի մի շատ կարճ, լայն կտոր այգու մօտից իջնում էր ուղիղ դէպի փողոցների բերանը։ Զիջնելով անգամ այնտեղ, հենց քառակուսի աւազանի կամ փոքրիկ տնակի մօտից կարելի էր տեսնել քաղաքի առաջին շէնքերն իրենց քառակուսի, անծառ հայաթներով կամ կարմրաքար ու սեւաքար ճակատներով, որովհետեւ այգին դրանցից շատ բարձր չէր և փոքրիկ պարիսպը չէր ծածկում դրանք։ Այնուհետեւ՝ հեռու, շատ հեռու, փռըուած էր քաղաքը կէսօրի արեւի տակ՝ իր լուսամուտների պսպղացող ապակիներով, եկեղեցիների ոսկեփայլ խաչերով և նեղլիկ ու բարձրահասակ բարդիների սրածայր գագաթներով։

Ուրաքանչիւր Կիրակի, առաւօտեան ժամի տասից-տասնմէկից սկսած, քաղաքի բոլոր կողմերից դէպի Ջիթողցոնց Զաւոր էին սլանում կառքերը։ Դա քաղաքի այն զբօսավայրն էր, ուր զբօսանքի էին գնում ոչ թէ քէֆ անող տղամարդիկ կամ սէր անող զոյգեր, այլ ամբողջ ընտանիքներ։ Իրենց կառքերում նրանք տանում էին հեչտաեռներ, կրակարաններ, թէյի և ճաշի պարագաներ, ճիշդ է՝ տանում էին նաեւ խմիչք, գնում էին նաեւ պաւլզուռնայի խմբեր ու սազանդարներ, սակայն կանանց ու երեխաների ներկայութիւնը մի առանձին, ղուսպ երանգ էր տալիս տղամարդկանց գինարբուքին։

Սլանալով քաղաքի բազմաթիւ տարբեր փողոցներից, կառքերը մի անընդհատ հոսանքի էին վերածւում դէպի այգու փոքրիկ վերելքը տանող երկար փողոցում։ Արեւափայլ, սպիտակ փոշին բարձրանում էր քառասմբակող ձիերի ոտների տակից

և անիւների, որ ունէին կարմիր ներկած փայտէ կամ պսպղացող մետաղէ շառաւիղներ։ Փողոցը լցուած էր լինում զուարթօրէն մտրակող ու մէկ-մէկու հետ մրցող կառապանների ուրախ կանչերով և կառքերում նստածների անհոգ զրոյցներով ու ծիծաղներով։

Երբ վերջապէս նուաղում էր ընտանիքներին տանող և դատարկ վերադարձող կառքերի թափօրը, այգում արդէն տիրում էր ուրախ բազմամարդութիւնը։ Ամէն ծառի ստուերում, գորգերի վրայ, թեւերը բարձերին յենած՝ նստոտած էր լինում մի խումբ, մի ընտանիք կամ մի հաւաքոյթ։ Ամէն թփի մօտ թէժանում էր խորովածի թիթեղէ կրակարանը, ճաշի կաւէ քուրան կամ ոսկեփայլ հեշտաեռը։ Ամէն կողմից, հեռու թէ մօտ, լսւում էին դաւուլ-զուռնայի ձայներ,— զ՜ուռպ, իրար չխանգարող, իրար չխառնուող։ Ստուերների մէջ բացւում էին սպիտակ սփռոցներ, որոնց մի ծայրերը դուրս էին պրծնում պայծառ արեւի տակ և ուրախ ժպտում։ Սփռոցների վրայ ինչ էլ որ լինէր, ամենից առաջ լինում էր Գիւմրու աւանդական բախին։

Երեխաները գնում էին հոտոտելու վարդերը, պահմտոցիկ խաղալու թփերի տակ կամ վազել-բռնել խաղալու գմբէթաւոր, ութանկիւնի ցամաք-աղբիւրի շուրջը։

Երիտասարդները՝ ընկերներով, իսկ աղջիկները՝ ընկերուհիներով գնում կանգնում էին եասամանի ու վարդի թփերով, նարգիզի ու մեխակի ծաղիկներով, սուսամբարի տերեւներով շրջապատուած տնակի մօտ և սկսում էին երազել իրենց մօտապագայ տների մասին կամ գնում կանգնում էին քառակուսի, մեծ աւազանի պռունգների վրայ և նայում նրա ջրին։ Աւազանի պռունգները հաւասար

էին գետնին։ Նրա մի կողմից քարէ մի քանի աստիճաններ իջնում էին ուղղակի ջրի մէջ։ Աստիճանների գլխացի պատունգին, փոքրիկ պատի պէս շինուած էր մի լայն, բարձր աղբիւրագլուխ, որից դուրս էր գալիս մի շատ կարճ և շատ լայն խողովակ։ Այնտեղից ջուրն արծաթապայծառ կամարի պէս իջնում էր աւազան՝ իր թափուած տեղի շուրջը գոյացնելով նեղ, յետոյ լայն, յետոյ աւելի լայն, բայց հետզհետէ մարուող օղակներ։

Օրուայ այդ ժամին, ակամայից հարց էր առաջանում այդ զբօսավայրը դիտող իւրաքանչիւրի մէջ.— իսկ ո՞վ է, մնացել քաղաքում... Գուցէ իսկապէս տներում բացարձակապէս ոչ ոք չէր մնացել, իսկ փողոցներում համարեա ոչ ոք, չհաշուած անտանելի վշտից մենակութիւն փնտռող Վարոսին, որ թափառում էր միյարկանի փակ խանութների ամայի փողոցներով։ Նրան ոչինչ չէր զբաղեցնում, ոչինչ չէր հետաքրքրում։ Նրա սիրտն այրւում էր այնքան յանկարծակի ընդհատուած իր երջանկութեան ցաւագինօրէն մխացող յուշը։ Իր սիրտն էլ էր փակ այդ կարմիր, կապոյտ, կանաչ կամ դեղին փեղկաւոր խանութներից որեւէ մէկի պէս, իր սըրտից էլ էր կախուած նոյնքան մեծ, նոյնքան ծանր մի կողպէք։ Երբեմն միայն, այդ փեղկերն աննկատելիօրէն ցնցւում էին, կարծես ներսում մնացած մի կատու չանգռում էր այն՝ բաց անելու համար։ Միայն մի վայրկեան էր տեւում այդ. միայն մի վայրկեան էր խռովւում նրան այդ ուշ վրայ հասած միտքը և նորից ամէն ինչ փակ էր ու անմարդ...

Եւ իսկապէս. ի՞նչպէս կարող էր Վարոսը մի վայրկեանից աւելի մտածել այն մասին, թէ ինչն էր մեղաւոր՝ Հեղնարի մահուան մէջ։ Չէ՞ որ դա

անհաւատալի, անհեթեթ, անտանելի միտք էր։

Ճիշդ է, Վարոսն այն օրը չփոթուած յետ փախաւ Թուրքական Թաղամասից, բայց փախաւ միայն նրա համար, որպէս զի ուստա Մկրտիչն ու մոլլայի մեծ կինը չտեսնէին իրեն։ Նա ի՞նչ գիտենար, թէ Հեղնարն արդէն այնտեղ էր, իր ապագայ գերեզմանում, և կարիք էր զգում Վարոսի պաշտպանութեանը։ Զէ՞ որ փախչելով, Վարոսը գնաց կանգնեց բոստանների միջից անցնող ճանապարհի անմարդ մի ոլորում, որպէս զի նախազգուշացնէր ու յետ դարձնէր Թուրքական Թաղամաս գնացող Հեղնարին...

Նա երկար սպասեց այնտեղ, գուցէ անհաշւելի երկար, և երբ նրա ուղեղով անցաւ այն զարհուրելի միտքը, թէ գուցէ Հեղնարն արդէն այնտեղ էր, իրենց սիրոյ տանը, յանկարծ քաղաքի կողմից, Հեղնարի փոխարէն, տեսաւ տագնապահար կերպով դէպի Թաղամաս շտապող կառքերն ու մարդկանց։

Վարոսը համարեա ամէն ինչ հասկացաւ։ Խելագարի պէս ինքն էլ սկսեց վազել դէպի աղէտի վայրը, բայց յանկարծ կանգ առաւ։ Ո՞ւր է գնում... բաց անելու համար. որ ի՞նքն է Հեղնարի սիրեկանը։ Կամայ թէ ակամայ մատնուելո՞ւ համար։ Հարկաւոր չէ։ Թող ոչ ոք չիմանայ, որ Հեղնարը Վարոսին է սիրել. Թող բոլորն իմանան միայն այնքանը, որ Հեղնարը սիրել է ինչ որ մէկին։ Ինքը, Վարոսը, հօր փողերը վատնող, անգործ և աննպատակ սալախանայի անուն ունի,— ամենասեւ անունը Գիւմրիում։ Թող ուրեմն ոչ ոք չիմանայ, թէ անարատ Հեղնարը պայծառ ուստայի անկողինն արատաւորել է իր նման մի անառակի համար։ Թող

բոլորն այնպէս կարծեն, թէ Հեղնարը դաւաճանութեան այդ խայտառակ քայլն արել է այնպիսի մէկի համար, որը եղել է աւելի լաւ մարդ, աւելի լաւ գիւմրեցի, քան ուստա Մկրտիչը... Գուցէ այդպիսով մի քիչ աւելի նուազ լինի այն թուքը, որ պիտի շպրտի քաղաքն իր սիրած կնոջ շիրմի վրայ...

Եւ Վարոսը վերադարձել էր յետ, մի այլ կողմով քաղաքից դուրս պրծնելու և մինչեւ աղջամուղջ՝ խելագարի նման արձակ դաշտերով վազելու համար...

Բայց ինչո՞ւ համար նա այսօր է յիշում այդ ամէնը։ Ինչո՞ւ համար նա միայն այսօր է այնպէս մտածում, թէ իր ճանաչուելը բոլորովին էլ չէր վարկաբեկի հրաշալի Հեղնարին, որովհետեւ սէրն է գլխաւորը, և ում սիրում ու նախընտրում է կինը, նա բարձր է ու ազնիւ՝ չնայած սալախանայի իր անպատիւ անուանը։

Բայց իրօք որ փակ խանութում մնացած անզօր կատուի էր նման այդ միտքը, որ լոկ մի վայրկեան չանգռում էր փեղկերը և նորից անյոյս սպասում։ Թախիծի դառը ժպիտը դէմքին, Վարոսը գիտակցում էր, որ ոչ ոք իրաւունք չէր տայ սէրին, որ բոլորը, ինչպէս միշտ, միակ իրաւունքը կը տային ամուսնական հաւատարմութեանը և իրեն կը սպաննէին հենց տեղնուտեղը։

Սակայն նա չէր ուզում սպաննուել ո՛չ այն ժամանակ, ո՛չ հիմա։ Նա պէտք է կենդանի մնայ։ Պէտք է մնայ կենդանի, և այդ՝ ո՛չ միայն Հեղնարի դամբարանին կենդանի յուշարձանը դառնալու համար, այլև ապացուցելու համար իր հայրենակիցներին, իր երկրակիցներին, որ սէրը չի կարող մեղադրուել։

Նա կը գնայ Գիւմրուց, ուրիշ աշխարհներ կը տեսնի և ուրիշ մարդկանց, և երբ ժամանակներ յետոյ իր համաքաղաքացիների սրտերում իջած կը լինի ատելութեան կրակն իր հանդէպ, իսկ իր սըրտում դեռ նոյն ցաւով կը վառուի Հեղնարի սէրը, նա կը վերադառնայ և ձեռքը դնելով իր սիրած կնոջ քարէ յուշարձանի վրայ, կը գոռայ.— սուրբ է սէրը...

Նա կը գնայ հենց վաղը, կանուխ առաւօտեան։ Շաբաթ օրը Թուրքական Թաղամասի բոլոր բնակիչներն ատելութեամբ ու քլունգներով զինուած, հիմնայատակ էին արել Հաբիբայի տունը, իսկ այսօր արդէն ուստայի խոստացած քառասուներորդ օրն է։ Այսօր ուստան անշուշտ վերցրել է այն սև վարագոյրը, որ դեռ երէկ, չէնքը քանդելիս՝ փռուած է եղել գերեզմանի վրայ։ Հենց այս գիշեր Վարոսը կը գնայ տեսնելու Հեղնարի շիրիմը, իսկ վաղ լուսաբացին ճանապարհ կ'ընկնի՝ ինքն էլ չգիտենալով, թէ դէպի ո՞ւր...

Վերջապէս անմարդութիւնը հասաւ Վարոսի ուղեղին։ Ո՞ւր են գնացել իր համաքաղաքացիները փողոցներից ու հայաթներից, խանութներից ու տներից... Անշուշտ ամէն Կիրակուայ նման նորից զուարճանալու,— Ջիթողցոնց Ջաբոր՝ ընտանիքների զբօսավայրը, Ջերքէզի Ջոր՝ սիրահարների զբօսավայրը, Նուիրական Արփաչայի ափ՝ քէֆ անողների զբօսավայրը։ Նրանցից ո՛չ մէկը չի յիշում, որ այսօր լրանում է ուստայի խոստացած քառասուն օրը...

Մի դառը ժպիտ խաղաց Վարոսի դէմքին՝ մարդկային մոռացկոտութեան հասցէին, սակայն յանկարծ մի նոր միտք ընդհատեց այն։ Ո՛չ, այսպէս աւելի լաւ է, հենց այսպէս է հարկաւոր։ Կարիք

չկայ, որ իր սիրելի Գիւմրին քառասուն օր չարունակ յիշի մի տխուր պատահար, կանոնաւոր կեանքը վրդովող մի խորթ միջադէպ, և ապրի դրանով։ Ընդհակառակն, թող ամէն լի օր նա բաց անի իր արհեստանոցներն ու խանութները, ամէն կիրակի զուարճանայ իր զբօսավայրերում, ապրի իր սովորական կեանքով։ Ինչո՞վ է այդ կեանքը վատ. հիանալի է այդ կեանքը և դրան միայն մի բան է պակասում,— սիրոյ իրաւունքը։ Եթէ տարիներ յետոյ Վարոսն այդ իրաւունքն իր հետ բերի Գիւմրի, Գիւմրին կը դառնայ անթերի... Այն ժամանակ գուցէ ինքն էլ կիրակի օրերն իր հօր ու մօր կամ իր ընկերների հետ նստի կառք, գնայ Ջիթողցոնց Ջաբոր և նայլի հաւուզ-ախպուրի ջրին կամ հոտ քաշի վարդերից ու եասամաններից...

Վարոսը հոգու խորքից հառաչեց։ Իսկ այժմ հարկաւոր է հեռանալ։ Նա կը գնայ հենց վաղը, կանուխ առաւօտեան...

Դիմացի անկիւնից թեքուելով, անմարդ փողոցում երևաց մի մունետիկ։ Վարոսը տեսաւ նրան և վայրկենապէս կանգ առաւ։ Նա իր Օնէս հօրեղբայրն էր, համալ Օնէսը։ Ճիշդ է, նա լի օրերի նման չէր հագել բեռնակրի իր այն հագուստն ու համետը, որով այնքան նման են իրար Բաղդադի, Հալէպի և Դամասկոսի, Պոլսի, Էրզրումի և Իզմիրի, Թաւրիզի, Թեհրանի և Սպահանի բեռնակիրները։ Ճիշդ է, Գիւմրու բոլոր արհեստաւորների նման նա հագել էր կիրակնօրեայ կապոյտ պիջակ, շալվար ու շափխա, սակայն այժմ, երբ նա կանգնել էր փողոցների խաչկէտում, թւում էր, թէ բան ունի հաղորդելու և ահա պատրաստւում է բարձրացնել իր հուժկու ձայնը։

Սակայն համալ Օնէսը, փոխանակ բղաւելու, տարակուսանքով նայեց անմարդ շրջապատին և քայլեց։ Խուսափելով նրան հանդիպելուց՝ Վարոսն արագ թեքուեց մի այլ փողոց և շատ քայլերով հեռացաւ։

6

. .

Պայծառ խաղաղութիւնն արեւով և ուրախութեամբ փռուել է այգու վրայ։ Ո՛չ մարդիկ, ո՛չ նուագարանները և ոչ աղբիւրն ու ծառերը չեն արձակում ո՛չ մի բարձր հնչիւն, ո՛չ մի խանգարող ձայն։ Յաւիտենական խաղաղութեամբ նստուել է հաւուզ-ախպուրի արծաթէ կամարը խողովակից դէպի աւազան, մեղմագոյն բուրումով տարածուել են ուսամբարները, եասամաններն ու վարդերը, անլսելի խշշոցով աննկատելի օրօրւում են ծառերի կատարները։ Դաւուլ-զուռնաների հանդարտասահ նըւագի շուրջը հաւաքուած՝ լուռ ունկնդրում են մարդիկ նրանց անբարբառ պատմութիւնները։ Այստեղ ու այնտեղ, կանաչի վրայ, կարծես երազի մէջ, դանդաղ օրօրւում է գիւմրեցի հարսների կենտապարը։ Ծափերն անգամ կարծես ձայն չեն արձակում, և ամբողջ այգին նման է տեսիլի...

Եւ յանկարծ այդ խաղաղ տեսիլի վրայ տարածւում է հուժկու, սանակյան ձայնը.

— Ալա՜ն... Բուլա՜ն...

Կանգնել է համալ Օնէսն այգու պռունգին։ Կայծակի արագութեամբ բոլորի ուշադրութիւնը լարւում է դէպի նա. լռում է սազանդարների նուագը, ընդհատւում է ծառերի խշշոցը։

— Գնացէք... Թուրքերու թա՜ղը... տեսէք... Հեղնար-ախպուրի... հրա՜չքը...

Մարուող հնչիւնների հետ միասին՝ կարծես լուծւում է նաև Օնէսի կերպարանքը։ Դեռ մի վայրկեան քարացել մնացել է զուարճացող կիրակնօրեայ Գիւմրին, որից յետոյ, համարեա միանգամից, լսւում է հարիւրաւոր բերաններից թռած նոյն կանչը.

— Ֆայտո՛ն... ֆայտո՛ն... ֆայտո՛ն...

Փոշու խուլ ամպերում կորած, խելագարի պէս սլանում են արդէն մի քանի կառքեր, սակայն հարկաւոր են ոչ թէ մի քանի, այլ հարիւրաւոր։ Բայց նրանք բոլորը վերադարձել են քաղաք և միայն երեկոյեան դէմ պիտի գան այգի՝ գիւմրեցիներին տանելու համար։ Մի քանի տղամարդիկ թողնում են փռւած լի սփռոցը և ոտքով վազում։ Նրանց հետևւում են բազմաթիւ ուրիշները։ Իսկ նրանք, ովքեր եկել են ընտանիքներով, շտապով հաւաքում են իրենց իրերը, յանձնում են իրենց տղայի կամ դրկիցի պահպանութեանը և շտապում քաղաք՝ կառք ճարելու։ Սակայն ոչ ոք չի ուզում մնալ՝ պահպանելու համար գորգերն ու հեշտաեռները, բարձերն ու կրակարանները։ Մի քանի րոպէում՝ այգուց դէպի քաղաք իջնող լանջը և ապա միյարկանի, արեւոտ փողոցը լցւում են վազող, փոշու և քրտինքի մէջ կորած մարդկանց հեղեղով։ Եւ յանկարծ դէմից լսւում են բազմաթիւ սմբակների դոփիւններ, ապա երեւում են սանձակոտոր արշաւող կառքեր, կառքեր, կառքեր... Հասնում են կառքերը մարդկային հեղեղին, կայծակի արագութեամբ լցւում բերնէ բերան և իսկոյն շուռ գալով սրընթաց անհետանում փոշու և արեւի մէջ։ Զարմացած ոստիկանների շուար կերպարանքների մօտով փայլատակում անցնում են նրանք, կտրում անցնում են հիւսիսից-

հարաւ, ապա թեքուելով դէպի հարաւ-արեւելք, մտնում են բոստանների մէջտեղով անցնող ճանապարհը։ Բոստանների պատերը սեղմում են նրանց հեղեղը, հեղեղը կորցնում է իր լայնութիւնը, բայց դառնում է աւելի սրարշաւ։ Սպառնալով հազար կտոր անել կառքերն ու մարդկանց, փրփրաբերան ձիերը խրտնած վազքով բարձրանում են Թուրքական Թաղամասի լանջով, իրենց լծուած կառքերը տանելով իբրեւ թեթեւ տաշեղներ։ Օդի մէջ սուր շուոցով փշշում անցնում են մտրակները, ինչպէս հեռուից արձակուած գնդակներ։ Հասնելով Թաղամասի առաջին փողոցին, անհամբերութիւնից մթագնած ուղեղով ոմանք ցած են թռչում իրենց վազքը դանդաղեցնող կառքերից, այդ կառքերից աւելի արագ տեղ հասնելու անմիտ ցանկութեամբ։

Այնտեղ, ուր դեռ Ուրբաթ օրը Հաբիբայի տունըն էր կանգնած, այժմ փռուած էր մի հարթ եւ ընդարձակ հրապարակ։ Հրապարակի չորս կողմերից գալիս են չորս փողոցներ, որոնք բերում են անըսպասելի մօտիկութիւնից վարանած կառքերի արդէն դանդաղաքայլ ընթացքը։ Մարդիկ իջնում են վար եւ ակնածանքով ու կամացուկ մտնում հրապարակ։

Ոչինչ չկայ։ Դատարկ է հրապարակը։ Միայն նրա կենտրոնում, ուր առաջ Հաբիբայի աւազանն էր, այժմ վազում է մի աղբիւր։ Զիթողցոնց Զաքորի հաւուզի նման, դա եւս պռունգները գետնին հաւասար մի աւազան է, որի մի պռունգի վրայ կառուցուած պատանման աղբիւրագլխից հոսում է ջուրը։ Այնքան նման է դա հաւուզ-ախպուրին, որ կարծես նրա փոքրացրած, զգալիօրէն փոքրացրած ընդօրինակը լինի։

Յետեւից,— չորս փողոցներից,— շարունակ եւ

անընդհատ, աւելի և աւելի լցւում են վայրկեան առաջ անսպասելին տեսնելու ցանկութիւնից լռած ու սառած մարդիկ, կանայք, երիտասարդներ, ծերեր։ Տեղ գտնելու համար նրանք յամառ հրում են իրենց առջեւում կանգնածներին, իսկ առջեւում կանգնածները, անթարթ հայեացքներն աղբիւրին յառած, հասկանալով որ այնտեղ է հրաշքը, վախից ու վարանքից չեն վստահանում մօտենալ։ Սակայն չորս փողոցներով յորդում են նորերը, այժմ աւելի յամառ կերպով են հրում յետեւում կանգնածները, կարծես դէպի անխուսափելին, կարծես դէպի մահապատիժ... Եւ ակամայ քայլերով՝ առաջինները մօտենում են Հեղնար-աղբիւրին։

Հոսում է այնտեղ անապակ ջուրը։ Թափւում է ջուրը Հաբիբայի նախկին աւազանի մէջ, բայց հակառակ հաւուզ-ախպուրի, փոխանակ հաւաքուելու այնտեղ, իսկոյն գետնի տակ է ծծւում մի փոքրիկ անցքով։ Ո՞րն է այդտեղ հրաշքը... Աղբիւր՝ գերեզմանի վրայ, — դա նորութիւն չէ Գիւմրիում։ Եթէ լանջով բարձրանալիս մարդիկ չմտնեն Թուրքական Թաղամաս, այլ շարունակեն իրենց ճանապարհը դէպի դաշտ, դէպի հեռու գերեզմաննոց, շիրմաքարերի միջեւ նրանք կը նկատեն բազմաթիւ այնպիսիները, որոնց բարձր յուշարձանների գունաւոր քարերից դուրս են ցցուել աղբիւրի խողովակները։ Ճիշդ է, դրանցից ոչ մէկից ջուր չի գալիս, սակայն այդ հարկաւոր էլ չէ, որովհետեւ գերեզմաննոցում ո՞վ պիտի խմէ ջուրը...

Աղբիւրներ կան նաեւ քաղաքում՝ այս եկեղեցու հայաթի պատի վրայ, այն փողոցի տների շարքի միջեւ, որ կառուցուած են ի յիշատակ այս կամ այն մարդու՝ նրան սիրող կամ յարգող որեւէ մեր-

ձաւորի ծախսով։ Դրանցից արդէն հոսում է նոյն վճիտ ջուրը և քարի վրայից գրերը կոչ են անում խուրաքանչիւր խմողի՝ ողորմի տալ մեռածի հոգուն։

Յետեւից գալիս են անվերջ ու անվերջ, մարդկային օղակը Հեղնար-աղբիւրի շուրջը սեղմւում է աւելի ու աւելի։ Եւ յանկարծ առջեւից գնացող մէկը ցնցւում է և կանգ առնում. Նրա հետ միասին կանգ են առնում նաև միւս բոլորը։ Նա չափխան դէպի ծոծրակը թեքելով՝ արդէն կարդում է աղբիւրի ճակատին քանդակուած գրերը.

«Ամմէն մէ կնիկ իրան մարդու ախպուրն է. ուրիշ հէչ մէկն իրաւունք չունի խմելու էնոր ջրէն»։

Մարդիկ զարմացած նայում են իրար՝ լուռ ու մտախոհ։ Միթէ այդ հասարակ, բոլորին հասկանալի և բոլորին պարտադիր օրէնքի մէ՞ջ է Հեղնար-աղբիւրի հրաշքը...

Չբաւարարուած հետաքրքրութիւնից և չլուծուած գաղտնիքից մոլոր պտըտւում են փոշոտուած ու քրտնած մարդկանց հայեացքները։ Վերջապէս մէկը յոգնած մի հոգոց արձակելով հանում է չափխան, թաշկինակով սրբում է ճակատը և Հեղնար-աղբիւրի մի քանի քարէ աստիճաններով իջնում է աւազան՝ խողովակին մօտենալու և ջուր խմելու համար։ Բայց հազիւ ոտքը վերջին աստիճանից աւազանի յատակին դրած, նա գունատւում է մեռելի նման և բերանքսիվայր ընկնելով աղբիւրի առջեւ՝ բացագանչում է սարսափահար.

— Մեղա՛յ, մեղա՛յ քեզի, Տէ՛ր, ես սրբապըղծութիւն էնել չէի ուզէ... Չիտէի, Տէ՛ր, մենծ է քու հրաշքդ...

Զարհուրած՝ բոլորը նայում են խողովակին։ Հազիւ մարդը աւազան իջած՝ ջուրը կտրուել է։

Տեսնում են բոլորը, թէ ի՜նչպէս Աստուած ինքն է իր հրաշքով հաստատում պայծառ ուստայի քանդակած բառերը, որ «ամմէն մէ կնիկ իրան մարդու ախպուրն է. ուրիշ հէչ մէկն իրաւունք չունի խմելու էնոր ջրէն»...

Մարդը, դողացող ծնկներով, իր հազիւ չկատարած սրբապղծութիւնից սարսափած՝ դուրս է գալիս աւազանից։ Ջուրը, Հեղնար-աղբիւրի անարատ ջուրըն անմիջապէս նորից սկսում է հոսել...

Ոչ ոք չի համարձակւում կրկին ստուգել Աստուծոյ հրաշքը։ Սակայն ոչ ոք չի ուզում նաև հաւատալ իր աչքերին, որոնք բացուելուց ի վեր, երբեք չեն տեսել և ոչ մի հրաշք։ Եւ ահա վերջապէս մի ուրիշը վճռում է մտնել աւազան։ Երբ նորից կտրւում է ջուրը, այդ մարդու հետ միասին հրապարակում հաւաքուած բոլորը,— թէ՛ հայ, թէ՛ թուրք, թէ՛ յոյն,— ծունկ են չոքում և բոլորը միասին ծեծում են իրենց կուրծքը.

— Մեղա՜յ... մեղա՜յ... մեղա՜յ...

Մարդը, վախից թուլացած, իր ոտքերը հազիւ է դուրս քաշում հրաշք-աղբիւրից։ Գունատուած շրթունքների հատուկենտ շշուկներով լուրն անցնում է յետեւում կանգնածներին, որոնք դեռ անկարող են որևէ բան տեսնել։ Նրանք առաջ են խոյանում, առաջինները հլու տեղի են տալիս նրանց, որպէսզի բոլորը տեսնեն, թէ ի՜նչպէս Աստուած գալիս է հաստատելու ընտանիքի սրբութեան հին օրէնքը և անձամբ դատապարտելու մարդկանցից արդէն դատապարտուած այն անառակին, որը զանց է առել այդ օրէնքը։

Եւ նորից ու նորից, շարունակ աւելի մեծ տագնապով և աւելի մեծ ահ ու դողով, մարդիկ ստու-

գում են Աստծու հրաշքը և հեռանում են դէպի յետին չարքերն այն խոր զղջումով, որ յանդգնեցին ցանկութիւն ունենալ՝ սեփական աչքերով հրաշքը տեսնել... Եւ գնում են նրանք, որոշելով հենց հետեւեալ Կիրակի իրենց զոհը մատուցել Գիւմրու հռչակաւոր Սուրբ Աստուածածին եկեղեցուն և զոհի արիւնը նրա սրբատաշ պատերին քսելով՝ քաւել իրենց թերահաւատութեան մեղքը...

Սարսափից չռած աչքերով մի կին, աւազանում չոքած, հայեացքը դէպի ցամաք խողովակը դարձրած, անլսելի մրմնջում է.

— Ներէ, Տէ՛ր Աստած, ներէ ընձի, իմ մտքես էնպէս է անցէ, թէ Հեղնարի մեղքն էնքան էլ մեծ չէ...

Նայում են հաւաքուածները նրան ու թէև չեն լսում նրա խօսքերը, բայց տեսնում են նրա զղջումը։ Եւ երբ նա դուրս է գալիս, նրա փոխարէն աղերսի է իջնում մի տղամարդ, որը նոյնպէս իր հոգու խորքում շատ չի մեղադրել Հեղնարի սիրեկանին... Ու բոլոր նրանք, ովքեր աւազան են իջնում մեղքի բեռն ուսերին, դուրս են գալիս այնտեղից մաքրուած և աղբիւրի ճակատի խօսքերն իրենց հոգու ամենախոր խորքում անջնջելի կերպով յաւիտենապէս դրոշմած...

Աղբիւրին են մօտենում Հեղնարի եղբայրը, ընկերուհին, ազգականները։ Սակայն վայրկենապէս ցամաքող խողովակի վերեւից օրէնքն ասում է նրանց, որ ամուսնացած կնոջ միակ տէրն այլեւս նրա ամուսինն է և նրա վրայ իրաւունք չունի անգամ հարազատ եղբայրը։

Եւ աղբիւրի ճակատի կարմիր քարի վրայ անջնջելիօրէն քանդակուած օրէնքի այդ նոր հաստա-

տումը տեսնելով, բոլոր հաւաքուածները նորից ծունկի են գալիս հրաշքի առաջ...

7

Արեւն իջաւ։ Այժմ նրա վերջալուսային ճառագայթները հաւաքուածների վրայ ընկան աւելի հեռուից և աւելի չեղակի։ Չնայած՝ անցել էր բաւական ժամանակ, բայց դեռ ոչ ոք Թաղամասից չէր հեռացել։ Ընդհակառակն, աւելացել էին ուրիշ շատերը, որ եկել էին նուիրական Արփաչայի ափից, գեղեցկատեսիլ Չերքէզի Ձորից, կամ քամուել էին քաղաքից։ Փողոցներն ու նորաբաց հրապարակը, որ դեռ քիչ առաջ մի կերպ տեղաւորել էին հաւաքուածների բազմութիւնը, այլեւս անկարող էին ընդգրկել բոլոր նրանց։ Այժմ ամբողջ Թուրքական Թաղամասը վերածուել էր հրաշալի ապացոյցի հանդէպ համրացած մարդկային ծովի։ Նրանց վխտացող բազմութեան կենտրոնում, վճիտ ու խաղաղ՝ հոսում էր փոքրիկ, ոչնչով աչքի չընկնող աղբիւրի ջուրը։ Սակայն մի իսկական հրաշք: տեսանելի և շօշափելի, մարդկային ձեռքի այդ սովորական կառուցուածքը դարձրել էր մեծ և սուրբ։ Համատարած լռութիւնը լաւագոյն կերպով ապացուցում էր այն խոր ակնածանքն ու վախը, որ զգում էին հաւաքուած բոլոր մարդիկ։

Յանկարծ, ինչպէս որոտ՝ այդ լռութեան մէջ. Թաղամասի դեռ հեռու ծայրից լսուեց մարդկային ինչ որ խելագար ձայն, որ մօտենում էր զարմանալի արագութեամբ։ Կարծես մէկը փախչում էր սպանողների ձեռքից կամ ինքն էր արշաւում սպանելու։ Այդ անհասկանալի եկուորի հանդէպ մարդկային ծո-

վը ճեղքում էր կարծես թրով, և նա անարգել վազում էր դէպի այդտեղ, դէպի Հեղնար-աղբիւրը։ Մոլեգնած և իրեն կորցրած՝ թւում էր, թէ նա հայհոյում էր ամենամեղաւոր բառերով, սակայն որեւէ բան հասկանալ նրա անկապ բառերից, անկարելի էր։

Դեռ նախ քան նրա յայտնուելը, անհասկանալի կերպով, գուցէ զարմանալի բնազդով, բոլորն զգացին, որ այդ նա է, Հեղնարի սիրեկանը։ Եւ դեռ հազիւ նա հրապարակ մտած, մարդիկ նրա առջեւ բաց արեցին մի նեղ և երկար ճանապարհ՝ մինչեւ Հեղնար-աղբիւրը։

— Ո՞ւր է, — աղաղակեց նա ոչինչ չտեսնող աչքերը յածելով չորս կողմ, — ո՞ւր է, ցուց տուէք. ես ձեր բոլորի, ես ձեր ծնողների, ես ձեր զաւակների, ես ձեր... Վո՞վ կ'ըսէ, թէ ամմէն կնիկ իրան մարդու ախպուրն է։ Սէրն է տէրը, ո՞նչ թէ մարդը։ Ցուց տուէք ախպուրը... ես պիտի խմեմ էնոր ջըրէն՝ մինչեւի կշտանամ... Իմս է սէրն էլ, ջուրն էլ... Սէրն Աստանից է, սէ՛րն է իրաւունքը...

Առանց շուրջը նայելու, նա արագ առաջ գնաց դէպի աղբիւրը՝ գզգզուած, փոշոտած, քրտնած, ծանըր հեւոցով։ Թւում էր, թէ ահա նա կը յարձակուի որեւէ մէկի վրայ և կը խեղդի։ Բոլորը սարսափած նետուեցին աջ ու ձախ, և նրա առջեւի արահետը վերածուեց պողոտայի։ Նա հասաւ աղբիւրի պռունգին, կանգնեց, նայեց մի վայրկեան, ապա վստահ քայլերով իջաւ աւազան։

Ինչպէս բոլորի հանդէպ՝ ջուրն անմիջապէս կըտրուեց...

— Հեղնա՛ր, — բացագանչեց Վարոսը։

Հրապարակով սարսուռ անցաւ։

— Ե՛ս եմ, աղիզ, — պոռթկաց ծանր ճիչը Վա-

րոսի չանթահար եղած կրծքից։ — Չե՞ս ճանչէ ընձի...

Ցամաքած աղբիւրի խողովակից ընկաւ վերջին կաթիլը։ Վարոսը տարտամ կերպով ճակատը շոյեց և անիմաստ հայեացքով նայեց չուրջը։ Կարծես նոր միայն ըմբռնեց այն, որ կատարուեց անհաւանականը, որ Աստուած ինքն իր բացորոշ հրաշքով մերժեց սիրոյ իրաւունքը և հաստատեց ընտանիքի սըրբութիւնը...

— Նա՛, — շշնջաց նա ահից ցնցուելով։ — Ջուրը ցամքաւ...

Անհաշիւ դէմքեր, առանց որևէ արտայայտութեան, նայում էին նրան։ Վարոսն իր շուար հայեացքով կարծես օգնութիւն էր հայցում նրանցից, ստանալով միայն անտարբերութիւն։ Նրան ապշեցընում էր այն, որ ոչ ոք ոչինչ չէր ձեռնարկում, ոչ ոք գետնից քար չէր բարձրացնում՝ շանսատակ անելու իրեն։ Անշուշտ այդ աւելի լաւ կը լինէր, քան այս բութ անշարժութիւնը։

Վարոսը նորից նայեց աղբիւրին, անհաստատ քայլերով մօտեցաւ, ձեռքը դրեց փայլուն խողովակի վրայ և սկսեց աննպատակ շոյել։ Ապա յանկարծ, թէ՛ բոլորի և թէ իր համար անսպասելի կերպով, ընկաւ ծունկն ի վար և գոռաց.

— Մեղա՛յ քեզի, Տէ՜ր... մեղա՛յ քեզի, Հեղնա՛ր...

Կարծես մի մեծ մտրակ շւոցով խփեց հաւաքուածներին, անցաւ։

— Մեղա՛յ քեզի, Տէ՜ր, — կրկնեց Վարոսը և ձեռքը տանելով դէպի օձիքը՝ պատռեց, վար քաշեց վերնաշապիկն ու ներքնաշապիկը։ Մեղա՛յ քեզի քու սխալուած հողածնիցդ։ Ես էնպէս գիտէի. թէ

դուն սիրուն իրաւունք կու տաս. մեղա՜յ քեզի, Աստուա՛ծ...

Նա չոքէչոք մօտեցաւ աւազանի պռունգին, նրա ճակատը համարեա հպուեց աղբիւրագլխի քարին և նա շարունակեց.

— Մեղա՜յ քեզի, Հեղնա՛ր, ես պատճառ եղայ, որ դուն հոգւով-մարմնով կորիս... Մեղա՜յ քեզի, ազի՛զ, որ մարմինդ էս պղտի ջրի տակն է, հոգիդ՝ էն մենծ կրակի վրայ...

Եւ ոտքի կանգնելով՝ կուրծքը բաց, առանց գլխարկի, նա յետ նետուեց ցամաք խողովակից.

— Թողութի՛ւն քեզի, Հեղնա՛ր, որ իմ դժոխային սէրս ընդունեցիր. Թողութի՛ւն քեզի, ազիզ, որ մէջ գիշերըմ եկար ու մարդասպանութեան գործն ընձի սորվեցուցիր...

Ապա երկիւղածօրէն համբուրելով ցամաք ջրի փայլուն մետաղը, նա կերկերաց.

— Ես բոպիկ ոտներով Երուսաղէմ կ'երթամ, Հեղնա՛ր, Քրիստոսի գերեզմընէն թողութիւն կը խնդրեմ իմ ու քու էրած չէնելիքի հըմար...

Ապա արագ-արագ ոտներից հանելով կօշիկներն ու գուլպաները, նա յետ դարձաւ, որպէս զի դուրս գայ և անմիջապէս իր ճանապարհն ուղղի դէպի սրբազան քաղաքի աներեւակայելի հեռուն... Բայց Երանոսի միջնեկ եղբայր Գեղամը, արիւնով և ապա օղով թաթախուած դանակը ձեռքին, կտրեց նրա առաջը.

— Կեցի... քու Երուսաղէմդ էնքան էլ հեռու չէ...

Վարոսը կանգ առաւ և առանց դիմադրելու, բայց և առանց հպարտութեան՝ իր մերկ կուրծքը դէմ արաւ վրիժառուին։ Ուժգին թափով վար իջե-

ցընելու համար՝ Գեղամը դանակը վեր բարձրացրեց։ Բայց նույն րոպէին հայրական մի ձեռք յետեւից բռնեց նրա թեւը։

— Մի՛ էնէ, օղո՛ւլ, — իր խաղաղ ձայնով խրատեց ուստան. — Թող երթայ։ Սասու քաղաքն երթըցողի ճամբան չեն բռնէ...

Եւ ապա ճանաչելով երիտասարդի ձեռքում բըռնած դանակը, նա տխուր ժպտաց և կարծես ախտանքով գլուխն օրօրեց.

— Բեզի չե՞մ ըսէ, օղո՛ւլ, որ էդ դանակն իրան ամմէն չարութիւնը դարտըկել է. էդոր մէջ մեննակ բարին է մնացէ։ Էդ դանկով մարդ չի սըպանուի...

Ապա դառնալով դէպի Վարոսը, անխօս, առանց հնչիւն արձակելու, ձեռքով արեց. — գնա...

Եւ Վարոսը գնաց։

Երբ նրա կորաքամակ կարծես ծերացած, գըլխաբաց ու բոպիկ, կիսամերկ ու փոշոտ կերպարանքըն անհետացաւ, ուստան խաչակնքեց, դանդաղ քայլերով իջաւ աւազան, մօտեցաւ խողովակին և բոլորի աչքի առաջ խմեց հրաշք-աղբիւրի ջուրը... Խմեց, հանեց չափխան, յետ տարաւ չուխայի փէշը, վերցրեց գօտուց կախուած և իր ներքեւի ծայրով համարեա գետնին քսուող բաղդադի թաշկինակը, իր պայծառ ճակատի վրայից սրբեց քրտինքի մարգարիտները և մի անգամ ես նայելով հօսող անապակ ջրին, նոյն դանդաղ քայլելով դուրս եկաւ ու գընաց...

Բոլորը նայեցին նրա յետեւից և տեսան, թէ ի՛նչպէս խաղաղ ու վեհ՝ հեռանում էր բարձրահասակ, նեղիրան, աղբիւրների հաչակաւոր վարպետը...

Եւ երբ նրա գնալուց յետոյ բոլորը միանգամից նորից չուռ եկան դէպի աղբիւրը, հրաշքը վերացել

էր ի սպառ և ջուրը ցամաքել էր ընդմիշտ...

8

Եկաւ քրէական ու բժշկական քննութիւնը և տեսնելով բոլորովին անջուր մի աղբիւր, պատահած դէպքն արձանագրեց իբրև անհասկանալի պատճառներից դրդուած թիւրատեսութիւն.

9

Եւ մնաց մի սովորոյթ, փողոցներում թէ տներում, քէֆի թէ աշխատանքի ժամանակ, աղբիւրների հռչակաւոր վարպետին բարեւելուց յետոյ, գիւմրեցիները մի պահ նայում էին նրա յետեւից և մրմնջում.

— Պայծառ մնաս, ուստա՛ Մկրտիչ...

ՎԵՐՋԱԲԱՆ

1

Այն լանջի վրայ, ուր առաջ քաղաքի Թուրքական թաղամասն էր ընկած, այժմ ոչինչ չկար, թէև ներքեւում առաջուայ նման փռուած էին բոստանները, ապա լայն ու հեռու տարածուած էր քաղաքը, թէև վերեւում առաջուայ նման ձգուած էր ընդարձակ դաշտը, իսկ նրա պռունգին՝ կապոյտով մշուշուած Ալագեազը, թէև հենց լանջի մօտից նորից սկսւում էր յունական թաղամասը, թէև ամէն ինչ թւում էր կարծես յաւիտենապէս իր տեղում հաստատուած, բայց Թուրքական թաղամասն այլեւս գոյութիւն չունէր։ Արձակ բլրալանջի վրայ, որի մեծ մասը գրաւել էր մի ընդարձակ հարթ հրապարակ, բուսել էին խոտեր ու ծաղիկներ։ Պայծառ ցերեկով այնտեղ գնացողի աչքին նախ և առաջ խըփւում էր այն սպիտակութիւնը, որն ստեղծուել էր որոշ ծաղիկների սպիտակ թերթերից։ Ծուփ կանգնել էին օշօշներն իրենց տեղին, ուռուցիկ գլխիկներով և սպիտակ, հորիզոնական թերթիկներով։ Թւում էր, թէ այդ համատարած սպիտակութիւնը մի տխուր յիշատակ է, փռուած՝ անդարձ հեռացածների անդառնալիօրէն ջնջուած բնակատեղի վրայ։

Սակայն յետոյ, երբ անցորդը կամ այցելուն վարժւում էր առաջին տպաւորութեանը, սկսում

էին նկատուել նաև մանրամասնութիւնները. Հրապարակի շուրջը, ուր հողն աւելի քարքարոտ էր, օձօձները տեղի էին տուել դեղին անթառամներին։ Նրանց բազմաթիւ մանր ծաղիկներից կազմուած տափակ գլխիկները խիտ բռնել էին տարածութիւնը, սակայն նայելիս դժուար էր լինում որոշել՝ մեռա՞ծ էին այդ անթառամները թէ կենդանի, որովհետև նրանք միշտ դեղին էին, նրանց կոթերը միշտ գունաթափ կանաչ, համարեա գորշ, և նրանցից միշտ բուրում էր փշրուած ժայռի հոտ։ Անթառամների հետ միատեղ բուսել էր նաև անանուխը, որն իր գորշ երանգով և տերևների ձևով այնքան էր նմանում անթառամի թփիկին, որ կարծես նոյնը լինէր՝ առանց ծաղիկի։ Բայց նրանից բուրում էր մի ուրիշ հոտ, որ միևնոյն ժամանակ համ էր յիշեցնում։

Աչքադիր նայելիս ոչ միայն հրապարակի շուրջը, այլև բուն հրապարակում, կարելի էր տեսնել բոյսեր, որոնք առաջ չէին նկատւում։ Օձօձների սպիտակ ծածկոցի տակ, գետնին ընդհուպ՝ ծուփ փռուել էր ճնճղպաշարը, որն այդպէս էր անուանւում ուտելի լինելու պատճառով։ Դա մի փոքրիկ կանաչ էր՝ հողից անմիջապէս դուրս եկած մի քանի թարմ կանաչ, ձուաձև տերևներով։ Ճնճղպաշարի հետ միասին բուսել էր նաև գառան խնձորը, որի գընդաձև գլխիկներն ամէն կողմից շրջապատուած էին գունատ-վարդագոյն կամ գունատ-կապոյտ մանրիկ ծաղիկներով։ Արևն իր հանդարտ պայծառութեամբ տարածուել էր բլրալանջի ու նրա հրապարակի վրայ։ Եւ եթէ նոյնիսկ արևի համատարած լոյսի տակ անկարելի էր նկատել հին բնակատեղի որևէ հետքը, ապա այդ բանը պարտական էր մի բոյսի, որ կոչւում էր սատանի չափալաղ, — սատանայի ապտակ։

Բոյսը բաղկացած էր մի կամ երկու հսկայական տերեւից, որը փռուած էր լինում հողի վրայ։ Թւում էր, թէ քամին մի վիթխարի ծառից պոկել էր նրա դեռ առողջ ու կանաչ տերեւները և թափել գետին։ Երբ անցորդը կամ այցելուն կռանում և յետ տանէր սատանայի ապտակի լայն ու մեծ տերեւները, նրա տակ կը նկատէր հին թաղամասի որեւէ հանգչող հետքը, կամ ինչ որ պատի լիովին չքանդուած հիմք, կամ որեւէ մայթից դեռ մնացած սալաքար, կամ պարզապէս փշրուած ափսէի մի բեկոր։

Սատանայի ապտակների շուրջը, անխուսափելիօրէն, բուսնում էին եզան լեզու կոչուող տերեւները, որոնք կարծես այդ մեծ տերեւների մանրացուած տեսակը լինէին, սակայն ողորկ երեսով ու ջղուտ։ Ասում էր, թէ եզան լեզուն բուժիչ յատկութիւն ունէր, երբ այն կապում էին վէրքի վրայ։ Բայց թաղամասի աւերուելուց ի վեր՝ նրանք չէին լքել սատանայի ապտակների տակ թաքնուած և ոչ մի հետք...

Հողի տակից տեղ-տեղ դուրս ցցուած ժայռերի հարաւային կողմերում, ուր միշտ արեւ էր, բուսել էին ուրիշ բոյսեր, իսկ հիւսիսային կողմերում, ուր միշտ ստուեր էր, բուսել էին ուրիշ բոյսեր։ Արեւի տակ կանգնել էր բարձր աւելուկը, կարմիր ցօղունով, որ եղէգնի էր նման, և կանաչ տերեւներով, որ բանի կպցուածի էին նման։ Ցօղունի ծայրին արդէն հասել էին ժանգի գոյն ունեցող սերմերը։ Աւելուկների հետ կանգնել էին սուր փշերով ծածկուած տատասկները և աղըշբանք կոչուող բոյսը, որն ունէր շան ականջների նման կախ, դեղնաւուն-սպիտակ ծաղիկներ, խոր բաժակներով ու լայն ծաղկաթերթերով, և թունաւոր էր համար-

ւում։ Իսկ ստուերի մէջ, գետնին ընդ հուպ, բուսել էր օձի ծաղիկն իր զարմանալի թարմ-դեղին գլխիկով։ Օձի նմանւում էր նրա կոթը, որ ողորկ էր, ձիգ ու սնամէջ, և երբ կտրւում էր, դուրս էր տալիս մի սպիտակ կաթիլ, երևի օձի կաթը։ Սակայն ստուերի ու խոնաւութեան իսկական բոյսը ջրակոտեմն էր, որ բուսնում էր թաց տեղերում և ուտելի էր համարւում։ Նա ունէր խորը կտրատուած տերևներ և հասունանալիս՝ շատ մանր, սպիտակ ծաղիկներ։ Ստուերի և խոնաւութեան իսկական բոյս էր նաև բուսականին բարձր այն թուփը, որն ունէր օտար անուններ, սակայն թէ՛ օտար լեզուներով և թէ հայերէն՝ յիմար բոյս էր նշանակում։ Նա ուտելի էր, սակայն ասւում էր, որ յիմարներն են ուտում այդ բոյսը, կամ ուտողները յիմարանում են։ Նա մուգ, թարմ-կանաչ գոյն ունէր, միշտ սառն էր և ջրով յագեցած։ Բուսական էր այն պոկել արմատից, որպէս զի ինքնավստահ ցցուած կոթերն իսկոյն թալկանային և վերածուէին կանաչ փալասի։

Բլրալանջի այն տեղերում, ուր այդ բոյսերից և ոչ մէկը չկար, գետինը ծածկուած էր չափազանց մանր կանաչով, կարծես մամուռով կամ կարծես ներկուած լինէր։ Այնտեղ հատ ու կենտ բուսնում էր միայն սապնածաղիկն իր շիւղային բարակ կոթով, մազային բարակ ճիւղաւորումներով և չափազանց մանր, սպիտակ ծաղիկներով, որոնք գընդաձև շաղ էին եկել նրա վրայ։ Բոյսը հեռուից մշուշի, ամպադնդի կամ սապնափրփուրի տպաւորութիւն էր թողնում։ Երբ մարդիկ լուացւում էին նրա ծաղիկներով՝ ծաղիկները փրփուր էին տալիս։

Սակայն որքան էլ բազմազան լինէին խոտերն

ու ծաղիկները բլրալանջի և նրա տափակ հրապարակի վրայ, այնուամենայնիւ այնտեղ տիրապետողն օչօշների համատարած սպիտակութիւնն էր՝ փռուած յուռ ու խաղաղ։ Հրապարակի վրայ, ամէն կողմից ծփում էր նրա սպիտակութիւնը, որը գնում էր չորս կողմից, հասնում հրապարակի կենտրոնը և այնտեղ ազատ թողնում մի քառակուսի փոքրիկ տարածութիւն։ Քառակուսու չուրջն արդէն բուսել էին ուրիշ ծաղիկներ, իսկ մէջտեղում կանգնած էր ցամաքած Հեղնար-աղբիւրը...

* * *

Երբ Գալուստը բարձրացաւ բլրալանջ՝ ցրուեցին նրա կասկածները, թէ նա գուցէ չկարողանայ գտնել իր մօր անուան աղբիւրը։ Շրջապատի ամայութեան մէջ աղբիւրի պատաձեւ փոքրիկ գլխաքարը միակ կառուցուածքն էր և այն աչքի էր ընկնում դեռ հեռուից։ Յաճախ բլրալանջով դէպի քաղաք իջնող սայլերից՝ գեղացիք նկատում էին աղբիւրը և վազում ջուր խմելու։ Սակայն տեսնելով այն ցամաքած, նրանք նայում էին հիասթափութեամբ, իսկ եթէ կարդալ գիտէին և ընթերցում էին գլխագիրը, ապա նաև տարակուսանքով և յետ դառնալով վազում էին արդէն բոստանների մէջտեղի ճանապարհն իջած իրենց սայլերի յետեւից։

Գալուստն ուրախացաւ աղբիւրը հեշտութեամբ գտնելուն համար, բայց և իսկոյն վարանեց, կանգ առաւ։ Գուցէ աւելի լաւ կը լինէր այն գտնել մի քիչ աւելի ուշ, երբ նա կարողանար տիրապետել իր վրդովուած հոգուն։ Չէ՞ որ այնտեղ կանգնած էր իր յիշողութեան պատկերներից վաղուց ի վեր ջնջուած մօր մեղաւոր գերեզմանը...

Գալուստն առաջացաւ դանդաղաքայլ։ Անցաւ օշօշների միջով՝ աչքերը միշտ դէպի այնտեղ,— աղբիւրը։ Երբ հասաւ օշօշներից բաց քառակուսուն, նորից կանգ առաւ և նայեց։

Աղբիւրի մի կողմում բուսել էին կարմիր լալաները։ Պայծառ, տաք՝ վառւում էր նրանցից իւրաքանչիւրի փոքրիկ բաժակն արևի տակ, իբրև բացուած վէրք, անբուժելի, մխացող։ Իսկ ամբողջ բոյլը միասին՝ կարծես արիւն լինէր, վաղուց թափուած, բայց դեռ թարմ։

Աղբիւրի միւս կողմում՝ նոյնպէս մի մեծ բոյլով կանգնել էին ոսկեծաղիկները։ Նրանց զարմանալի պայծառ, փոքրիկ բաժակներն անսահման նման էին լալաներին. կարծես նրանք լալաները լինէին, որ ոսկեծաղիկ էին դարձել, կամ արիւնը լինէր, որ փոխարկուել էր արևի։

Աւազանի շրթներին իրենց երկար բաղեղներն իրար էին հիւսել ու ցանցել չատըր-ծաղիկները, որոնց բաժակներն իրօք վրանաձև էին և անմեղութեան պէս սպիտակ ու գունատ-վարդագոյն։ Բաղեղները չորս կողմից կախուել էին աւազանի պատերն ի վար, քառակուսի աւազանի մէջ, ուր մանրիկ քարեր կային թափուած և որի անկիւններում կար ցամաքած աղբիւրների անխուսափելի վկան,— չոր, գունաթափ հողափոշին։

Քարէ սանդուխքի մի քանի աստիճանները, որոնք իջնում էին աւազան, անվթար էին մնացել, սակայն նրանց ճեղքերից դուրս էին տուել խոտեր ու կանաչներ, կարծես աշխատելով իրարից հեռացնել վարպետի ձեռքով շարուած քարերը։

*
* *

Գալուստն իջաւ աւազան և մի բոպէ տարակուսած կանգնեց՝ չգիտենալով ինչից սկսել։ Ապա մօտեցաւ աղբիւրագլխին, բանեց փայլուն, կարճ խողովակը, ստուգեց․ չի՞ պտըտւում արդեօք այն, չունի՞ արդեօք որևէ գաղտնիք։

Խողովակը չէր պտըտւում։ Գլխաքարը նոյնպէս անշարժ էր։

Գալուստը կռացաւ դէպի յատակը։

— Էդ ի՞նչ կ'էնես, օղո՛ւլ...

Անսպասելիօրէն միջամտող ձայնից Գալուստը փշաքաղուեց և նայեց վերև։

Աւազանի պռունգին կանգնած էր հաջի Վարոսը։

— Էդ ի՞նչ կ'էնես, Գալո՛ւստ ջան։

— Եկել եմ մօրս գերեզմընին տեսութեան,— ասաց Գալուստը Գիւմրու հին բարբառով և յանցանքի մէջ բռնուածի դժգոհութեամբ՝ նստեց աւազանի պռունգին։

Հաջին նոյնպէս նստեց։ Գալուստը նայեց նրան։ Նա գիտէր հաջու և իր մօր պատմութիւնը։ Ուստի և, ձեռքը դնելով վշտից յաւիտենապէս կքած նրա թիկունքին, հարցրեց․

— Ըպը դո՞ւն ինչ կ'էնես էստեղ։

— Ի՞ս։ Ես ամմէն օր կու գամ, կ'աշեմ, աղօթք կ'էնեմ, ետ կ'երթամ... Քառասընհինգ տարեկան մարդ եմ, քսանհինգս մեղքի մէջ անցաւ, հինգս՝ Երուսաղէմ երթալ-գալու ճամբին, մնացած տասնըհինգ տարին ես աղօթքով եմ անցուցէ մեղաւոր Հեղնարի հոգու հըմար։ Ասպած ձէնս կ'իմանա՞յ թէ չէ, չիտեմ։ Ախր ես ուելլի մեղաւոր եմ...

Գալուստը ցաւակցութեամբ նայեց հաջի Վարոսին։ Նայեց նրա մազերին, որ, չնայած դեռ ոչ ծեր հասակին, բոլորովին սպիտակ էին։ Նայեց աչքերին, ուր չկար ո՛չ եռանդ, ո՛չ փայլ։

— Հաջի՛, մէրս մի՞տքդ է,— հարցրեց նա։

— Ինչպ որ աչքիս առաջը կայնած եղնի,— շշնջաց հաջին խուլ ձայնով։

— Ի՞նչ տեսակ կնիկ էր մէրս, հաջի՛։

Հաջին ձայն չհանեց։ Նա մտածկոտ կախեց գլուխը և նայեց ցամաք խողովակին։ Իսկ յետոյ, երբ խօսեց, նրա խօսքերը Գալուստի պատասխանը չէին, այլ իր սեփական մտքերի.

— Սուրբ կնիկ էր, օղուլ... Սէրը մեղք կը հաշուէր, սիրուց կը տանջուէր, վերջը սիրու մեղքէն ու տանջանքէն էլ մեռաւ... Հեղնարն ի՞նչ,— մեր ժամանակն էր սուրբ ժամանակ։ Վո՞վ կրնար մեղանչէ... Աչէ՛...

Եւ մատնացոյց անելով աղբիւրի գլխագիրը՝ հաջին, ով գիտէ քանիերորդ անգամ իր կեանքում, կարդաց։

— Հըմը հիմի, օղո՛ւլ, սէր ու մեղք իրար են խառնուէ։ Ոնչ ընտանիքի պատիւ է մնացէ, ոնչ տղամարդու իրաւունք։ Էդ էնորէն է, որ հրաշք չկայ, որ Աստած մարդոց գործին է՛լ չի խառնուի։

Ապա, մի քիչ լռելուց յետոյ, աւելացրեց.

— Մարդը թերահաւատ է դարձէ։ Ում կը պատմեմ Հեղնար-աղբիւրի մասին՝ չի հաւատայ։ Կը խնդայ։ Կը խնդայ ու կը մեղանչէ։ Մեծանաց խօսք է,— մէ աչքը հազար ականջ արժէ։ Ըսել է՝ ինչքան կ'ուզես ականջը լից, չի եղնի. աչքը պիտի լցուի, աչքը պիտի տեսնէ, աչքը պիտի սուգէ...

— Բայց որ գան Հեղնար-աղբիւրը քանդե՞ն, հաջի՛,— յանկարծ հարցրեց Գալուստը։— Մարդու հետաքրքրուելն ամմէն բանէ վեր է։ Վո՞վ գիտէ...

Հաջին գունատուեց, դողացող ձեռքը դրեց ուստայի որդու ծնկանը և շշնջաց.

— Ես ինքս էդ բանին շատ կը վախենամ։ Ըշտը ամմէն օր էստեղ գալուս նպատակն էն է, որ տեսնեմ՝ խօ չե՞ն քանդէ։ Կը սըպանեմ քանդողին, Ասպա՛ծ վկայ. կը մորթեմ տեղն ու տեղը։ Բանի ես սաղ եմ, Հեղնարի գերեզմանն անխախտ պիտի մնայ…

Գալուստն արագ նայեց նրան։ Հաջու մեռած աչքերն ստացել էին կենդանութիւն, փայլում էին կատաղի փայլով։ Սակայն այդ տեւեց միայն մի վայրկեան, աչքերը նորից պղտորուեցին, ջրակալուեցին, անշնչացան։ Նա վեր կացաւ։

— Կ'երթա՞ս, հաջի՛, — հարցրեց Գալուստը։

— Ըպը դուն չե՞ս գայ, — զարմացաւ հաջին։

— Չէ՛, հաջի։ Ես կ'ուզեմ մէ քիչըմ ժամանակ մենակ մնամ իմ ազիզ մօրս գերեզմընին քովը։

Հաջին երկիւղածութեամբ տեղի տուեց Գալուստի որդիական զգացմունքներին և զանգաղաքայլ ու կորաքամակ՝ հեռացաւ բլրալանջով։ Գալուստը մի քիչ ուղեկցեց նրան։ Երբ վերջապէս նա անհետացաւ լանջի վայրէջքում, Գալուստը վերադարձաւ, նորից իջաւ աւազան, թեւերը վեր քաշեց և սկսեց աշխատել։ Գործիքներ բերած չլինելու պատճառով, նա ամէն ինչ ձեռքով էր կատարում։ Այդ դժուար էր և ժամանակ էր խլում, բայց վերջապէս նա մէկմէկ հանեց ծանր սալաքարերը, շարեց աւազանի պռունգին։ Նա շարժւում էր մեծ զգուշութեամբ, նախապէս ստուգելով ոտքերը դնելու տեղերը, որպէս զի ոչինչ չփախցնի բացուող գաղտնիքից։

Երբ աւազանի ամբողջ յատակը սալաքարերից մաքրուեցաւ, Գալուստն սկսեց մեծ ուշադրութեամբ զննել այն։ Աւազանի ամբողջ յատակը ծածկուած էր արդէն ժանգոտուած երկաթի մի պարզ կառուցուածքով։ Իւրաքանչիւր սալաքարի տակ կար մի

ղեկ, որի ծայրը գնում էր աղբիւրի գլխաքարի տակ և միանում միւս ղեկերի ծայրերի հետ։ Բաւական էր ոտք դնել սալաքարերից որևէ մէկի վրայ, որպէս զի ղեկը սեղմուէր և իր ծայրով փակէր աղբիւրի խողովակը։

Այդ էր հրաշքը։

Այժմ Գալուստը փորձեց պարզել, թէ ի՞նչպէս էր յաջողացրել ուստա Մկրտիչը՝ քանի տարի առաջ իջնել աւազան ու ջուր խմել։ Եւ երկար փնտռելու հարկ չեղաւ։ Գալուստը նկատեց, որ եթէ սանդուխքներից իջնելիս մարդ յաջողացնի իր երկու ոտքերը միաժամանակ դնել երկու տարբեր քարերի վրայ, ապա նրանց ղեկերի ծայրերն աղբիւրագլխի տակ իրար կը սեղմուեն և նրանցից ոչ մէկը չի կարողանայ շարժուել վեր՝ ջրի անցքը փակելու համար։ Այնուհետև կարելի էր վստահ քայլերով առաջանալ դէպի աղբիւրի խողովակը և ջուր խմել։ Իսկ ջրի վերջնականօրէն ընդհատուելն առաջացել էր այն բանից, որ ուստան աննկատելի կերպով ոտքով պտըտացրել էր ջրի անկման տեղի ծակ քարը. այդ քարի տակ գտնուող երկաթաթերթը չուռ էլ եկել և ջրի անցքը կալնել։ Երբ Գալուստը քարը նորից պտըտացրեց, քանի տարուայ ցամաք աղբիւրից նորից վար թափուեց անապակ ջուրը։

Նոյն րոպէին աւազանի պռունգից լսուեց մի բարձր, խռպոտ ճիչ.

— Եա՛...

Գալուստի սիրտը կարծես կանգ առաւ։

Այնտեղ նորից կանգնած էր հաջին և անակնկալ տեսարանից չռուած աչքերով՝ անթարթ նայում էր մերթ ժանգոտած երկաթներին, մերթ վազող ջրին։

— Եա՛, — կրկնեց նա և ցատկեց աւազան։ — Ես ի՞նչ է։

Առանց պատասխանելու, Գալուստը ոտքը դրեց երկաթներից մէկի վրայ, յետոյ թողեց, միանգամից սեղմեց երկու երկաթներ, յետոյ այդ էլ թողեց և մօտեցաւ ջրին։

Բայց հաջին առանց այդ էլ արդէն ամէն ինչ հասկացել էր։

— Ըսել է է՞ս էր հրաշքը, — մրմնջաց նա՝ շարունակելով անթարթ նայել։ Ապա կարծես նոր միայն նկատելով ամէն ինչ՝ նորից բացագանչեց. — Եա՛...

Ջուրը շարունակում էր հոսել խաղաղ և անընդհատ։ Գալուստը, ջրի մօտ կանգնած, մտածում էր ուստա Մկրտչի այդ աղբիւրի մասին, որը չէր մտնում նրա քառասուն պայծառ աղբիւրների շարքը և չէր էլ կարող մտնել, որովհետև ա՜յնքան տարբեր, ա՜յնքան ուրիշ էր դա...

Հաջի Վարոսն օձիքը քանդեց։ Թւում էր, թէ նրա աչքերը ոչինչ չէին տեսնում։

— Սաղ քաղաքն աւատաց, — մրմնջաց նա։ — Սաղ քաղաքը մեղըդրեց ընձի ու Հեղնարին։ Սէրը պապանձուաւ... Ընտանիքի օրէնքը սուրբ դարձաւ... Գիւմրին...

Հաջու հետզհետէ մարուող ձայնն անլսելի դարձաւ և Գալուստը չկարողացաւ իմանալ նրա խօսքերի շարունակութիւնը։ Երբ նայեց նրան, նրա շրթունքները դեռ շարժւում էին անբարբառ։ Բայց յանկարծ նա դադարեց մրմնջալուց, արագ թեքուեց դէպի ջուրը, նայեց, կարծես մի նոր բան տեսնելով։ Յետոյ զոյգ ձեռքերով բռնեց գլուխը և բղաւեց.

— Եա՛... Ըպը կեանքս ընչի՞ անցաւ...

2

Անսովոր կերպով լամբրընթաց գնում էին երկու կառքերը դէպի Արփաչայ։ Կարծես լալիս էին դանդաղ անիւները, կարծես լալիս էին ձիերի քայլերը։ Մի նուագ, լացի պէս խորն ու մղկտացող, յորդում էր կառքից և գնում արձագանգելու հեռու-հեռուում։ Օրը վար էր եկել, արեւը հասել էր երկնքի բարձր կէտին, բայց կառքերը դեռ նոր էին իջնում դէպի նուիրական գետի հովիտը։ Ե՞րբ էին հասնելու ջրափ, ո՞վ գիտէր...

Կառքերից մէկում նստած էր ուստա Մկրտչի սիրելի դաւուլ-զուռնայի խումբը, նստած էր նաև Աւետիքը, որի կեանքն անցել էր կամուրջներ կառուցելով։ Նա դառը թախիծով դրել էր թեւը կառքի կողին, դրել էր երեսը թեւի վրայ և ունկնդրում էր։

Միւս կառքում ոչ ոք չկար։

*
* *

Կառքերը վերադարձան քաղաք, իսկ Աւետիքը սփռոց բաց արեց մի կով ուռենու ստուերում։ Ջուրը հոսում էր սփռոցի մօտով, թրջելով նրա արեւոտ ծայրը։

Դաւուլ-զուռնաջիների նստելու համար նա դասաւորեց երեք քար։ Նրանց առջեւ դրեց ուտելիք, օղի և բաժակներ։ Մի քիչ այն կողմ փռեց սփռոցը։ Ուստա Մկրտչին յատկացրեց ամենալաւ տեղը սփռոցի գլխին, ծառի բնի տակ։ Շարեց եօթ բաժակ, օղի լցրեց։ Ընկերների բաժակների մօտ դրեց խորովածի և այլ խորտիկների ամենալաւ պատառները։ Ինքը

նստեց սփռոցի մի կողմում՝ լուռ, գլխահակ։ Գըլխահակ լսեց դառուլ-զուռնայի լացող եղանակը, ապա երբ նուագի վերջին հնչյունները մարեցին ծառերի գով սաղարթներում, նա վերցրեց իր բաժակը, խփեց ուստայի բաժակին և ասաց.

— Էս վերջի անգամն էլ առաջի կենացը՝ կենացըդ եղնի, ադի՛զ... Կեանքդ էնքան երկան եղնի, ինչքան որ, ափսո՜ս, մահն է երկան...

Նորից բաժակը խփեց ուստայի բաժակին՝ խմեց. Յետոյ հերթով վերցրեց ուստայի օղին, Օնէսի օղին, Կարոյի օղին, Աղասու օղին, Բագրատի օղին, Սարգսի օղին և չըրտեց նուիրական գետը։ Ջուրն օղին տարաւ։

Յետոյ, երբ երկրորդ անգամ լցրեց բաժակները, նախատինքով դիմեց ընկերներին.

— Է՛, մենակ ես պիտի ծառայութիւն էնիմ։ Բախի լցէք։ Ձեռներդ խօ չէ՛ ջարդէ։ Ի՞նչ էզաձեզի...

* * *

Արեւն իջաւ։

Երբ Ալեարիքը նայեց վեր՝ դէպի աննկատելիօրէն բարձրացող գաչալը, նրա բարձրում ձգուած բլուրի կատարածքում երեւացին վերադարձող երկու կառքերը։

Ալեարիքը բաժակների մէջ լցրեց ամենավերջին օղին։

— Էս վերջի անգամն էլ վերջի կենացը՝ կենացդ եղնի, ադի՛զ...

Եւ խմելով իր օղին, բոլորի լիքը բաժակները հաւաքեց, նետեց Արփաչայ։

Կառքերը մօտեցան։ Դառուլ-զուռնաջիները վեր

կացան, նստեցին կառք։ Նրանք նուագում էին ամենատխուր եղանակը, այնպիսի տխուր եղանակ, որ թւում էր, թէ նուիրական գետով արցունք էր հոսում։

Աւետիքը բարձրացաւ միւս կառքը։ Կանգնեց կառքի մէջ, ձայն տուեց.

— Փչէք, երթամ անցնիմ Ջրանցքի կամուրջի վրայէն...

* * *

Արփաչայում լողանալուց վերադարձող երեխաները ցաւակցական դէմքերով լուռ հետեւում էին մի ոտաբոպիկ ու գլխաբաց մարդու, որ օրօրուելով գնում էր մի քանի քայլ, ապա չեշտակի կանգ առնում, զոյգ ձեռքերով բռնում գլուխը և բացագանչում.

— Եա՛... Ըպը կեանքս ընչի՞ անցաւ...

1933-1935
Երեւան

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220033506

[ru 504]

A II/33506

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ԱՆԻՆ ԾԱԽՈՒԵՑԱՒ	(Սպառած)
2. ԱՇՈՏ ԵՐԿԱԹ	»
3. ԽԱՉԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ	»
4. ՀՈՍՀՈՍԻ ՋԵՌԱՏԵՏՐԸ	20 Ե. Գ.

ԳԻՆ՝ 35 Ե. Գ.

ԱՄԵՐԻԿԱ՝ 1·50 ՏՈԼԱՐ

Դիմել՝

B. P. 620, Le Caire (Egypte)

Printed by NUBAR PRINTING OFFICE - Cairo, Egypt